ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԱՌ 1930 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

---

Կազմեց Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

368.4
Թ-94

Հրատարակություն ՀԽՍՀ Սոցապահովագրության Հանրապետական գանձարկղի

ՅԵՐԵՎԱՆ 1930

1 MAR 2010
368.4
P-94

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵ՛Ք

# ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԱՌ 1930 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ը ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

Կազմեց Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հրատարակություն ՀԽՍՀ Սոցապահովագրության
Հանրապետական գանձարկղի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

12 3 APR 2013

Հայպոլիգրաֆի տպ. պատ. № 806

Գրատեպ. № 2940 (բ) Տիրաժ 2000

12710-57

# ՆԱԽԱԲԱՆ

Բանվոր դասակարգն իր պայքարի ընթացքում, ի թիվս այլ պահանջների, միշտ էլ առաջադրել է բանվորական լրիվ սոցիալական ապահովգրության կիրառումը: Հոկտեմբերյան Հեղափոխությունն առաջին անգամ յերկրագնդի վրա իրականացրեց բանվոր դասակարգի տարիներ շարունակ առաջադրվող այդ պահանջը՝ բանվորական սոցիալական ապահովագրության մասին:

Սոցիալական ապահովագրությունը ԽՍՀՄ հանդիսանալով Հոկտեմբերյան Հեղափոխության գլխավոր նվաճումներից մեկը,— ժողովրդական տնտեսության ուժեղ զարգացման և յերկրի ինդուստրիալիզացիայի արագ տեմպի հետևանքով դարձել է բանվոր դասակարգի կենցաղի և տնտեսական ու կուլտուրական դրության բարելավման կարևորագույն փակտորը:

Սոցիալական ապահովագրությունն որեցոր ընդգրկում է ավելի և ավելի ապահովագրվածներ, վորի հետևանքով էլ նրա բյուջեն տարեց-տարի աճում է. 1924/25 թ. 6.700.000 ապահովագրվածի փոխարեն 1928/29 թ. 10.500.000 հոգի յեն ընդգրկված, իսկ բյուջեն 474.200.000 ռուբլուց հասել է 1.161.400.000 ռուբլու:

Նույն ժամանակամիջոցում, ապահովագրված գործազուրկների թիվը 300.000 հոգուց հասել է 853.700 հոգու, իսկ վճարած նպաստի գումարը 31.300.000 ռուբլուց— 142.300.000 ռուբլու, նպաստի միջին չափը 7 ռ. 57 կ. աճել է մինչև 14 ռ. 84 կ.:

Թոշակառուների թիվը 452.000-ից հասել է 1.000.000-ի, իսկ վճարած կենսաթոշակի գումարը՝ 63.900.000 ռուբլուց— 261.500.000 ռուբլու: Ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը 117.000.000 ռուբլուց աճել է մինչև 296.600.000 ռուբլու:

Բուժօգնության համար հատկացված գումարը նույնպես աճել է՝ 125.800.000 ռուբլուց—259.500.000 ռուբլու:

Սոցիալական ապահովագրության վերջին տարվա նվաճումը՝ դա ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի, այն է՝

մետաղի, լեռնային, մանվածքային և փոխադրության (երկաթուղային և ջրային) բանվորների ծերության հետևանքով թոշակավորումն է, որը սոցիալական ապահովագրության մարմիններից նույնպես խոշոր միջոցներ կպահանջի, նամանավանդ, այդ օրենքը 1929/30 թվին կ՚տարածվի նաև պոլիգրաֆի, ապակու, ֆարֆորի, ծխախոտի և քիմիական արդյունաբերության մեջ աշխատող բանվորների վրա ևս:

Սոցիալական ապահովագրության 1929/30 տ. բյուջեն հաստատված է 1.314.000.000 ռուբլի:

Խորհրդային Հայաստանում նույնպես, թե ապահովագրվածների թիվը և թե նրանց վճարած նպաստների ու կենսաթոշակի գումարը, ինչպես նաև բյուջեն, զգալիորեն աճել է, որը երևում է հետևյալից.

| | 1924/25 թ. | 1928/29 թ. |
|---|---|---|
| Բյուջեն | 771.874 ռ. | 3.223.500 ռ. |
| Ապահովագրվածների թիվը | 17.326 հոգի | 36.359 հ. |
| Ապահովագրված գործազուրկ. թ. | 532 հոգի | 2.637 հ. |
| Գործազուրկներին վճարած նպաստի գումարը | 34.855 ռ. | 473.257 ռ. |
| Թոշակառուների թիվը | 345 հոգի | 1.688 հ. |
| Թոշակառուներին վճարած կենսաթոշակի գումարը | 37.283 ռ. | 435.628 ռ. |
| Վճարված ժամանակավոր անաշխատունակության նպ. գում. | 174.472 ռ. | 661.107 ռ. |
| Բուժօգնության հատկաց. գում. | 228.129 ռ. | 703.300 ռ. |

Սոցիալական ապահովագրության 1929/30 թ. բյուջեն Խորհրդային Հայաստանի համար հաստատված է 4.257.577 ռուբլի:

Սոցապմարմինների աշխատանքների կարևորագույն թերություններից մեկը, որ բացասաբար է անդրադարձել նրա ֆինանսական դրության վրա, դա ապահովագրական միջոցների ռացիոնալ ծախսման հարցերին՝ անհրաժեշտ ուշադրության բացակայությունն է հանդիսացել:

Ապահովագրական օրենսդրության մի քանի կետերն այնքան էլ ճիշտ դասակարգային գիծ չեն ունեցել՝ պրոլետարական կադ—



րերի համար արտոնյալ ապահովություն սահմանելու գործում, այլ մի շարք նպաստների մեջ հավասարեցման գիծ է մտցրել, որի հետևանքով էլ ապահովագրվածների շարքերում մանր բուրժուական էլեմենտներն ու բուրժուական խավերից դուրս յեկածները բավականաչափ տեղ են բռնել, որոնց ապահովության վրա սոցապմարմինների միջոցներից զգալի գումարներ է ծախսվում:

Հիմնական պրոլետարական կադրերի լավագույն ապահովության և յերկրի ինդուստրիալիզացիայի ընդհանուր պլանից յելնելով՝ նրանց աշխատանքի արտադրողականության բարձրացման ու գյուղի սոցիալիստական վերակառուցման խնդիրները պահանջեցին Սոցիալական ապահովության Օրենսդրությունը վերանայել:

Ապահովագրական քաղաքականությունը՝ սոցիալիստական շինարարության ապահովության աշխատանքների մեջ դասակարգային հետևողականություն մտցնելու, ապահովագրական միջոցները ռացիոնալ կերպով օգտագործելու, ֆինանսական դժվարությունները կանխելու համար անհրաժեշտ պահեստի ֆոնդ ունենալու և հետագայում հիմնական պրոլետարական կադրերի ապահովությունը բարելավելու ընդհանուր խնդիրների հետ կապելու նպատակներով,—Սոցապահովագրության Միութենական Խորհուրդը, ՎՑՍՊՍ-ի համաձայնությամբ,— վերանայելով ապահովության հիմնական օրենսդրությունը,—մի շարք փոփոխություններ է մտցրել նրա մեջ, որը և սոցապմարմինների ֆինանսական դրության մեջ զգալի բարելավում է մտցնում և ապահովում է ապահովագրական միջոցների ռացիոնալ օգտագործումը:

Ապահովագրված լայն մասսաներին ապահովագրական օրենսդրության հետ ծանոթացնելու նպատակով, Սոցապահովության Հայաստանի Հանրապետական Գանձարկղը, գործող օրենսդրությունը վերջին փոփոխություններով, հրատարակում է հայերեն, որպեսզի մեր բանվորներն ու աշխատավորները ծանոթանալով սոցապահովագրության հիմնական օրենքների հետ, աջակցեն և հսկեն նրանց անշեղ իրագործմանը:

ՀԽՍՀ ՍՈՑԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ

# I ԿԱՆՈՆՆԵՐ № 122

*Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու և վճարելու մասին, հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. մայիսի 9-ին, նույն խորհրդի 1929 թ. հոկտեմբերի 19-ի № 349 վորոշմամբ և մինչև այդ մտցրված փոփոխություններով:*

## Ա. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է սոցիալական ապահովագրության մարմինների կողմից աշխատունակությունը ժամանակավոր կորցնելու դեպքում. ա) հիվանդության հետևանքով (ընդհանուր հիվանդության, պրոֆեսիոնալ հիվանդության, աշխատանքային խեղանդամության), բ) հղիության ու ծննդաբերության հետևանքով, գ) քարանտինի դեպքում և դ) ընտանիքի հիվանդ անդամին խնամելու դեպքում:

2. Բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստի (հոդ. 1) վճարումը կատարվում է այն դեպքում, յեթե անաշխատունակությունը տեղի յե ունեցել վարձու աշխատանքի ժամանակամիջոցում (ներառյալ նաև վարձվելու ժամանակ փորձառության շրջանը). ժամանակավոր անաշխատունակությունը աշխատանքից հեռացվելուց հետո, տեղի ունենալու դեպքում, նպաստը չի վճարվում, թեկուզ անաշխատունակությունը լուծարքային նպաստով բավարարված ժամանակամիջոցում եղ տեղի ունեցած լինի:

3. Ընդհանուր հիվանդության, հղիության ու ծննդաբերության հետևանքով և քարանտինի ու ընտանիքի հիվանդ անդամին խնամելու դեպքում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունքով օգտվում են բոլոր վարձու աշխատող անձինք, վորոնց վրա տարածվում է լրիվ ապահովագրումը կամ 1-ին խմբակի մասնակի ապահովագրումը:

4. Պրոֆեսիոնալ հիվանդության կամ աշխատանքային խեղանդամության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու իրավունքով օգտվում են բոլոր վարձու աշխատող անձինք, վորոնց վրա տարածվում է լրիվ կամ մասնակի ապահովագրումը:



5. ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցապմիութենական խորհրդի 30/11-27թ. №387 վորոշմամբ վերացված ե. Վ. Ս. 1927 թ. №52/:

6. Հիվանդության կամ խեղանդամության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է աշխատունակությունը կորցնելու առաջին օրից մինչև աշխատունակության վերականգնումը կամ աշխատունակության կայուն կորուստի սահմանումը (հաշմանդամությունը): Աշխատունակության կայուն կորուստի (հաշմանդամության) սահմանման օրը համարվում է բժշկական վերստուգիչ հանձնաժողովի կողմից այդ մասին նախնական վորոշում հանելու օրը: Այն դեպքում, յերբ բժշկական եքսպերտ բյուրոն փոխում է բժշկական վերստուգիչ հանձնաժողովի նախնական վորոշումը՝ անաշխատունակության ամբողջ ժամանակամիջոցի համար վճարվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստ:

7. Հղիության և ծննդաբերության հետևանքով ապահովագրված կանանց ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է.

ա) Ութ շաբաթ մինչև ծննդաբերությունը և ութ շաբաթ ծննդաբերությունից հետո, յեթե նրանք զբաղված են ֆիզիքական աշխատանքով կամ թե չե պատկանում են գրասենյակային աշխատավորների այն պրոֆեսիաներին, վորոնց նկատմամբ, Աշխժողկոմատի հատուկ վորոշումներով, մայրության արձակուրդի ժամկետները սահմանված են ութ շաբաթ մինչև ծննդաբերությունը և ութ շաբաթ ծննդաբերությունից հետո:

բ) Մնացած դեպքերում վեց շաբաթ մինչև ծննդաբերությունը և վեց շաբաթ ծննդաբերությունից հետո:

Այն դեպքում, յերբ, մինչծննդաբերության շրջանի արձակուրդի փաստացի տևողությունը, ապահովագրական գանձարկղի կողմից հղիության պատճառով աշխատանքից ազատվելու օրից հաշված մինչև ծննդաբերության օրը, վերոհիշյալ ժամկետներից ավելի կամ պակաս է տևում,— նպաստ տրվում է փաստորեն արձակուրդում յեղած օրերի համար:

8. Ապահովագրված կնոջ վիժման դեպքում, ժամանակավոր

անաշխատունակության նպաստի վճարումը կատարվում է միայն այն ժամանակամիջոցի համար, ըստ որի, ապահովագրվածը սահմանված կարգով ճանաչված է անաշխատունակ հիվանդության հետևանքով:

9. Ապահովագրվածը քարանտինի հետևանքով աշխատանքի չ՚ներկայանալու դեպքում, նպաստ տրվում է սանիտարական հսկողության մարմինների կարգադրությամբ ապահովագրվածին փաստորեն մեկուսացնելու դեպքում, յեթե այդպիսին բղխում է ապահովագրվածի շրջապատում տարափոխիկ հիվանդության լինելուց և այդ պատճառով ել նրա աշխատանքի գնալը չթույլատրելու անհրաժեշտությունից: Այդ դեպքում, նպաստ տրվում է մեկուսացման ամբողջ ժամանակամիջոցի համար:

10. Ապահովագրվածն ընտանիքի հիվանդ անդամին խնամելու հետևանքով աշխատանքի չ՚ներկայանալու դեպքում, նպաստ տրվում է միայն հիվանդության այն դեպքերի համար, յերբ խնամքի բացակայությունը վտանգ է սպառնում հիվանդի կյանքին կամ առողջությանը և այն ել միայն մի պայմանով՝ -յեթե հնարավոր չէ հիվանդին տեղավորել հիվանդանոցում և ընտանիքում ել ուրիշ անդամներ չ՚կան, վորոնք ի վիճակի լինեն խնամել հիվանդին: Այդ դեպքում, նպաստ տրվում է ապահովագրվածն աշխատանքի չ՚ներկայանալու ամբողջ ժամանակամիջոցի համար:

11. Ժամանակավոր անաշխատունակությունը, ձեռնարկության աշխատանքները ժամանակավորապես կանգ առնելու ժամանակամիջոցում տեղի ունենալու դեպքում, յերբ բանվորներն իրավունք են վերապահում Աշխատանքի Որենսգրքով սահմանված չափով աշխատավարձ ստանալու,— նպաստ չի տրվում:

Ձեռնարկությունն աշխատանքը վերսկսելու կամ նրա լուծարքի յենթարկվելու դեպքում, յեթե ժամանակավոր անաշխատունակությունն ելի շարունակվում է,– նպաստի վճարումը կատարվում է ձեռնարկության աշխատանքը վերսկսելու կամ նրա լուծարքի յենթարկվելու որից:

12. Ապահովագրվածի կողմից հերթական (հիմնական կամ լրացուցիչ) արձակուրդն օգտագործելու ընթացքում, հիվանդության հետևանքով տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության դեպքում, նպաստն արձակուրդի ընթացքում հիվանդության օրերի համար տրվում է մի պայմանով միայն, յեթե հիվանդությունը կապված է յեղել հիվանդին անկողնում պահելու անհրաժեշտության հետ և արձակուրդը յենթակա չէ յեղել յերկարացնելու, համաձայն ԽՍՀՄ Աշխժողկոմատի վորոշման:



Ապահովագրվածի կողմից հերթական արձակուրդն օգտագործելու ընթացքում, ժամանակավոր անաշխատունակության այլ տեսակները (հոդ. 1) տեղի ունենալու դեպքում,—նպաստն արձակուրդի ընթացքում աշխատունակության կորուստի ժամանակամիջոցի համար չի տրվում:

13. Լուսավորության աշխատավորներին ամառային արձակուրդների ընթացքում ապահովագրական գանձարկղների կողմից տրվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստն անկախ այն հանգամանքից թե անաշխատունակությունը տեղի յե ունեցել մինչև արձակուրդները թե արձակուրդների ընթացքում:

12-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները լուսավորության աշխատավորների նկատմամբ չի կիրառվում,—յեթե հերթական արձակուրդն աշխատավորին տրված է ամառային արձակուրդների շրջանում:

14. Սեզոնային բնույթ կրող աշխատանքներում վարձով զբաղված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրըվում է սեզոնի վերջանալուց վոչ ավելի,—բացառությամբ 15 ա. հոդվածում նշված դեպքերից: Յեթե ժամանակավոր անաշխատունակությունը սեզոնի վերջանալուց հետո յել շարունակվում է,— ապահովագրվածն ստանում է գործազրկության նպաստ, յեթե այդպիսին ստանալու իրավունք ունի նա, ըստ վորի, առանձին դեպքերում, ծանր հիվանդության ժամանակ,—ապահովագրական գանձարկղները կարող են գործազրկության նպաստ տալ նաև այդ նպաստն ստանալու իրավունքի բացակայության դեպքում:

Վորպես ընդհանուր կանոն, սեզոնային բնույթ կրող աշխատանքների ցուցակը կազմում է ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհուրդը:

Մինչև Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից նշված ցուցակների հրատարակումը, տեղերում պիտի կիրառվեն.

ա) Համաձայն աշխատանքի և պաշտպանության Խորհրդի 1927 թ. փետրվարի 9-ի «Սեզոնային և ժամանակավոր աշխատանքներում զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» վորոշման 4-րդ հոդվածի, Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից հրատարակված ցանկը, բ) նահանգական (և նրանց համապատասխան). ապահովագրական գանձարկղների կողմից կազմված և միջմիութենական կազմակեր-

պության հետ համաձայնեցրած լրացուցիչ ցուցակները, իսկ փոխադրական գանձարկղների կողմից կազմածը՝—համաձայնեցրած համապատասխան պրոֆմիության հետ, ըստ որի, լրացուցիչ ցուցակների մեջ մտցրված աշխատանքների սկիզբն ու վերջը սահմանվում են նույն մարմինների կողմից: «Բ» կետում նշված լրացուցիչ ցուցակների մեջ մտցվում են այն աշխատանքները, վորոնք բնական կամ արտադրական պայմանների շնորհիվ չեն կարող ամբողջ տարին շարունակվել և «ա» կետում նշված ցանկի մեջն ել մտցված չեն: Լրացուցիչ ցուցակներն ուղարկվում են Սոցապկենտվարչությանն ի գիտություն. յերկրային ապահովագրական գանձարկղները համապատասխան Գլխոցապվարչությունների միջոցով, իսկ փոխադրական ապահովագրական գանձարկղներն անմիջականորեն:

15. Վորպես ժամանակավոր բանվոր ու ծառայող գրավված անձանց (ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. հունվարի 14-ի «ժամանակավոր բանվորների և ծառայողների աշխատանքի պայմանների մասին» վորոշման 1 հոդ.) ժամանակավոր աշխատունակության նպաստ, բացառությամբ 15 ա հոդվածում նշված դեպքերի,—տրվում է՝ ա) վորոշ ժամկետով վարձվելու դեպքում—վարձման ժամկետի վերջանալուց վոչ ավելի, բ) անվորոշ ժամանակով վարձվելու դեպքում, աշխատանքի անցնելու որվանից հաշված վոչ ավելի քան յերկու ամիս լրանալը, իսկ այն դեպքում, յերբ աշխատավորը վարձվել է ժամանակավորապես բացակայող բանվորին կամ ծառայողին փոխարինելու համար,—վոչ ավելի, քան աշխատանքի անցնելու որվանից հաշված, չորս ամիս լրանալը:

Յեթե վերոհիշյալ ժամկետներն անցնելուց հետո յել, ժամանակավոր անաշխատունակությունը շարունակվում է,—ապահովագրվածն ստանում է գործազրկության նպաստ, յեթե նա այդպիսին ստանալու իրավունք ունի:

15. ա Աշխատանքային խեղանդամության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետեվանքով առաջացած ժամանակավոր անաշխատունակության նպաստը, սեզոնային բնույթ կրող աշխատանքներում գրավված անձանց և վորպես ժամանակավոր բանվոր ու ծառայող գրավված անձանց (հոդ. հոդ. 14 և 15) տրվում է մինչև աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության սահմանելը:



Ծանոթություն.—Սույն հոդվածը տարածվում է այն բանվորների վրա, վորոնք ըստ իրենց պրոֆեսիայի բնույթի սիստեմատիկաբար մի աշխատանքից անցնում են մի ուրիշ աշխատանքի:

16. Սղագիրների կոմիտեների և բյուրոների կողմից ժամանակավոր աշխատանքի ուղարկված սղագիրների և տնային-տնտեսությունում վարձով գրավված անձանց ժամանակավոր անաշխատունակության ապահովման կարգը կարգավորվում են հատուկ վորոշումներով:

## Բ. ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

17. Բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստը (հոդ. 1), ի բացառյալ 17 ա և 29 ա հոդվածներում նշված դեպքերից, տրվում է ապահովագրվածների կողմից վարձու աշխատանքից ստացած լրիվ աշխատավարձի չափով, բայց վոչ ավելի ամսական 180 ռուբլուց 1-ին, 2-րդ և 3-րդ գոտիներում և 150 ռուբլուց, 4-րդ, 5-րդ և 6-րդ գոտիներում:

Ապահովագրական գանձարկղներն ըստ գոտիների բաժանումը սահմանվում է հատուկ վորոշումներով:

17 ա. Ժամանակավոր անաշխատունակության նպաստը, 17-րդ հոդվածում նշված չափերով, տրվում է անաշխատունակության առաջին որվանից սկսած, հետևյալ դեպքերում.

ա) Ընդհանուր առմամբ յերեք տարվա արտադրական ստաժ ունեցող արտադրական բանվորներին և յերկաթուղային ու ջրային փոխադրության բանվորներին— ժամանակավոր անաշխատունակության բոլոր դեպքերում:

բ) Բոլոր բանվորներին ու ծառայողներին, վորոնց ժամանակավոր անաշխատունակությունը 15 որից ավելի յե տևում:

գ) Բոլոր բանվորուհիներին և ծառայող կանանց, վորոնց ժամանակավոր անաշխատունակությունը տեղի յե ունեցել հղիության ու ծննդաբերության հետևանքով:

դ) Այն անձանց, վորոնց աշխատավարձի յերեք քառորդը հավասար է 17-րդ հոդվածում նշված առավելագույն չափին կամ ավելի յե նրանից,—ժամանակավոր անաշխատունակության բոլոր դեպքերում:

ե) Այն անձանց, վորոնց ժամանակավոր անաշխատունակությունն առաջացել է աշխատանքային խեղանդամությունից:

Մնացած դեպքերում ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է առաջին հինգ օրվա համար աշխատավարձի յերեք քառորդի չափով, պահպանելով 17-րդ հոդվածով սահմանված առավելագույն չափը:

Վորպես ապացույց յերեք տարվա արտադրական ստաժի, կարող են ծառայել՝ ինչպես ձեռնարկության կողմից տրված տեղեկանքները—հաշվեգրքույկները և այլն, նույնպես նաև պրոֆմիության անդամատոմսերը:

18. Անաշխատունակն իր աշխատանքի վայրից մեկնելու դեպքում, (հոդ. 30) նպաստն ըստ նոր բնակավայրի կամ անաշխատունակի ժամանակավոր ապրելու վայրի, նշանակվում և վճարվում է այն առավելագույն չափով, վորը սահմանված է այն գոտու համար, վորին դասված է տվյալ անձի աշխատանքի վայրը՝ ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենալու օրը:

19. Աշխատավարձի գումարի մեջ, վորից հաշվվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստը, մտնում են աշխատավարձի բոլոր տեսակները, վորոնցից համաձայն գործող օրենքների, հաշվվում են ապահովագրական մուծանքները, նույնպես նաև ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը:

20. Բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստի (հոդ. 1) չափի հաշվելը կատարվում է.

ա) Այն անձանց նկատմամբ, վորոնք մինչև ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենալու ամսվա առաջին օրը, վերջին աշխատատեղում աշխատել են վոչ պակաս յերեք ամսից,— յելնելով ժամանակավոր անաշխատունակության ամսվա առաջին օրվան անմիջապես հաջորդող յերեք ամսվա համար, նրանց վերջին աշխատատեղից, ստացած աշխատավարձից և ժամանակավոր անաշխատունակության նպաստից, ըստ վորի՝ հաշվի յեն առնըվում միայն այն ամիսները, վորոնց համար բոլոր տեսակի աշխատավարձի գումարը հայտնաբերված է լրիվ (անկախ փաստորեն հաշիվ տեսնելու ժամանակից):

բ) Այն անձանց նկատմամբ, վորոնք մինչև ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենալու ամսվա առաջին օրը, վերջին աշխատատեղում աշխատել են յերեք ամսից պակաս, բայց վոչ պակաս մեկ ամսից, յելնելով ժամանակավոր անաշխատունակության ամսվա առաջին օրվան հաջորդող ամբողջ ժամանակամիջոցի համար, նրանց վերջին աշխատատեղից ստացած աշխատավարձից և ժամանակավոր անաշխատունակության նպաստից,



վորի համար բոլոր տեսակի աշխատավարձի գումարը հայտնաբերված է լրիվ (անկախ փաստորեն հաշիվ տեսնելու օրից):

գ) Այն անձանց նկատմամբ, վորոնք մինչև ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենալու ամսվա առաջին օրը, վերջին աշխատատեղում աշխատել են մեկ ամսից պակաս,— յելնելով՝ կայուն վարձատրման դեպքում— վերջին աշխատատեղում հայտնաբերված աշխատավարձից և վերջին աշխատանքի մեջ գտնվելու ժամանակամիջոցում ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստից, բայց վոչ ավելի տարիֆային դրույքի մեկ ու կես չափից:

21. Վորպես ընդհանուր կանոն նպաստի օրվա չափը վորոշվում է 20-րդ հոդվածում նշված ժամկետների համար աշխատավարձի և ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարն այդ նույն ժամանակամիջոցի տոմարային բանվորական օրերի վրա բաժանելու միջոցով: Նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած տոմարային բանվորական օրերի համար: Այն անձանց, վորոնք ընդհանուր սահմանված հանգստի օրերի փոխարեն այլ օրերով են օգտվում (դեղարվեստի աշխատավորները և այլն)— նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած բանվորական օրերի համար՝ սահմանված համապատասխան կարգի աշխատավորների համար:

Այն անձանց, վորոնց համար աշխատանքի դուրս գալու օրերը սահմանված է ամսվա տոմարային բանվորական օրերից պակաս քանակով, ըստ վորի աշխատանքի դուրս գալու օրերը նախօրոք վորոշված չեն— նպաստը հաշվվում ու տրվում է սույն հոդվածի առաջին մասով սահմանված կարգով: Անաշխատունակության վոչ լրիվ ամիսների համար, նշված անձանց, նպաստ տրվում է այն չափով, վոր չ՚գերազանցի ապահովագրվածի միջին ամսական աշխատավարձի (հոդ. 20) և ժամանակավոր աշխատունակության ամսվա համար հասանելիք աշխատավարձի գումարի միջև յեղած տարբերությունը:

22. Ամսվա բոլոր տոմարային օրերն աշխատող և հանգստի օրերով չ՚օգտվող անձանց համար (ջրային փոխադրության և այլ համապատասխան կարգի աշխատավորները) օրական նպաստի չափը վորոշվում է 20-րդ հոդվածում նշված ժամկետների համար տրված աշխատավարձի և ժամանակավոր աշխատունակության նպաստի գումարը տվյալ ժամանակամիջոցի բոլոր տոմարային օրերի վրա բաժանելու միջոցով:

Այդ դեպքերում, նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած բոլոր տոմարային օրերի համար:

23. Այն անձանց նկատմամբ, վորոնց համար աշխատանքի դուրս գալու օրերի թիվը սահմանված է ամսվա տոմարային բանվորական օրերի թվից պակաս քանակով, ըստ վորի, աշխատանքի դուրս գալու օրերը նախորոք վորոշված են, օրական նպաստի չափը վորոշվում է՝ 20–րդ հոդվածում նշված ժամկետների համար տրված աշխատավարձի և ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը, տվյալ ժամանակամիջոցի ընթացքում աշխատաքի դուրս գալու համար սահմանված օրերի թվի վրա բաժանելու միջոցով:

Նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած աշխատանքի դուրս գալու սահմանված օրերի համար:

24. Ի բաց առյալ 20–23 հոդվածներով սահմանված նպաստի հաշվելու կարգը,– ըստ իրենց պրոֆեսիայի բնույթի սիստեմատիկաբար մի աշխատանքից մի ուրիշ աշխատանքի անցնող անձանց (կառուցողներ, բեռնակիրներ, և այլն) համար, բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափերը հաշվում են՝ ելնելով ժամանակավոր անաշխատունակության օրվան հաջորդող 2 ամսվա ընթացքում բոլոր աշխատանքների համար ստացած աշխատավարձի, ժամանակավոր անաշխատունակության նպաստի և գործդրկության նպաստի գումարից:

Այդ անձանց օրվա նպաստը վորոշվում է տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության առաջի օրվա նախորդ յերկու ամսում ստացած աշխատավարձի, ժամանակավոր անաշխատունակության նպաստի և գործազրկության նպաստի գումարը՝ այդ նույն ժամանակամիջոցի տոմարային բանվորական օրերի վրա բաժանելու միջոցով:

Օրական նպաստի չափն այն անձանց համար, վորոնց նկատմամբ կիրառվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը՝ սույն հոդվածով նախատեսված ձևով հաշվելու կարգը,– չի կարող նրանց վերջին աշխատատեղի օրական տարիֆային դրույքից պակաս լինել:

Նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած տոմարային բանվորական օրերի համար:



25. Նահանգական (և նրանց համապատասխան) ապահովա-
գրական գանձարկղներին իրավունք է տրվում տարբեր կարգերի
վարձու աշխատավորների նկատմամբ սահմանել, սույն կանոնն-
րի 20–23 հոդվածներով առանձնապես չնախատեսված,– ժամանա-
կավոր անաշխատունակության նպաստները հաշվելու հատուկ
ձևեր՝ ելնելով ապահովագրվածի աշխատունակության կորուս-
տին նախորդող ժամանակի միջին ամսական աշխատավարձը պահ-
պանելու սկզբունքից (հոդ. 20 և 24):

Յերկրային գանձարկղները համապատասխան Գլխավորյա-
վարչությունների և Միութենական Աշխժողկոմատներին առընթեր
Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների միջոցով, իսկ
փոխադրական գանձարկղները՝ Կենտրոնապվարչության միջոցով,
ներկայացնում են, սույն հոդվածի առաջին մասով նախատեսված,
նպաստները հաշվելու հատուկ կարգ սահմանելու մասին իրենց
վորոշումները ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական
Ապահովագրության Միութենական Խորհրդին հետագա հաստատ-
ման համար: Վորոշումն ի հաստատություն ներկայացնելու համար
սահմանվում է մի շաբթվա ժամկետ, իսկ դաշնակից հանրապե-
տության Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովա-
գրության Խորհրդի կամ Կենտրոնապվարչության կողմից
վորոշումը վերանայելու և յեզրակացություն տալու համար,–տըր-
վում է մեկ ամսվա ժամկետ՝ վորոշումը Գլխավորյաչության
կամ Կենտրոնապվարչությանը ներկայացնելու օրից:

26. Յեթե մինչև ձեռնարկության ժամանակավորապես կանգ-
նեցնելը, տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակությունը
շարունակվում է կանգնեցման ընթացքում,— նպաստ տրվում է
այդ ժամանակամիջոցում նույն պրոֆեսիայի և վորակի աշխատա-
վորներին վերապահված աշխատավարձի չափով: Ժամանակավոր
անաշխատունակությունը, գործի դցելուց կամ նրա լուծարքի յեն-
թարկվելուց հետո շարունակվելու դեպքում, նպաստը հաշվում է
մինչև ձեռնարկության կանգնեցնելը տվյալ աշխատավորի աշխա-
վարձի և ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումա-
րի հաշվով (հոդ. 20), անկախ այն հանգամանքից՝ ժամանակավոր
անաշխատունակությունը տեղի յե ունեցել մինչև ձեռնարկության
կանգնեցնելը թե նրա կանգնեցման ժամանակամիջոցում::

27. Փորձառության շրջանում աշխատունակությունը կորցը-
րած անձանց նպաստը պիտի հաշվել ընդհանուր հիմունքներով այն
տարիֆային դրույքի կամ վարձատրության հաշվով, վորը նա-
խատեսված է յեղել փորձելու համար ընդունելու ժամանակ:

28. Ժամանակավոր անաշխատունակության ժամանակաշրջանում ապահովագրվածի աշխատավարձի մեջ տեղի ունեցած փոփոխությունները հաշվառման յենթակա չեն, բացառությամբ 26-րդ հոդվածով նախատեսնված դեպքի:

29. Ժամանակավոր աշխատունակության որական նպաստի առավելագույն չափը վորոշվում ե տվյալ գոտու ամսական առավելագույն նպաստը բաժանելով (հոդ. 17):

ա) 21 և 24 հոդվածներով նախատեսված դեպքերում, աշխատունակության ժամանակավոր կորուստի ամսվա տոմարային օրերի թվի վրա:

բ) 22-րդ հոդվածով նախատեսնված դեպքերում, աշխատունակության ժամանակավոր կորուստի ամսվա բոլոր տոմարային բանվորական օրերի վրա.

գ) 23-րդ հոդվածով նախատեսնված դեպքերում, աշխատունակության ժամանակավոր կորուստի ամսվա ընթացքում ապահովագրվածի համար սահմանված աշխատանքի դուրս գալու օրերի թվի վրա.

29. ա. Ի բաց առյալ ընդհանուր կարգից, թե լրիվ և թե մասնակի ապահովագրմամբ անցնող սեզոնային բնույթ կրող աշխատանքներում վարձով գրաված անձանց (հոդ. 14) բոլոր տեսակի ժամանակավոր անաշխատունակության նպաստը, տրվում ե հետևյալ կայուն որական չափերով.

(Տես աղյուսակ 17-րդ յերեսը)



| Յերբ ամսական աշխատավարձն ե | Որական նպաստի չափը | |
|---|---|---|
| | Անաշխատունակության առաջին 5 օրվա համար | Անաշխատունակության 6-րդ օրվանից սկսած |
| Մինչև 15 ռուբլին | — 40 կոպ. | — 55 կոպ. |
| 15 ռ. բարձր մինչև 17 ռուբլի | — 50 » | — 65 » |
| 17 » » 19 » | — 55 » | — 70 » |
| 19 » » 21 » | — 60 » | — 80 » |
| 21 » » 23 » | — 65 » | — 85 » |
| 23 » » 25 » | — 70 » | — 95 » |
| 25 » » 27 » | — 75 » | 1 ռ. — |
| 27 » » 29 » | — 80 » | 1 » 10 » |
| 29 » » 32 » | — 85 » | 1 » 20 » |
| 32 » » 35 » | — 90 » | 1 » 30 » |
| 35 » » 38 » | — 95 » | 1 » 40 » |
| 38 » » 41 » | 1 ռ. 15 » | 1 » 55 » |
| 41 » » 45 » | 1 » 25 » | 1 » 65 » |
| 45 » » 49 » | 1 » 35 » | 1 » 75 » |
| 49 » » 53 » | 1 » 50 » | 2 » — |
| 53 » » 58 » | 1 » 65 » | 2 » 20 » |
| 58 » » 63 » | 1 » 80 » | 2 » 40 » |
| 63 » » 69 » | 1 » 90 » | 2 » 55 » |
| 69 » » 75 » | 2 » 10 » | 2 » 80 » |
| 75 » » 81 » | 2 » 30 » | 3 » 05 » |
| 81 » » 90 » | 2 » 45 » | 3 » 25 » |
| 90 » » 100 » | 2 » 70 » | 3 » 60 » |
| 100 » » 110 » | 3 » — | 4 » — |
| 110 » » 120 » | 3 » 30 » | 4 » 40 » |
| 120 » » 130 » | 3 » 60 » | 4 » 80 » |
| 130 » » 140 » | 3 » 90 » | 5 » 20 » |
| 140 » » 150 » | 4 » 20 » | 5 » 60 » |
| 150 » » 160 » | 4 » 50 » | 6 » — |
| 160 » » 170 » | 4 » 80 » | 6 » 40 » |
| 170 » » | 5 » 10 » | 6 » 80 » |

750
12710-57
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆվան ...ная Библиотека

Սույն հոդվածում նշված անձանց, նպաստ տրվում է սույն հոդվածով սահմանված չափերով, ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բոլոր բաց թողած բանվորական որերի համար, 14-րդ հոդվածում նշված ժամկետների սահմաններում:

Սույն հոդվածը չի տարածվում լրիվ տարին քաղաքներում աշխատող բանվորների և կառուցողների վրա:

## Գ. ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

30. Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակվում և տրվում է այն ապահովագրական գանձարկղի կողմից, վորի շրջանում գտնվում է ապահովագրվածի աշխատանքի վայրը:

Ապահովագրվածի ժամանակավոր ապրելու վայրի կամ նրա նոր աշխատանքի վայրի ապահովագրական գանձարկղի կողմից նպաստ նշանակվում է հետևյալ դեպքերում.

ա) Յերբ ժամանակավոր անաշխատունակությունը տեղի յե ունենում ապահովագրվածն իր մշտական աշխատանքի վայրից դուրս արձակուրդի մեջ յեղած կամ գործուղման ժամանակ.

բ) Ապահովագրվածին իր մշտական բնակավայրում տրված հիվանդության արձակուրդը յերկարացնելու անհրաժեշտության դեպքում, յեթե նա արձակուրդի ժամանակ այդ վայրից դուրս է գնացել.

գ) Յերբ ապահովագրվածը, մինչև ժամանակավոր անաշխատունակության նպաստն ստանալու համար դիմելը,—այլ աշխատանքի փոխադրվելու հետևանքով, մի այլ վայր է փոխադրվել:

31. Ապահովագրվածը կարող է նպաստի համար դիմել ապահովագրական գանձարկղին վոչ ուշ անաշխատունակության յերկու շաբաթը լրանալուց կամ վոչ ուշ աշխատունակության վերականգնման որվանից, յեթե անաշխատունակությունը յերկու շաբթից պակաս է տևել, և վեց ամսից վոչ ուշ, նպաստը վճարման յենթակա վերջին որից հաշված:

Ապահովագրական գանձարկղի կողմից նպաստը տրվում է անցած ժամանակի համար, դիմելու որից հաշված, վոչ ուշ քան մինչև յերեք որը:

ԾԱՆՈԹՈՒԹ.— Միջմիութենական կազմակերպության համաձայնությամբ, սույն հոդվածով սահմանված յերեք որվա ժամկետը ապահովագրական գանձարկղը կարող է յերկարացնել:



32. Այն դեպքերում, յերբ վճարվելիք նպաստի չափը չպետք է գերազանցի մինչև ժամանակավոր անաշխատունակության տեղի ունենալը միջին ամսական աշխատավարձի և ժամանակավոր անաշխատունակության ամսի միջև յեղած տարբերությունը (հոդ. 21, 23) նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության ամսվա համար աշխատատեղում հասնելիք աշխատավարձի գումարը պարզելուց և ձեռնարկությունից ժամանակավոր անաշխատունակության ամսվա աշխատավարձի գումարի մասին տեղեկանք ներկայացնելուց հետո:

33. Այն դեպքում, յերբ ապահովագրվածին հիվանդության պատճառով արձակուրդ է տրվում և բուժումը նշանակվում է մշտական բնակավայրից դուրս (նույն թվում և սանատորա-կուրորտային բուժում) նպաստ տրվում է արձակուրդի կամ սանատորա-կուրորտային բուժման ամբողջ ժամանակամիջոցի համար առաջուց: 32-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, այն ապահովագրվածին, վորը հիվանդության պատճառով արձակուրդ է ստացել և բուժումն էլ նշանակվել է մշտական բնակավայրից դուրս, նպաստ տրվում է ամբողջ ժամանակամիջոցի համար առաջուց վոչ լրիվ չափով, այլ տրվում է ապահովագրական գանձարկղի կողմից սահմանված վորոշ մասը:

34. Նշանակված, բայց ժամանակին չպահանջված ժամանակավոր անաշխատունակության նպաստն անցյալ ժամանակի համար տրվում է միայն ժամանակավոր անաշխատունակության այն շրջանի համար, վորն ընդգրկում է, նպաստը հասուցանելու մասին ապահովագրական գանձարկղին պահանջ ներկայացնելու որվան նախորդող վերջին տարին (1926 թ. մայիսի 14-ին ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի կողմից հաստատված ժամանակավոր կանոնների 1 հոդվածի 2-րդ մասը. ԽՍՀՄ որենք. ժողով. 1926 թ. № 36, հոդ. 264):

35. Սույն կանոնների 31-րդ և 34-րդ հոդվածներով նախատեսված ժամկետները բաց թողնելու դեպքում,—նրա վերականգնումը կատարվում է ըստ ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1926 թ. հուլիսի 10-ի № 145-625 հրահանգի սահմանված կարգով (ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկատու 1926 թ. № 27-28):

36. Աշխատունակության ժամանակավոր կորուստը հաստատվում է բացառապես հիվանդանոցային թերթիկով: Հիվանդանոցային թերթիկների փոխարեն ապահովագրական գանձարկղների կողմից ուրիշ վոչ մի փաստաթուղթ չի ընդունվում:

37. Ժամանակավոր անաշխատունակության սահմանելու կարգը վորոշվում է հատուկ վորոշմամբ։

## Դ. ՆՊԱՍՏԻ ՄԵՐԺՈՒՄԸ

38. Ապահովագրվածին նպաստ չի տրվում հետեվյալ դեպքերում.

ա) Յեթե անաշխատունակությունը տեղի յե ունեցել ապահովագրվածի սուր հարբեցողության հետեվանքով կամ անաշխատունակությունը հետեվանք է այնպիսի գործողությունների, վորը նույնպես բխում է սուր հարբեցողությունից (կռիվ, վերք հասցնել և այլն)։ Յերկու դեպքումն էլ, նպաստ չի տրվում, յեթե անաշխատունակությունը տեվում է հինգ որից վոչ ավելի։

բ) Յերբ նպաստ ստանալու նպատակով իրենց առողջությանը դիտավորյալ կերպով վնաս են հասցնում.

գ) Յերբ բժշկվելու համար տրված արձակուրդն իր նպատակի համար չի ոգտագործվում.

դ) Յերբ անաշխատունակը արհեստականորեն վատթարացնում է իր հիվանդության դրությունը.

յե) Յերբ բժշկական հսկիչ մարմինների պահանջմամբ, առանց հարգելի պատճառների, չեն ներկայանում վերաքննության։

Սույն հոդվածի «բ» կետում նշված դեպքերում, նպաստը յենթակա չէ վճարման անաշխատունակությունը տեղի ունենալու առաջին որվանից, ըստ վորում, առաջուց տրված նպաստը կարող է հետ պահանջվել ապահովագրական գանձարկղի կողմից։

Սույն հոդվածի «գ», «դ» և «յե» կետերում նշված դեպքերում, նպաստի վճարումը դադարեցվում է այդ կետերում նշված հանգամանքները յերևան հանելու որվանից, բայց անցյալ ժամանակի համար վճարած նպաստն ապահովագրական գանձարկղի կողմից գանձման յենթակա չէ։

39. Նպաստ ստանալու նպատակով հանցագործական գործողություններ կատարելու դեպքում (կեղծում, քերել և այլն) նպաստի վճարումը կանգնեցվում է մինչև դատական վորոշում հանելը։

1929թ. հոկտեմբերի 19-ի №349 վորոշմամբ մտցրված փոփոխությունները տարածվում են 1929թ. նոյեմբերի 15-ից սկսած տեղի ունեցած ապահովագրական բոլոր նոր դեպքերի վրա։



# II ԿԱՆՈՆՆԵՐ № 406

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. դեկտեմբերի 14-ին, –նույն խորհրդի 1929 թ. հոկտեմբերի 19-ի №350 վորոշմամբ և մինչև այդ մտցրված փոփոխություններով։

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործազրկության նպաստի իրավունքով ոգտվում են այն գործազուրկները, վորոնք առաջ վարձու աշխատել են լրիվ ապահովագրմամբ անցնող աշխատանքներում և ցուցակագրվել են աշխատանքի բորսաներում, իսկ այն վայրերում, ուր աշխատանքի բորսաներ չկան, —համապատասխան արհեստակցական միություններում։

ԾԱՆՈԹ. — ԲԳԿ Բանակի հրամանատարական կազմից՝ զորացրված, յերկարատև արձակուրդ կամ ծառայությունից ընդմիշտ արձակված անձինք՝ գործազրկության նպաստի իրավունքով ոգտվում են անկախ վարձու աշխատանքի ստաժ ունենալուց. (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1926 թ. սեպտեմբերի 14-ի վորոշման 6-րդ հոդ. ԽՍՀՄ Որենք. Ժողովածու 1926 թ. №63, հոդ. 475)։

2. Գործազրկության նպաստի իրավունքով ոգտվում են.

ա. Այն գործազուրկ բանվորներն ու ծառայողները, վորոնք պրոֆմիության անդամ են՝ պայմանով, վոր անմիջապես մինչև գործազրկության տեղի ունենալը, յերկու տարուց վոչ պակաս վարձու աշխատանք կատարած լինեն.

բ. Այն գործազուրկ բանվորներն ու ծառայողները, վորոնք պրոֆմիության անդամ չեն՝ —պայմանով, վոր անմիջապես մինչև գործազրկության տեղի ունենալը, յերեք տարուց վոչ պակաս վարձու աշխատանք կատարած լինեն։

գ. Մինչև 18 տարեկան անչափահաս գործազուրկները՝ —բան-

վորների և ծառայողների յերեխաները, ինչպես պրոֆմիության անդամները, նույնպես և վոչ անդամները՝—պայմանով, վոր անմիջապես մինչև գործազրկության տեղի ունենալը, յերեք ամսից վոչ պակաս վարձու աշխատանք կատարած լինեն:

դ. 18 տարեկանից բարձր մինչև 20 տարեկան պատանի գործազուրկները՝—բանվորների ու ծառայողների յերեխաները, ինչպես պրոֆմիության անդամները, նույնպես և վոչ անդամները՝—պայմանով, վոր անմիջապես մինչև գործազրկության տեղի ունենալը, վեց ամսից վոչ պակաս վարձու աշխատանք կատարած լինեն: Բարձրագույն դպրոցներն ու տեխնիկումներն ավարտած պրոֆմիության անդամները, վորոնք ըստ իրենց կվալիֆիկացիայի յենթակա յեն գործազրկության 1-ին կարգին դասվելուն,—գործազրկության նպաստի իրավունքով օգտվում են.

ա. Մինչև բարձրագույն դպրոցը կամ տեխնիկումն ավարտելը, ովքեր մեկ տարուց վոչ պակաս վարձով աշխատել են՝—պայմանով, վոր բարձրագույն դպրոցը կամ տեխնիկումն ավարտելուց հետո յել, անմիջապես, մինչև գործազրկության տեղի ունենալը, վեց ամսից վոչ պակաս վարձու աշխատած լինեն.

բ. Մինչև բարձրագույն դպրոցը կամ տեխնիկումը ավարտելը, ովքեր վարձով չեն աշխատել՝—պայմանով, վոր բարձրագույն դպրոցը կամ տեխնիկումն ավարտելուց հետո, անմիջապես մինչև գործազրկության տեղի ունենալը, մեկ տարուց վոչ պակաս վարձու աշխատած լինեն:

Ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու ժամանակամիջոցը վարձու աշխատանքի ստաժի մեջ է մտնում:

ԾԱՆՈԹ.— ԲԳԿ Բանակից յերկարատև արձակուրդ, զորապահեստ կամ ծառայությունից ընդմիշտ արձակված անձինք, մինչև հատուկ վորոշումը գործազրկության նպաստով ապահովվում են նախկին հիմունքներով, այն է՝ ա) հրամանատարական կազմին պատկանող անձինք անկախ մի վորևիցե վարձու աշխատանքի ստաժ ունենալուց, բ) շարքային կազմին պատկանող անձինք—անկախ վարձու աշխատանքի տևողությունից:

3. Վարձու աշխատանքի ստաժի (հոդ. 2) տևողությունը չի ընդհատվում, բայց չի յել մտնում այդ ստաժի մեջ.

ա. Գործազրկության ժամանակամիջոցը՝—պայմանով, յեթե ցուցակագրված է աշխատանքի բորսայում, իսկ այն վայրերում,



ուր աշխատանքի բորսա չկա,—համապատասխան արհեստակցական միությունում, անկախ գործազրկության նպաստ ստանալուց.

բ. Վարձու աշխատանքի ընդմիջումներն առանց աշխատանքի բորսայում կամ համապատասխան արհեստակցական միությունում ցուցակագրվելու, յեթե այդ ընդմիջումներն ընդհանուր առմամբ 6 ամսից չեն գերազանցում.

գ. Մասնակի ապահովագրման դասված աշխատանքներում անցկացրած ժամանակամիջոցը,— անկախ նրա տևողությունից.

դ. Մասնակի ապահովագրման դասված աշխատանքի մեջ տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու ժամանակամիջոցը,—անկախ նրա տևողությունից:

յե. ԲԳԿ Բանակի շարքերում գտնվելու ժամանակամիջոցը:

զ. Սոցիալական ապահովագրության կարգով վորպես հաշմանդամ ապահովվելու ժամանակամիջոցը.

է. Դպրոցներում սովորելու ժամանակամիջոցը.

ը. Կալանքի տակ գտնվելու ժամանակամիջոցը:

ԾԱՆՈԹ.— Սկզբում մասնակի ապահովագրմամբ անցնող աշխատանքների վրա լրիվ ապահովագրում տարածելու դեպքում, այդ աշխատանքներում գրավված անձանց վարձու աշխատանքի մեջ մտնում է նույնպես և այն ստաժը, վորը նա ձեռք է բերել այն ժամանակ, յերբ այդ աշխատանքների վրա տարածված է յեղել մասնակի ապահովագրումը: (ԽՍՀՄ Աշխատանքի Ժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1927 թ. հունիսի 16-ի №77 պարզաբանման հոդ. 1, ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղ. 1927 թ. №31):

4. Գործազրկության նպաստ նշանակվում է այն պայմանով, յեթե գործազուրկը 1-ին հոդվածում նշված մարմիններում ցուցակագրվել է 3 ամսից վոչ ուշ.—

ա. Լրիվ ապահովագրման դասված վերջին վարձու աշխատանքը դադարեցնելու որվանից.

բ. ԲԳԿ Բանակից յերկարատև արձակուրդ, զորապահեստ կամ ընդմիշտ ծառայությունից արձակված անձանց համար,—զինվորական կոմիսարիատներում կամ շրջանի յերկրային վարչությունում հաշվի առնվելու առաջին որվանից.

գ. Աշխատունակությունը վերականգնված աշխատանքի անկարների համար՝ աշխատունակությունը վերականգնելու որվանից.

դ. Կալանքի տակ գտնվածների համար—կալանքից ազատվելու օրվանից.

5. Ցուցակագրման յերեք ամսվա ժամկետի տևողությունը կանգնեցնում է.

ա. Աշխատունակության ժամանակավոր կորուստը.

բ. Պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով նախատեսնված կարգով անցած կամ անցկացրած զորահավաքները.

գ. Մասնակի ապահովագրման դասված աշխատանքներում գտնվելը,—յեթե այդ աշխատանքները տևել են 6 ամսից ավել:

դ) Կալանքի տակ լինելը,—յեթե այդպիսին 6 ամսից ավել է տևել:

Դպրոցներում սովորելու ժամանակամիջոցը չի կանգնեցնում ցուցակագրման յերեք ամսվա ժամկետի տևողությունը:

6. Յեթե գործազուրկի ունեցած պատահական դրամը կամ այլ յեկամուտները գերազանցում են տվյալ ամսվա համար նրան հասանելիք գործազրկության նպաստի 150 տոկոսը կամ թե չէ ունեն մշտական բնույթ կրող դրամ կամ յեկամուտ, անկախ նրա չափից,—համապատասխան ամսվա համար նրան նպաստ չի տրվում: Նպաստ չի տրվում և այն դեպքում, յերբ պատահական դրամի կամ յեկամուտի չափը, թեկուզ չի գերազանցում սույն հոդվածում նշված չափից, բայց հիմնական նպաստի և ընտանիքի հավելման գումարի հետ միասին գերազանցում է, լրիվ ապահովագրման դասված վարձու աշխատանքի դադարեցնելուց առաջ, նրա վերջին 3 ամսվա միջին ամսական աշխատավարձի 75 տոկոսը:

7. Գործազրկության նպաստ չի տրվում այն գործազուրկներին, վորոնց ընտանիքի անդամների ունեցած աշխատավորական յեկամուտը կամ դրամը ընդհանուր առմամբ գերազանցում են.

ա) 1, 2 և 3-րդ գոտիներում 150 ռուբլուց և 4, 5 և 6-րդ գոտիներում 120 ռուբլուց՝—գործազուրկի խնամքի տակ յերեք հոգուց վոչ պակաս անդամ լինելու դեպքում:

բ) 1, 2 և 3-րդ գոտիներում 180 ռուբլուց և 4, 5 և 6-րդ գոտիներում 150 ռուբլուց՝—գործազուրկի խնամքի տակ յերեք հոգուց ավելի անդամ լինելու դեպքում:

Գործազրկության նպաստ չի տրվում նաև այն գործազուրկներին, վորոնց ընտանիքի անդամներն անաշխատ յեկամուտ են ունենում, անկախ նրա չափից:



Բոլոր դեպքերում հաշվի պիտի առնել միայն գործազուրկի հետ միասին ապրողների յեկամուտները և դրամները.— ա) կնոջ, բ) ծնողների, գ) յերեխաների, վորոնք սեփական ընտանիք չունեն:

Գործազուրկների խնամքի տակ համարվում են նրանց հետ միասին ապրող՝—ա) կինը, բ) ծնողները, գ) 16 տարին չլրացած (իսկ դպրոցներում սովորողները—18 տարին) կամ անաշխատունակ յերեխաները, յեղբայրները և քույրերը:

7 ա. Գյուղական վայրերում գործազրկության նպաստ չի տրվում. (բացի 6 և 7 հոդվածներում նշված դեպքերից):

ա) Այն գործազուրկներին, վորոնք գյուղացիական ծխի մեջ են մտնում և հարկադրված են գյուղատնտեսական հարկով:

գ) Այն գործազուրկներին, վորոնք գյուղացիական ծխի մեջ են մտնում և հարկադրված չեն գյուղատնտեսական հարկով, յեթե այն ձեռնարկությունը, վորում գործազուրկն զբաղված է յեղել, տվյալ գյուղական վայրում չի գտնվում:

Ապահովագրական գանձարկղներին իրավունք է տրվում, համապատասխան պրոֆեսիոնալ կազմակերպության համաձայնությամբ, սույն հոդվածի «գ» կետում նշված անձանց, վորոնք աշխատելով քաղաքի ձեռնարկություններում, բայց բնակարանային պայմանների շնորհիվ ստիպված լինելով ապրել գյուղական վայրերում,—գործազրկության նպաստ նշանակել:

Սույն հոդվածը գյուղացիական տնտեսություններում վարձով զբաղված անձանց ապահովության մասին հատուկ կանոնների գործողությունները չի սահմանափակում:

8. Աշխատանքի խեղանդամության ու պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով աշխատունակությունը կորցրած և հաշմանդամության 4, 5 և 6-րդ կարգերին դասված ու գործազրկության նպաստի իրավունք ունեցող հաշմանդամները կարող են, բացի հաշմանդամության թոշակից, ստանալ նաև գործազրկության նպաստ, միայն մի պայմանով, վոր թոշակի և նպաստի ընդհանուր գումարը չգերազանցի այն աշխատավարձի 50 %-ից, վորի հաշվով հաշված է հաշմանդամության թոշակը:

9. Պրոֆմիությունից նպաստ ստանալը գործազուրկին չի զրկում սոցիալական ապահովագրության կարգով նպաստ ստանալու իրավունքից:

10. Այն անձինք, վորոնց վրա տարածվում է լրիվ ապահովա-

դրումը, յեթե նրանք զբաղված են աշխատանքի մեջ նորմալ սեզոնային ընդմիջումներ ունեցող ձեռնարկություններում,— գործազրկության ժամանակ ապահովվում են միայն այն դեպքում, յեթե նրանք գյուղատնտեսական հարկով հարկադրված գյուղացիական ծխի մեջ չեն մտնում: Նշված անձինք գործազրկության դեպքում ապահովվում են.

ա) Բանվորական սեզոնի ընթացքում մի պայմանով,—յեթե նրանք այդ ժամանակ ապրում են քաղաքներում:

բ) Սեզոնային ընդմիջումների ժամանակ մի պայմանով, յեթե նրանք լրիվ տարին ապրում են քաղաքներում:

Վորպես ընդհանուր կանոն, աշխատանքների մեջ սեզոնային ընդմիջումներ ունեցող ձեռնարկությունների ցուցակները սահմանվում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից:

Մինչև Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից ցուցակների հրատարակելը,—տեղերում պետք է կիրառվեն շրջանային և նրանց համապատասխան ապահովագրական գանձարկղների (Հայաստանում—Հանրապետական Գանձարկղի) կողմից կազմված ցուցակները՝—համաձայնեցրած միջմիութենական կազմակերպության հետ,—իսկ փոխադրության մեջ—փոխադրական ապահովագրական գանձարկղների՝—համաձայնեցրած համապատասխան պրոֆմիության հետ: Այդ դեպքում, ցուցակների մեջ մտցվելիք ձեռնարկությունների աշխատանքների սկիզբն ու վերջը սահմանվում են նույն ապահովագրական մարմինների կողմից: Ապահովագրական գանձարկղների կողմից կազմված ցուցակներն ուղարկվում են Սոցապկենտխորհրդությանն ի գիտություն. յերկրային գանձարկղները համապատասխան գլխավորվարչությունների միջոցով, իսկ փոխադրական ապահովագրական գանձարկղներն անմիջապես:

Սույն հոդվածը գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց ապահովության մասին հատուկ վորոշումների գործողությունը չի սահմանափակում:

11. Գործազուրկներին՝ բանվորների կամ ծառայողների կարգերին դասելու համար, անհրաժեշտ է ղեկավարվել, պրոֆեսիաները բանվորական ցանցի և ծառայողների ցանցի մեջ դասավորված տարիֆային տեղեկատուներով կամ պրոֆեսիաների այլ կլասսիֆիկացիայով՝ — համաձայնեցրած տնտեսական մարմինների և պրոֆմիությունների հետ: Տարիֆային տեղեկատուում կամ պրո-



ֆեսիաների այլ կլասսիֆիկացիայում նման ցուցմունքներ չլինելու դեպքում,—անհրաժեշտ է բանվորների կարգին դասել այն անձանց, վորոնց հիմնական աշխատանքը կայանում է ֆիզիքական աշխատանքի մեջ:

12. Պարտադիր զինվորական ծառայությանն անցնելու համար կանչված գործազուրկներին նպաստ վճարելու դեպքերն ու ժամկետները վորոշվում են հատուկ օրենսդրությամբ:

## Բ. ՆՊԱՍՏԻ ՉԱՓԸ

13. Գործազրկության նպաստը բաժանվում է.

ա) Հիմնական նպաստի և

բ) Ընտանիքի հավելման:

14. Հիմնական նպաստի չափերի նկատմամբ գործազուրկները բաժանվում են յերեք կարգի և յուրաքանչյուր կարգի համար նպաստը սահմանվում է կայուն չափերով ըստ գոտիների, համաձայն կցված «սոցիալական ապահովագրության կարգով արվելիք գործազրկության հիմնական նպաստների նորմաների»:

15. Ընտանեկան հավելումը տրվում է գործազուրկի ընտանիքի հետևյալ անդամներին, վորոնք ապրում են նրա հետ միասին և գտնվում են նրա խնամքի տակ.

ա. Մինչև 16 տարեկան կամ անաշխատունակ յերեխաներին, յեթե անաշխատունակությունը տեղի յե ունեցել մինչև 16 տարին լրանալը.

Ծնողներին—մորը յեթե 50 տարին է լրացել և հորը յեթե 55 տարին է լրացել:

16. 15-րդ հոդվածում նշված անձանց ընտանեկան հավելում չի տրվում, յեթե նրանք դաղում կամ այլ յեկամուտ են ունենում: Ընտանեկան հավելում յերեխաներին (հոդ. 15 կ. «ա») չի տրվում և այն դեպքում, յեթե գործազուրկի ամուսինը դաղում կամ այլ յեկամուտ է ունենում:

17. Ընտանեկան հավելում տրվում է.

ա. Ընտանիքի մեկ անդամի համար—հիմնական նպաստի 15%-ի չափով:

բ) Ընտանիքի յերկու անդամի համար—հիմնական նպաստի 25 %-ի չափով:

գ. Ընտանիքի յերեք և ավելի անդամների համար—հիմնական նպաստի 35%-ի չափով:

18. Հիմնական նպաստի և ընտանեկան հավելման գումարը չի

կարող գերազանցել տվյալ անձի վարձու աշխատանքի վերջին յերեք ամսվա կամ պակաս ժամկետի, յեթե տվյալ անձը յերեք ամսից պակաս է վարձու աշխատել, միջին ամսական աշխատավարձի 50%-ից:

19. Յեթե յերկու ամուսինն էլ գործազուրկ են, նրանցից յուրաքանչյուրը, սույն կանոնների կարգով, ինքնուրույն կերպով իրավունք ունի վորպես գործազուրկ ապահովվելու:

Այդ դեպքում, յերեխաների համար ընտանեկան հավելում տրվում է ամուսիններից նրան, վորը հիմնական նպաստ ստանում է ավելի բարձր չափով:

Ամուսիններից յուրաքանչյուրն իրավունք ունի ընտանեկան հավելում ստանալ իր ծնողների համար: Ծնողները մի քանի գործազուրկ յերեխայի խնամքին գտնվելու և նրանց հետ միասին ապրելու դեպքում,—հավելումը տրվում է գործազուրկներից նրան, վորը հավելումն ստանալու համար առաջինն է դիմում:

20. Օրական նպաստը վորոշվում է ամսական նպաստի $^{1}/_{30}$-ի չափով: Վոչ լրիվ ամսվա համար նպաստ տրվում է գործազրկության տոմարային օրերի համար:

21. Գործազուրկին աշխատանքի ուղարկելու դեպքում, յեթե այդ կապված չէ աշխատանքի բորսայի հաշվառումից հանելու հետ,—աշխատանքում գտնված ժամանակամիջոցի համար գործազրկության նպաստ չի տրվում, իսկ այդ ամսվա գործազրկության օրերի համար նպաստ տրվում է ընդհանուր հիմունքներով:

Սակայն այն դեպքերում, յերբ ամսվա ընթացքում այդ աշխատանքներում ստացած պատահական աշխատավարձը չի գերազանցում 6-րդ հոդվածում նշված չափերից, այդ ամսվա համար նպաստը տրվում է լրիվ:

## Գ. ՆՊԱՍՏԻ ՎՃԱՐՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

22. Գործազրկության նպաստ տրվում է գործազուրկի կողմից նպաստ նշանակելու մասին դիմում տալու օրվանից, բայց վոչ շուտ աշխատանքի բորսայում, իսկ այն վայրերում, ուր աշխատանքի բորսա չկա, համապատասխան պրոֆմիությունում ցուցակագրվելու օրվանից, միաժամանակ և վոչ շուտ այն օրվանից, մինչև յերբ գործազուրկին տրված է լուծարքային նպաստ,—նրան հեռացնելու ժամանակ:

Այն գործազուրկներին, վորոնք աշխատանքը թողել են իրենց ցանկությամբ, առանց լուծարքային նպաստ ստանալու իրավունքի,



(դաշնակից հանրապետությունների Աշխատանքի Օրենսգրքի 46-րդ հոդ.) գործազրկության նպաստ տրվում է վերոհիշյալ հիմունքներով, բայց վոչ շուտ, քան վարձու աշխատանքը թողնելու օրվանից հաշված մեկ ամիս լրանալը:

Նպաստ տրվում է վոչ ավելի գործազուրկն աշխատանքի անցնելու օրվանից:

23. Յուրաքանչյուր տվյալ ամսվա գործազրկության նպաստ յենթակա յէ վճարման միայն այն դեպքում, յեթե վերջին տարվա ընթացքում ամսական վճարումների ընդհանուր թիվը, հաշված և այն ամիսը, վորի համար նպաստը պիտի վճարվի,—ինն ամսից չի անցնում:

Գործազրկության մեկ շրջանի ընթացքում (հոդվ. 24) գործազրկության նպաստի վճարումը բոլորովին դադարեցվում է, յեթե գործազուրկն ընդհանուր առմամբ ստացած է լինում 18 ամսվա նպաստ:

24. Գործազրկության մեկ շրջանի տակ պիտի հասկանալ՝ գործազուրկն աշխատանքի բորսայի հաշվառման մեջ գտնվելու անընդհատ ժամանակամիջոցը:

Գործազրկության շրջանը չի ընդհատվում.

ա) Յերբ գործազուրկն աշխատանքի օգնության կարգով գրանվում է հասարակական աշխատանքներում կամ աշխատանքի բորսաների կողմից կազմակերպված արտադրական ու առևտրական ձեռնարկներում և գործազուրկների աշխատանքային կոլլեկտիվներում:

բ) Յերբ գործազուրկը գտնվում է վարձու աշխատանքի մեջ վեց ամսից պակաս ժամանակով:

գ) Յերբ գործազուրկը արհեստագործական կոոպերատիվ ընկերությունների (արտելի) կամ հաշմանդամների կոոպերատիվ միավորների անդամների շարքում մնում է յերկու տարուց պակաս ժամանակով:

24. ա. Այն անձանց, վորոնց նպաստի վճարումը դադարեցված է 18 ամսվա նպաստն ստանալու հետևանքով,—նորից կարող է նպաստ նշանակվել մի պայմանով միայն, յեթե նրանք, նպաստի վճարումը դադարեցնելուց հետո, ընդհանուր առմամբ աշխատել են վեց ամսից վոչ պակաս:

25. Այն անձանց, վորոնք, մինչև գործազրկության տեղի ունենալը, աշխատել են աշխատանքի մեջ նորմալ սեզոնային ընդմի-

ջումներ ունեցող արդյունաբերությունների մեջ (հոդ. 10) գործազրկության նպաստ տրվում է 23-րդ հոդ. սահմանված ժամկետների ընթացքում, բայց նշված ընդմիջումներին նպաստ տրվում է յերկու ամսից վոչ ավել:

26. 23-րդ հոդվածում նշված ամսական վճարումների վերջնական թվի մեջ չեն մտնում նպաստի հետեվյալ վճարումները.

ա) Ժամանակավոր անաշխատունակության ընթացքում.

բ) «Ուստանովկա» ակցիոներական ընկերության կողմից կազմակերպված աշխատանքի ինստիտուտի կենտրոնական դասընթացքներում սովորելու ժամանակամիջոցը.

գ) Ձեռնարկություններում կամ հատուկ դասընթացներում սովորելու ժամանակամիջոցը, յեթե գործազուրկը սովորելու յե ուղարկված յեղել աշխատանքի բորսայի կողմից՝—ապահովագրական գանձարկղի համաձայնությամբ.

դ) Պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքով նախատեսված զորահավաքի կարգով անցկացրած կամ անցած ժամանակի համար (ԽՍՀՄ օրենք. ժողով. 1925 թ. № 62, հոդ. 463):

Ամսական վճարումների թիվը հաշվելու ժամանակ, հաշվեառման յենթակա չէ նաև ապահովագրական գանձարկղի կողմից՝ գործազուրկը հասարակական աշխատանքներին կամ աշխատանքի բորսաների կողմից կազմակերպված արդյունաբերական և առևտրական ձեռնարկներին մասնակցելու ժամանակամիջոցի համար վճարված նպաստը:

Վճարման յենթակա նպաստի ամիսների վերջնական թվի մեջ չեն մտնում.

ա) Այն ամիսները, վորի համար գործազուրկը 22-րդ հոդվածի 2-րդ մասի կարգով, զրկվում է նպաստից.

բ) Այն ամիսները, վորոնց համար գործազուրկը 41-րդ հոդվածի «ա» կետի կարգով զրկվում է նպաստից:

գ) Այն ամիսները, վորոնց համար արհեստագործական կոոպերատիվ ընկերության կամ արտելի մեջ մտած գործազուրկին հասանելիք նպաստը ապահովագրական գանձարկղի կողմից հանձնված է ընկերության կամ արտելի վարչությանը՝ գործազուրկի փայավճարի մարման համար:



## Դ. ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՅԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ

27. Ժամանակավոր անաշխատունակության տեղի ունենալու դեպքում, գործազուրկին իրավունք է վերապահում ԽՍՀՄ Աշխատժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. մայիսի 9-ին հաստատված № 122 «Ժամանակավոր անաշխատունակության նպաստի նշանակման և վճարման մասին կանոններով» (ԽՍՀՄ Աշխատժողկոմատի տեղեկատու, 1927 թ. № 23) սահմանված ժամկետների ընթացքում գործազրկության նպաստ ստանալու, յեթե ապահովագրական դեպքը տեղի յե ունեցել մինչև գործազրկության նպաստի վճարումների վերջնական վերջանալը (հոդ. 23, մ. 2):

Այդ ժամանակ հղիության և ծննդաբերության հետեվանքով աշխատունակությունը ժամանակավորապես կորցնելու դեպքում, գործազուրկ կանանց գործազրկության նպաստ տրվում է վեց շաբաթ մինչև ծննդաբերությունը և վեց շաբաթ էլ ծննդաբերությունից հետո:

28. Ժամանակավոր անաշխատունակությունը, մինչև աշխատանքի բորսաներում, իսկ այն վայրերում, ուր աշխատանքի բորսաներ չկան համապատասխան պրոֆմիությունում, ցուցակագրվելու համար սահմանված յերեք ամսվա ժամկետը տեղի ունենալու դեպքում,—գործազրկության նպաստը տրվում է անկախ ցուցակագրումից, յեթե այդպիսին ստանալու մնացած պայմանները լրիվ են:

Սույն կանոններով սահմանված հիմունքներով գործազրկության նպաստը տրվում է նույնպես անկախ ցուցակագրումից՝—ԽՍՀՄ Աշխատժողկոմատին առընթեր սոցիալական Ապահովության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. մայիսի 9-ին հաստատված № 122 «Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու և վճարելու մասին կանոնների» 14-րդ և 15-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում:

29. Գործազուրկներին լրացուցիչ նպաստներ տրվում են ԽՍՀՄ Աշխատժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. հունվարի 13-ին հաստատված № 8 «Սոցիալական ապահովագրության գծով լրացուցիչ նը-

պատներ նշանակելու և վճարելու մասին կանոններով» (հետագա փոփոխություններով) (ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղ. 1927 թ. № 5) սահմանված հիմունքներով:

## ՅԵ. ՆՊԱՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

30. Գործազուրկի նպաստավորման իրավունքը վորոշելու և համապատասխան կարգին դասելու, (վորով նպաստ է տրվում) աշխատանքները տանում է գործազրկության նպաստ նշանակող հանձնաժողովը՝ — նախագահությամբ ապահովագրական գանձարկղի ներկայացուցչի և յերկու անդամի՝ —մեկը Աշխբորսայի ներկայացուցիչը, իսկ մյուսը միջմիութենական կազմակերպության ներկայացուցիչը:

Նպաստ նշանակելու աշխատանքները Ապահովագրական գանձարկղի կոմիտեյի (նախագահության) կողմից կարող է դրվել անդամներից մեկի վրա: Ապահովագրական գանձարկղի կոմիտեյի (նախագահության) անդամի վորոշումների առթիվ յեղած բողոքները քննվում են հանձնաժողովի կողմից: Նպաստի մերժումները քննվում են հանձնաժողովի կողմից բոլոր դեպքերում, անկախ բողոք տալուց:

Հանձնաժողովի վորոշումները, հանձնաժողովի նախագահը նրա հետ համաձայն չլինելու դեպքում՝ —մտցվում են ապահովագրական գանձարկղի կոմիտեյի (կամ նրա նախագահության) քննությանը:

31. Նպաստ ստանալ ցանկացող գործազուրկը դիմում է տալիս իր բնակավայրի գանձարկղին (փոխադրողների գծով—համապատասխան փոխադրական գանձարկղին) նշելով աշխատանքի բորսայի ցուցակագրման №-ը և այն սեկցիան, վորի հաշվառման մեջ գտնվում է գործազուրկը: Հայտարարությանը պիտի կցված լինեն հետևյալ փաստաթղթերը.

ա) Պրոֆմիության անդամատոմսը.

բ) Հաշվեգրքույկը կամ վկայական վերջին աշխատանքի վայրից նշելով՝ — 1) պաշտոնը և պրոֆեսիան, 2) արձակման ժամանակը, 3) մինչև յերբ է գործազուրկը արձակվելու ժամանակ աշխատավարձով և լուծարքային նպաստով բավարարվել, 4) տարիֆային ցանցի կարգը և աշխատավարձը վերջին յերեք ամսում, 5) տվյալ անձի համար վարձողի կողմից վճարվելիք սոցիալական ապահովագրական մուծումների չափը (քանի տոկոս):

Վարձու աշխատանքի ստաժը հաստատող փաստաթղթեր այն



դեպքերում, յերբ ստաժը հանդիսանում է նպաստ նշանակելու պայմանը (յեթե պահանջվելիք ստաժը չի հաստատվում հաշվեգրքույկով):

դ) Գործազուրկի բնակավայրը հաստատող փաստաթուղթ— նշելով աշխատավարձը կամ այլ յեկամուտները, վորի հիման վրա հաշված է բնակարանի վարձը:

յե) Վարձողից տեղեկանք այն մասին, թե գործազուրկը հեռացված է վարձողի կողմից թե հեռացել է իր ցանկությամբ և վերջին դեպքում լուծարքային նպաստ ստացել է թե վոչ:

զ) Զին-հաշվառման փաստաթուղթը, յեթե գործազուրկը պատկանում է ԲԳԿ Բանակից յերկարատև արձակուրդ, զորապահեստ կամ ծառայությունից ընդմիշտ արձակվածների թվին:

Ծանոթ.—Պրոֆմիության անդամատոմսը կարող է փոխարինել հաշվեգրքույկին, նմանապես և վերջին աշխատավայրի վկայականին, յեթե ապահովագրական գանձարկղը կարողանա անդամատոմսում կատարված գրանցումներից վորոշում հանել տվյալ անձին վորպես գործազուրկ նպաստավորման իրավունքի մասին և վորոշել նպաստի չափը:

Յեթե գործազուրկը մինչև գործազրկության տեղի ունենալը աշխատած է լինում սեզոնային նորմալ ընդմիջումներ ունեցող արդյունաբերություններում (հոդ. 10) պարտավոր են գյուղխորհրդից ներկայացնել տեղեկանք այն մասին, վոր նա գյուղատնտեսական հարկով հարկադրվող գյուղացիական ծխի մեջ չի մտնում:

32. Գործազուրկի կողմից աշխատավարձի կամ այլ յեկամուտների (հոդ. 31, կ. «դ») մասին փաստաթղթի ներկայացնելը հնարավոր չլինելու կամ ներկայացրած փաստաթղթերի ճշտությունը կասկածելի լինելու դեպքում,—ապահովագրական գանձարկղը կարող է գործազուրկի տնտեսական դրության հետազոտում կատարել:

33. Գործազուրկի տնտեսական դրության հետազոտումը (հոդ. 32) ապահովագրական գանձարկղի կողմից պիտի կատարվի դիմում կամ նպաստի թերթիկ (հոդ. 36) տալու որից հաշված մեկ շաբաթվա ժամկետում:

Յեթե նշված ժամկետում հետազոտումը չկատարվի,—32-րդ

հոդվածում նշած հանգամանքները չեն կարող նպաստի մերժման համար հիմք ծառայել։

34. Ապահովագրական գանձարկղի կոմիսիայի (նախագահության) անդամը նպաստ նշանակելու հարցերը նայում է ոչ ուշ քան մինչև մեկ շաբաթը՝ դիմում տալու օրվանից հաշված։

35. Գործազրկության նպաստ նշանակող հանձնաժողովին ըստացված հայտարարությունների առթիվ որոշումներ հանում է մի շաբաթվա ընթացքում։

Նպաստի մերժման մասին որոշումները պիտի պատճառաբանված կերպով մտցվեն արձանագրության մեջ՝ արձանագրելով գործին վերաբերյալ բոլոր մանրամասնությունները։ Հանձնաժողովի բոլոր որոշումները գործազուրկի կողմից կարող են բողոքարկվել նահանգական (կամ նրան համապատասխան) ապահովագրական գանձարկղի կոմիսիային հանձնաժողովի որոշումը գործազուրկին հայտնելու օրվանից հաշված մեկ ու կես ամսվա ընթացքում։ Նահանգական (կամ նրան համապատասխան) ապահովագրական գանձարկղի կոմիսիայի որոշումը վերջնական է և բողոքարկման յենթակա չէ։

36. Գործազուրկին նպաստ ստանալու իրավունք վերապահվելու դեպքում, նրան նպաստ ստանալու համար տրվում է «թերթիկ»։ Ամեն անգամ գործազուրկը նպաստ ստանալու համար պիտի ապահովագրական գանձարկղին ներկայացնի նպաստ ստանալու «թերթիկը» և հոդ. 31 «գ» կետում նախատեսնված փաստաթուղթը։ Նման փաստաթուղթ ներկայացնելը հնարավոր չլինելու դեպքում, համապատասխան կերպով կիրառվում են 32–րդ և 33–րդ հոդվածները։

Նպաստ վճարելու ժամանակ ապահովագրական գանձարկղը ստուգում է գործազուրկի իրավունքը հերթական վճարման համար և յեթե նա այդպիսի իրավունք ունենում է, տալիս է նրան հերթական նպաստն ստանալու համար նոր «թերթիկ» նրանից վերցրված թերթիկի փոխարեն։

37. Ժամանակավոր աշխատանքը վերջանալուց, հասարակական աշխատանքներին մասնակցելուց կամ աշխատանքի բորսայի կողմից կազմակերպված արդյունաբերական կամ առևտրական ձեռնարկներում կամ աշխատանքային կոլլեկտիվներում աշխատանքներից հետո, նպաստ ստանալը վերականգնելու համար չի



պահանջվում, որ ապահովագրական գանձարկղին նոր դիմում տրվի։

38. Գործազուրկի ներկայացրած տեղեկությունները աշխատանքի բորսայում ցուցակագրելու մասին (հոդ. 31.) ապահովագրական գանձարկղի կողմից ստուգելու կարգը և գործազրկության նպաստ վճարելու գործերով ապահովագրական գանձարկղների ու աշխատանքի բորսաների փոխհարաբերության կարգը սահմանվում է հատուկ որոշումներով։

## Զ. ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ

39. Գործազրկության նպաստ նշանակելու մասին պահանջներ կարող են ներկայացվել միայն գործազրկության շրջանում (հոդ. 24)։

40. Նշանակված, բայց իր ժամանակին պահանջված գործազրկության նպաստը տրվում է ոչ ավելի, քան նպաստն ստանալու համար ապահովագրական գանձարկղին դիմելու օրվանից հաշված յերկու ամիս հետ ժամանակամիջոցի համար,—պայմանով, յեթե այդպիսի դիմումը տեղի յե ունեցել գործազրկության շրջանում կամ մինչև աշխատանքի անցնելը մեկ ամսից ոչ ուշ։

## Է. ՆՊԱՍՏԻՑ ԶՐԿԵԼԸ

41. Գործազուրկները զրկվում են գործազրկության նպաստից.

ա) ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1927 թ. փետրվարի 16–ի № 39 «Գործազուրկները ոչ հարգելի պատճառով աշխատանքի բորսաների կողմից առաջարկված աշխատանքից հրաժարվելու դեմ պայքարելու միջոցների մասին» (ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկատու, 1927 թ. № 9) որոշմամբ նախատեսնված դեպքերում։

բ) Յեթե գործազուրկը ոչ օրինական նպաստ ստանալու նպատակով իր մասին գիտավորյալ սխալ տեղեկություններ է տվել։

42. 41–րդ հոդվածի «բ» կետում նախատեսնված դեպքերում, գործազուրկները ապահովագրական գանձարկղի կողմից յենթարկվում են դաշնակից հանրապետությունների քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով քրեական պատասխանատվության։

---

Սույն փոփոխված կանոնները կիրարկության մեջ են անցնում

1929 թ. նոյեմբերի 15-ից և տարածվում են նույնպես մինչև այդ օրը նպաստավորման մեջ գտնվող բոլոր գործազուրկների վրա։

1929 թ. նոյեմբերի 15-ից սկսած ժամանակամիջոցի համար նպաստի վճարումը կատարվում է միայն այն գործազուրկներին, վորոնք ներկայացնում են անհրաժեշտ փաստաթղթերը՝ ապացուցող նրանց նպաստավորման յենթակա լինելու իրավունքը, համաձայն սույն կանոնների փոփոխված կետերի։

Այն անձանց, վորոնք նշված փաստաթղթերը կներկայացնեն 1930 թ. հունվարի 15-ից հետո,—անցած ժամանակի համար նպաստը տրվում է վոչ ավելի քան յերկու ամսվա համար։

---

ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1927 թ. փետրվարի 16-ի «Գործազուրկները վոչ հարգելի պատճառով աշխատանքի բորսաների կողմից առաջարկված աշխատանքից հրաժարվելու դեմ պայքարելու միջոցների մասին» № 39 վորոշման 2-րդ հոդվածը, ԽՍՀՄ Աշխժողկոմատի 1929 թ. նոյեմբերի 4-ի № 354 վորոշմամբ խմբագրվում է հետևյալ կերպ. «Սոցիալական ապահովագրության կարգով գործազրկության նպաստ ստացող անձինք վոչ հարգելի պատճառով աշխատանքից հրաժարվելու բոլոր դեպքերում առաջին անգամ նպաստից զրկվում են յերեք ամսով, իսկ աշխատանքից հրաժարվելը կրկնվելու դեպքում, նպաստից զրկվում են գործազրկության ամբողջ ժամանակամիջոցի համար և միաժամանակ հանվում են աշխատանքի բորսայի հաշվառումից (հոդ. 6)»։

---



Հավելված ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. դեկտեմբերի 14-ին հաստատված սոցիալական ապահովագրության կարգով գործազրկության դեպքում նպաստներ նշանակելու և վճարելու «№ 406 կանոնների» 2-րդ և 14-րդ հոդվածների։

«Սոցիալական Ապահովագրության կարգով գործազրկության դեպքում տրվող հիմնական նպաստների նորմաները» հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1929 թ. հուլիսի 25-ին № 253։

I. Սոցապահովագրական գանձարկղների կողմից գործազրկության հիմնական նպաստներ վճարվում են ըստ հետևյալ ամսեկան նորմաների.

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԵՐ

| Գոտիներ | 1 | 2 | 3 |
|---|---|---|---|
| 1 | 27 ռ. | 20 ռ. | 15—50 կ. |
| 2 | 24 ռ. | 18 ռ. | 14—50 կ. |
| 3 | 20 ռ. | 15 ռ. | 11—50 կ. |
| 4 | 17—50 կ. | 13 ռ. | 10—50 կ. |
| 5 | 15 ռ. | 11 ռ. | 8—50 կ. |
| 6 | 12 ռ. | 9 ռ. | 7 ռ. |

Ծանոթություն.—Սոցապգանձարկղների՝ ըստ գոտիների բաժանումը սահմանվում է ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցապահովագրության Միութենական Խորհրդի հատուկ վորոշմամբ։

II. Գործազրկության դեպքում նպաստներ նշանակելիս գործազուրկները բաժանվում են ըստ կարգերի հետևյալ կերպ։

## Ա. ԲԱՆՎՈՐՆԵՐ

1. Թղթի գործի մեջ աշխատող բանվորներ, վորոնք մինչև գործազուրկ դառնալը ստանում եյին աշխատավարձ նոր տարի—

փային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

2. Ջրային բանվորներ,
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն ստանում են աշխատավարձ հին տարիֆային ցանցով.

7-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
5-րդ և 6-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

3. Լեռնագործ բանվորներ,

ա) Վոսկու-պլատինայի, նավթի և այլ արդյունաբերության մեջ աշխատողները, վորոնք մինչև գործադրուրկ դառնալն ստանում են աշխատավարձ նոր տարիֆային ցանցով.

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Հանքային արդյունաբերության մեջ աշխատողները, վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
4-րդ և 5-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

գ) Ածխային արդյունաբերության մեջ աշխատողները, վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

7-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
4, 5 և 6-րդ կարգով ստացողները դասվում են



գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

4. Փայտ վերամշակող (փայտագործ) բանվորներ,
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին
3-րդ, 4-րդ և 5-րդ կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 2-րդ կարգին

5. Յերկաթուղային բանվորներ,
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում № 1 նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ կարգով ստացողները դասվում են գոր-
ծադրկության . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

6. Կաշեգործ բանվորներ.
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

7. Կոմունալ բանվորներ.
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործադրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

8. Տեղական տրանսպորտի բանվորներ.

ա) ավտոտրանսպորտի բանվորներ,
վորոնք մինչև գործադրուրկ դառնալն աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Պրոֆեսիոնալ բեռնակիրները, (որոնց համար բեռնակրի աշխատանքը հանդիսանում է հիմնական պրոֆեսիա).

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

գ) Բեռնողներ, (բացի պրոֆեսիոնալ բեռնակիրներից) և էլեվատորների ու սայլավոր (գուժեվոյ) տրանսպորտի բանվորներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

դ) Պահեստների բանվորներ.

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

9. Մետաղագործ բանվորներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին



3-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

10. Ժողսննդի բանվորներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

4-րդ և 5-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . 3-րդ կարգին

11. Պոլիգրաֆ արդյունաբերության բանվորներ.

ա) Բրոշյուրովկա անողներ.

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Պոլիգրաֆ արտադրության մնացած բանվորները.

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . 3-րդ կարգին

12. Սննդի և Համի բանվորներ.

ա) Ալրաղացներում, ձիթհան գործարաններում, մակարոնի, ջերշիկի արդյունաբերությունում, սառցարաններում և թեյի ու սուրճի արդյունաբերության մեջ աշխատողներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին

3-րդ կարգով ստացողները դասվում են գոր-
ծազրկության . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին
բ) Ոգու-սպիրտի, գարեջրի, դրոժի, ածիկի, ծխախոտի, սպանդանոցի, մախորկայի և ողեծխական արդյունաբերության մեջ աշխատողներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

Ծանոթություն.—Մյուս ճյուղերի Սննդի և Համի բանվորները նախքան նոր տարիֆային ցանցին անցնելը—բաժանվում են կարգերի, համաձայն ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1928 թ. մարտի 5-ին № 179 որոշմամբ հաստատված նորմաների (ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղեկ. 1928 թ. № 15-16):

13. Շաքարագործ բանվորներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

14. Գյուղատնտեսական արդյունաբերության բանվորներ, (ի բացառյալ գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղվածներից, որոնք ապահովվում են հատուկ կանոններով).
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են



գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

15. Կառուցող բանվորներ,
ա) Շինարարական նյութերի արդյունաբերության վրա աշխատողներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ կարգով ստացողները դասվում են գոր-
ծազրկության . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին
բ) Կառուցումների վրա աշխատողներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են
գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

16. Մանածագործ բանվորներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
4-րդ և 5-րդ կարգով ստացողները դասվում են
գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

17. Քիմիական արտադրություններում աշխատող բանվորներ,
ա) Անալինի, լաքի, ներկի, դեղագործական, կոկսոբենզոլային և անտառաքիմիական արդյունաբերության մեջ աշխատողներ,
որոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ էին ստանում նոր տարիֆային ցանցով՝
4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դաս-
վում են գործազրկության . . . . . . 1-ին կարգին
2-րդ և 3-րդ կարգով ստացողները դասվում են

գործազրկության . . . . . . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Ռեզինի արդյունաբերության մեջ աշխատողներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

4-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 1-ին կարգին
3-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

գ) Բացի վերևում նշվածներից, քիմիական արդյունաբերության մյուս ճյուղերում աշխատողներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 1-ին կարգին
4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

18. Կար ու ձևի բանվորներ,

որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 1-ին կարգին
3, 4 և 5-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

19. Սևագործ բանվորներ,

Բոլոր սևագործ բանվորները, առանց բացառության (անկախ նրանց աշխատավարձի չափից), դասվում են գործազրկության 3-րդ կարգին:

20. Աշակերտներ,

ա) որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում ընդհանուր բանվորական տարիֆային ցանցով, բաժանվում են կատեգորիաների բանվորների հետ միևնույն հիմունքներով:

բ) Իսկ որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում նոր աշակերտական տարիֆային ցանցով, ապա դրանցից

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 2-րդ կարգին
Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

21. Զորացրվածները,

որոնք արձակված են յերկարատև արձակուրդ՝ — զորապահեստ կամ ծառայությունից ընդմիշտ՝ շարքային և հրամատարական կազմի թվին պատկանող բանվորները, բոլորն առանց բացառության, դասվում են գործազրկության . . 1-ին կարգին

## Բ. ՄՏԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻՆՔ

22. Բարձր որակի մտավոր աշխատանք կատարող անձինք.

Բարձրագույն կրթություն ունեցող (նույն թվում և գեղարվեստական) բարձր որակի մտավոր աշխատանք կատարող անձինք, որոնք մինչև գործազրկությունն աշխատում էյին իրենց մասնագիտական ասպարեզում, որպիսիք են՝ գիտական աշխատողները, մանկավարժները, բժիշկները, գյուղատնտեսները, ճարտարապետները, հողաչափները, իրավաբանները, տնտեսագետները և այլն, դասվում են գործազրկության . . 1-ին կարգին

23. Պատասխանատու քաղաքական աշխատողներ.

Խորհրդային, տնտեսական, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և այլ հիմնարկ-ձեռնարկներում ու կազմակերպություններում աշխատող պատասխանատու քաղաքական աշխատողները, որոնք մինչև գործազուրկ դառնալն աշխատավարձ էյին ստանում պատասխանատու քաղաքական աշխատողների տարիֆային ցանցի 16-րդ կատեգորիայից ոչ ցածր, այդպիսիները դասվում են գործազրկության . . . . . . . . . . 1-ին կարգին

Մնացած պատասխանատու քաղաքական աշխատողներն ընդհանուր հիմունքներով բաժանվում են ըստ կարգերի, համաձայն իրենց ստացած աշխատավարձի:

24. Տեխնիքական կազմ.

Տեխնիքական կազմին պատկանող անձինք, որոնք աշխատելիս են յեղել արդյունաբերական ձեռնարկներում, տրանսպորտի վրա և շինարարության վրա — տեխնիկներ, մեխանիկներ, վարպետներ, տասնապետներ, դերձակներ, ելեկտորային կայի

օպերատորներ և այլն, դասվում են 1-ին կարգին (անկախ նրանց ստացած աշխատավարձի չափից)։

25. Ջրային տրանսպորտի ծառայողներ.

Ջրային տրանսպորտի ծառայողները, ի բացառյալ գրասենյակային կազմից (կետ 34), վորոնք մինչև գործազրկությունը հիմնական ծառայությունից աշխատավարձ եյին ստանում ամսական վոչ պակաս քան 1-ին գոտում 70 ռ., 2-րդ գոտում 63 ռ., 3-րդ գոտում 57 ռ., 4-րդ գոտում 52 ռ., 5-րդ գոտում 47 ռ. և 6-րդ գոտում 42 ռ., դասվում են . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

26. Յերկաթուղային ծառայողներ.

ա) Վարչա-տնտեսական, հաշվե-գրասենյակային և սպասարկող կազմին պատկանող անձինք,

վորոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ եյին ստանում № 2 նոր տարիֆային ցանցով՝

6-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Յերկաթուղային տրանսպորտի կապի աշխատողները, վորոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ եյին ստանում № 2 նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 1-ին կարգին

2, 3 և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

Ծանոթություն.—Կայարանի պետ և պահեստի գործակալները, վորոնք միաժամանակ կատարում են հեռագրիչների պարտականությունները, յեթե իրենց հիմնական պաշտոնով նրանք յենթակա չեն գործազրկության բարձր կարգին դասվելու, այդպիսիները դասվում են ըստ գործազրկության կարգերի, վորպես հեռագրիչներ։

27. Գեղարվեստի աշխատավորներ.

ա) Գեղարվեստական աշխատանք կատարող աշխատավորները, վորոնք գրանցված են յեղել մշտական աշխատանքների վրա և մինչև գործազրկությունը ստանալիս են յեղել իրենց հիմնական ծառայությունից, իսկ յեզակի յելույթներ ունեցողներն ընդ-



հանուր առմամբ գումարը մի ամսում վոչ պակաս, քան 1-ին գոտում 170 ռ., 2-րդ գոտում 150 ռ., 3-րդ գոտում 140 ռ., 4-րդ գոտում 125 ռ., 5-րդ գոտում 115 ռ., 6-րդ գոտում 100 ռ. դասվում են . . . . . . . . . . . . 1-ին կարգին

Վոչ պակաս 1-ին գոտում 85 ռ., 2-րդ գոտում 75 ռ., 3-րդ գոտում 69 ռ., 4-րդ գոտում 62 ռ., 5-րդ գոտում 56 ռ. և 6-րդ գոտում 50 ռ. դասվում են . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Գեղարվեստի աշխատավորների վարչա-տնտեսական, բանվորա-սպասարկողական կազմի անձինք, (ի բացառյալ վարչա-գրասենյակային կազմից—կետ 34), վորոնք մինչև գործազուրկ դառնալը աշխատավարձ եյին ստանում նոր տարիֆային ցանցով՝

5-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . 1-ին կարգին

3-րդ և 4-րդ կարգով ստացողները դասվում են գործազրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . 3-րդ կարգին

28. Միջին բժշկա-տեխնիկական կազմ.

Միջին բժշկա-տեխնիկական կազմին պատկանող անձինք— ատամի տեխնիկները, ռենտգենյան տեխնիկները, որտոպեդիստաները դասվում են 1-ին կարգին (անկախ նրանց ստացած աշխատավարձի չափից)։

29. Միջին բժշկական կազմ.

Միջին բժշկական կազմի անձինք, վորոնք մինչև գործազուրկ դառնալը իրենց հիմնական ծառայությունից աշխատավարձ եյին ստանում ամսական վոչ պակաս, քան 1-ին գոտում 58 ռ., 2-րդ գոտում 52 ռ., 3-րդ գոտում 47 ռ., 4-րդ գոտում 43 ռ., 5-րդ գոտում 39 ռ., 6-րդ գոտում 35 ռ. դասվում են . . 2-րդ կարգին

Մնացածները դասվում են . . . . . . . . 3-րդ կարգին

30. Դեղագործական կազմ.

Դեղագործական կազմին պատկանող անձինք, վորոնք մինչև գործազուրկ դառնալը իրենց հիմնական ծառայությունից ստանում եյին վոչ պակաս քան 1-ին գոտում 58 ռ., 2-րդ գոտում 52 ռ., 3-րդ գոտում 47 ռ., 4-րդ գոտում 43 ռ., 5-րդ գոտում 39 ռ. և 6-րդ գոտում 35 ռ., դասվում են 2-րդ կարգին։

Մնացածները դասվում են . . . . . . . . 3-րդ կարգին

31. Լուսավորության ասպարեզում աշխատողներ.

Ուսումնական հաստատությունների դասավանդական կազմին

պատկանող անձինք, անկախ իրենց աշխատավարձից, իսկ մնացած լուս. աշխատողները, (ի բացառյալ տնտեսական և դրամենյակային կազմի—կետ 34), որոնք մինչև գործադուլը դառնալը ամսական աշխատավարձ էյին ստանում իրենց հիմնական ծառայությունից, ոչ պակաս քան 1-ին գոտում 55 ռ., 2-րդ գոտում 50 ռ., 3-րդ գոտում 45 ռ., 4-րդ գոտում 40 ռ., 5-րդ գոտում 36 ռ. և 6-րդ գոտում 33 ռ., դասվում են 2-րդ կարգին:

Մնացածները դասվում են . . . . . . . . 3-րդ կարգին

32. Ժողկապի աշխատավորները.

ա) Հեռագրի, հեռախոսի և ռադիոյի աշխատակիցներ, այլև փոստային հիմնարկությունների աշխատակիցներ, որոնք միաժամանակ սպասարկում են հեռագրին, հեռախոսին, ռադիոյին՝ ի բացառյալ վարչական դրասենյակային կազմի (տես «բ» նույն կետի), որոնք մինչև գործադուլը դառնալը աշխատավարձ էյին ստանում հին տարիֆային ցանցով՝

7-րդ և ավելի բարձր կարգով ստացողները դասվում են գործադրկության . . . . . . . 1-ին կարգին

5-րդ և 6-րդ կարգով ստացողները դասվում են գործադրկության . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները . . . . . . . . . . . . 3-րդ կարգին

բ) Փոստային ծառայողները և հեռագրի, հեռախոսի ու ռադիոյի վարչա-դրասենյակային կազմին պատկանող անձինք, որոնք մինչև գործադուլը դառնալը ամսեկան աշխատավարձ էյին ստանում ոչ պակաս, քան 1-ին գոտում 100 ռ., 2-րդ գոտում 90 ռ., 3-րդ գոտում 80 ռ., 4-րդ գոտում 72 ռ., 5-րդ գոտում 65 ռ., 6-րդ գոտում 60 ռ., դասվում են . . . . 2-րդ կարգին

Մնացածները դասվում են . . . . . . . . 3-րդ կարգին

33. Խանութների և պահեստների վարիչներ, նրանց տեղակալներ և վաճառողներ.

Մանրածախ և մեծաքանակ վաճառքի խանութների և պահեստների վարիչները, վորտեղ աշխատում են 4 հոգուց ոչ պակաս անձինք— դասվում են . . . . . . . . . 1-ին կարգին

4 հոգուց պակաս աշխատակից ունեցող խանութների և պահեստների վարիչները, պահեստների և խանութների վարիչների տեղակալները, այլև մանրածախ վաճառք, մեծածախ և մանրածախ միասին վաճառք կատարող անձինք դասվում են . . . . . . . . . . . . . . . 2-րդ կարգին



34. Մասավոր աշխատանք կատարող այլ անձինք.

Բացի վերևում հիշվածներից մասավոր և դրասենյակային աշխատանքներ կատարող այլ անձինք, վորոնք մինչև գործադուլը դառնալը իրենց հիմնական ծառայությունից աշխատավարձ էյին ստանում ամսեկան ոչ պակաս քան 1-ին գոտում 250 ռ., 2-րդ գոտում 225 ռ., 3-րդ գոտում 200 ռ., 4-րդ գոտում 180 ռ., 5-րդ գոտում 160 ռ. և 6-րդ գոտում 150 ռ., դասվում են 1-ին կարգին: Ոչ պակաս քան 1-ին գոտում 125 ռ., 2-րդ գոտում 113 ռ., 3-րդ գոտում 102 ռ., 4-րդ գոտում 92 ռ., 5-րդ գոտում 83 ռ. և 6-րդ գոտում 75 ռ. ստացողները դասվում են . . . . . . . . . . . . 2-րդ կարգին

Մնացածները դասվում են . . . . . . . . 3-րդ կարգին

35. Զորացրվածներ.

Երկարատև արձակուրդ, զորապահեստ կամ ընդմիշտ ծառայությունից արձակված հրամանատարական կամ շարքային կազմին պատկանող ծառայողները—բոլորն առանց բացառության դասվում են . . . . . . . . . 1-ին կարգին

36 Ծառայող աշակերտները բոլորն էլ առանց բացառության դասվում են . . . . . . . . . . 3-րդ կարգին

Գործադուլների առանձին խմբակները, վորոնք աշխատել են այնպիսի ձեռնարկներում, ուր աշխատավարձը վճարվել է կայուն դրույքներով և ոչ թե տարիֆային կարգով (Սննդի ու համի, լոռնային և այլ արդյունաբերության ձեռնարկներից մի քանիսը), ըստ սահմանված կանոնների, բաժանվում են յերեք կարգի. Նշված կանոնները սահմանվում են գավառային և նահանգական (կամ նրան համապատասխան) ապահովագրական գանձարկղները միջմիությենական համակերպությունների համաձայնությամբ, իսկ փոխադրության մեջ՝—փոխադրական գանձարկղները համապատասխան պրոֆմիության համաձայնությամբ:

Վերոհիշյալ կանոններն ուղարկվում են կենտրոնացապվարչությանն ի գիտություն՝ յերկրային գանձարկղների կողմից համապատասխան գլխոցապվարչության միջոցով, իսկ փոխադրական ապահովագրական գանձարկղների կողմից՝ անմիջականորեն:

4. Գործադուլին գործադրկության այս կամ այն կարգին դասելիս՝ վճռական և կարևոր հանգամանք է հանդիսանում ոչ թե նրա այս կամ այն պրոֆմիության պատկանելը, այլ ույն

նորմայի 2-րդ հոդվածում հիշված նրա այս կամ այն պրոֆեսիայի աշխատանքը (օրինակ՝ բոլոր փականագործները, անկախ նրանից թե աշխատում են Սննդի ու Համի, թե մի այլ արդյունաբերության մեջ, նայվում են վորպես մետաղագործներ):

5. Ապահովագրական գանձարկղը գործազուրկին այս կամ այն կարգին դասում է ըստ նրա վերջին աշխատանքի աշխատավարձի կամ տարիֆային կարգի:

Յեթե գործազրկությունն առաջացել է 6 ամսից պակաս տեված աշխատանքից հետո և յեթե այդ դեպքում գործազուրկը վերջին տարվա ընթացքում վեց ամսից ավել աշխատել է ավելի բարձր վարձատրվող աշխատանքի մեջ, ապա ապահովագրական գանձարկղը նրան դասում է գործազրկության այն կարգին, վորը համապատասխանում է այդ բարձր վարձատրվող աշխատանքին (յեթե միայն գործազուրկի կողմից համապատասխան փաստաթղթեր կներկայացվի):

Ծանոթ.—Այն գործազուրկների նկատմամբ, վորոնք նախքան գործազրկությունն աշխատել են այնպիսի ձեռնարկներում, ուր նոր տարիֆային ցանցերն անցկացված չեն յեղել, իրենց ուժը պահպանում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1928 թ. մարտի 5-ին № 179 վորոշմամբ հաստատված նորմաները (Վ.Ա. 1928 թ. № 15):



# III ԿԱՆՈՆՆԵՐ № 8

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՊԱՍՏՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված է ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական խորհրդի կողմից 1927 թ. հունվարի 13-ին, նույն խորհրդի կողմից 1929թ. հոկտեմբերի 19-ի № 351 վորոշմամբ և մինչև այդ մտցրված փոփոխություններով:

1. Սոցիալական Ապահովագրության գծով լրացուցիչ նպաստներ կոչվում են. ա) յերեխայի օժիտի միանվագ նպաստը, բ) յերեխայի ծնվելու օրից 9 ամիս յերեխայի սննդադրամը, (ամսական նպաստ), գ) միանվագ թաղման նպաստը:

2. 1-ին հոդվածում նշված լրացուցիչ նպաստները տրվում են. ա) վարձու աշխատող և լրացուցիչ տեսակների ապահովության յենթակա անձանց, բ) սոցիալական ապահովագրության կարգով հաշմանդամության հետևանքով ապահովված անձանց և սոցիալական ապահովագրության կարգով ընտանիքի ապահովագրված նեցուկի մահվան դեպքում, ապահովված ընտանիքի անդամներին, գ) յերկարամյա ծառայության հետևանքով կենսաթոշակ ստացող ուսուցիչներին, դ) գործազրկության նպաստ ստացող գործազուրկներին, նպաստ ստանալու վերջին ժամկետը լրանալու հետևանքով գործազրկության նպաստ չստացող գործազուրկներին—մինչև նպաստի վճարումը վերականգնման օրը, հասարակական աշխատանքներում զբաղված գործազուրկներին, յեթե նրանք գործազրկության նպաստ ստանալու իրավունք ունեն, աշխատանքի բորսաների հսկողության տակ գտնված ձեռնարկներում և կոլեկտիվներում զբաղված գործազուրկներին, ե) «ա» և «դ» կետերում նշված անձանց Բ.Գ.Կ. բանակի կադրային մասն ընդունելու դեպքում,—յեթե ծննունդը կամ մահը տեղի յեն ունեցել վարձու աշխատանքը դադարեցնելու օրվանից մեկ

ամսվա ընթացքում, իսկ գործազուրկների նկատմամբ—կադրային մասն ուղարկելու համար ժողովման վայրն ուղարկելու օրից,

գ) «ա» և «գ» կետերում նշված այն անձանց, վորոնք պարտադիր զինվորական ծառայությունն անցնելու կարգով զորահավաքի յեն յենթարկված, անկախ աշխատավարձը կամ գործազրկության նպաստն ստանալու հանգամանքից:

ԾԱՆՈԹ.— 1. Սույն հոդվածի «ա», «յե» և «գ» կետերում նշված անձանց լրացուցիչ նպաստներ բոլորովին չեն տրվում, յեթե այդ անձինք յենթակա յեն մասնակի ապահովագրման այն խմբակով, վորի համար լրացուցիչ նպաստների ապահովություն չի սահմանված կամ թե չեն տրվում և լրացուցիչ նպաստների վորոշ տեսակները միայն, յեթե այդ անձինք յենթակա յեն մասնակի ապահովագրման այն խմբակով, վորի համար լրացուցիչ նպաստների այդ տեսակի ապահովություն ե սահմանված:

ԾԱՆՈԹ.— Լրացուցիչ տեսակի ապահովության յենթակա ապահովագրվածներին (սույն հոդվածի կ.կ. «ա», «յե» և «գ») յերեխայի ծննդյան նպաստ (հոդ. 1, կ.կ. «ա» և «բ») տրվում ե այն պայմանով, յեթե նրանց միջին ամսական աշխատավարձը, վորի հաշվով վորոշվում ե ժամանակավոր անաշխատունակության նպաստը, չի գերազանցում տվյալ գոտու համար սահմանված ժամանակավոր անաշխատունակության նպաստից (ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1927 թ. մայիսի 9-ին հաստատված «Ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու և վճարելու մասին» № 122 կանոնների 17-րդ հոդ.):

2. ա) Գյուղական վայրերում ապրող և միաժամանակ գյուղացիական ծխի մեջ մտնող ապահովագրված կանանց և ապահովագրվածների կանանց յերեխայի սննդադրամ չի տրվում, իսկ յերեխայի օժիտի նպաստը տրվում ե միայն այն դեպքում, յեթե այն ծուխը, վորի մեջ նրանք մտնում են,—գյուղատնտեսական հարկով չի հարկադրվում:

2. բ) Թաղման նպաստ չի տրվում այն դեպքում, յերբ մահը տեղի յե ունեցել գյուղական վայրում և միաժամանակ այն անձը, վորին պիտի տրվի նպաստը,—մտնում ե գյուղացիական ծխի մեջ:



3. Յերեխայի ծննդյան նպաստ (հոդ. 1, կ. «ա» և «բ») տըրվում ե այն դեպքում, յերբ ինչպես ապահովագրված կանայք (թոշակառուներ, գործազուրկներ) նույնպես ել ապահովագրվածների կանայք (թոշակառուների, գործազուրկների) յերեխա յեն ծնում:

Թաղման նպաստ տրվում ե ինչպես ապահովագրվածի (գործազուրկի, թոշակառուի) մահվան դեպքում, նույնպես ել ապահովագրվածի (գործազուրկի, թոշակառուի հոդ. 9) ընտանիքի անդամների մահվան դեպքերում:

ԾԱՆՈԹ.— Նպաստ տրվում ե ինչպես ցուցակագրմամբ ամուսնացած ծնողներից յերեխա ծնվելու դեպքերում, նույնպես ել վոչ ցուցակագրմամբ ամուսնացածներից,—յեթե ապահովագրվածի հայրությունը հաստատված ե դատական կարգով կամ ՔԱԳՍ-ի ցուցակագրման միջոցով:

4. Ապահովագրվածին (գործազուրկին, թոշակառուին) յերեխայի ծննդյան նպաստ տրվում ե նաև այն դեպքերում, յեթե յերեխան ծնվում ե ապահովագրվածի (գործազուրկի, թոշակառուի) մահից հետո: Մահացածը համարվում ե յերեխայի հայրը, յեթե ծնվում ե հիշյալի մահվան օրվանից հաշված 9 ամսից վոչ ուշ:

5. Հղիության 7 ամիսը չլրացած վիժման դեպքում,—վոչ մի տեսակի լրացուցիչ նպաստ չի տրվում: Հղիության 7 ամիսը լրանալուց հետո յերեխան մեռած ծնվելու դեպքում,—վճարման յենթակա յե միայն թաղման նպաստը (բայց վոչ օժիտի նպաստը):

6. Յերեխայի ծննդյան նպաստ (յերեխայի օժիտ և սննդադրամ) տրվում ե վարձով աշխատող անձանց պայմանով՝—յեթե ծնողներից մեկն ընդհանուր առմամբ վերջին յերկու տարվա ընթացքում վարձու աշխատել ե վոչ պակաս տասնյերկու ամսից, վորի մեջ ութ ամսից վոչ պակաս անմիջապես յերեխայի ծննդից առաջ: Վարձու աշխատանքի ստաժի մեջ մտնում ե նաև ժամանակավոր անաշխատունակության ապահովության շրջանը:

Սոցիալական ապահովագրության կարգով ապահովված թոշակառու կանանց կամ թոշակառուների կանանց յերեխայի ծննդյան նպաստ տրվում ե անկախ ծնողների վարձու աշխատանքի ստաժ ունենալուց:

Գործազուրկ կանանց կամ գործազուրկների կանանց յերեխայի ծննդյան նպաստ տրվում ե պայմանով՝ յեթե ծնողներից մեկն իրավունք ե ունենում վորպես գործազուրկ ապահովվելու:

ԾԱՆՈԹ.— Այն անձինք, վորոնք իրավունք են ունեցել

նշված նպաստներն ստանալու, վորպես թոշակառու կամ գործազուրկ կին, կամ թե չէ վորպես թոշակառուի կամ գործազուրկի կին և աշխատանքի յեն անցել,—յերեխայի ծննդյան նպաստներով ապահովվում են անկախ նրանից՝ թե մինչև յերեխայի ծնունդը վորքան ժամանակ են վարձու աշխատել:

7. Յերեխայի ծննդյան նպաստ (հոդ. 1, կ. կ. «ա» և «բ») ստանալու իրավունքով օգտվում են. յերեխան ծնողների հետ միասին ապրելու դեպքում—ապահովագրված ծնողը (գործազուրկ, թոշակառու) յերեխան ծնողներից մեկի հետ միասին ապրելու դեպքում,—ծնողներից նա, վորի մոտ գտնվում է յերեխան, յերեխան ծնողներից առանձին ապրելու դեպքում—ըստ ծնողի ցուցմունքի յերեխայի հետ միասին ապրող անձը, վորի խնամքի տակ գտնվում է յերեխան: Ծնողների բացակայության դեպքում, բոլոր վերոհիշյալ իրավունքներն անցնում են խնամակալին:

ԾԱՆՈԹ. — Մոր և մանկան տներում գտնվող յերեխաների համար սննդադրամ չի տրվում, յեթե նրանք մոր կողմից չեն կերակրվում:

8. Ապահովագրվածի (գործազուրկի, թոշակառուի) իրեն մահվան դեպքում նրա թաղման նպաստն ստանալու իրավունքով օգտվում են միայն նրա ընտանիքի հետևյալ անդամները. ապահովագրվածի կինը, ծնողները, յերեխաները, յեղբայրները և քույրերը:

9. Ընտանիքի անդամների թաղման նպաստն ստանալու իրավունքով օգտվում է ինքն ապահովագրվածը (գործազուրկը, թոշակառուն) ապահովագրվածի (գործազուրկի, թոշակառուի) ընտանիքի անդամների թվին, վորոնց թաղման համար ապահովագրական գանձարկղների կողմից նպաստ է տրվում,— պատկանում են ապահովագրվածի խնամքի տակ գտնվող հետևյալ անձինք. 1) կինը, 2) ծնողները, 3) յերեխաները, յեղբայրները և քույրերը, նույնպես նաև ապահովագրվածի ընտանիքի կազմի մեջ մտած ու ըստ ծագման բարեկամների իրավունքներին հավասարեցրած և համաձայն դաշնակից հանրապետությունների օրենսդրության վորդեգրված յերեխաները,—բոլորն էլ պայմանով՝ յեթե 16 տարին չի լրացել (իսկ աշակերտները 18 տարին) կամ յեթե բոլորովին անաշխատունակ են՝ ի ծնե կամ մինչև նրանց 16 տարին լրանալը ստացած ֆիզիքական և մտավոր պակասությունների հետևանքով,



4) տատն ու պապը, յեթե նրանք յերեխաներ չունեն, վորոնք պարտավոր են նրանց պահել:

Ծանոթ. — Խնամքի տակ չեն համարվում այն անձինք, վորոնք ինքնուրույն յեկամտի աղբյուր ունեն (աշխատավարձ, հողաբաժին և այլն):

10. Լրացուցիչ նպաստը յենթակա չէ վճարման, յեթե ծնունդը կամ մահը տեղի չեն ունեցել վարձու աշխատանքի ընթացքում (կամ թե չէ գործազրկության նպաստ ստանալու կամ վերջին ժամկետը լրանալու պատճառով նպաստի մերժման և նպաստի վճարումը վերականգնման միջև յեղած ժամանակամիջոցում, հասարակական աշխատանքներում կամ աշխատանքի բորսաների հսկողության տակ գտնված ձեռնարկներում կամ կոլեկտիվներում յեղած ժամանակ, սոցիալական ապահովագրության կարգով թոշակ ստանալու ժամանակ, զինահավաքն անցնելու ժամանակ). սննդադրամը վճարման յենթակա չէ, յեթե յերեխան ծնվել է մինչև ծնողներից մեկը 2-րդ հոդվածում նշված անձանց շարքն անցնելը, թեկուզ այդ կատարված էլ լինի մինչև յերեխայի 9 ամսական դառնալը:

11. Սննդադրամի վճարումը դադարեցվում է յերեխայի 9 ամսականը լրանալու մոմենտից, իսկ մինչև այդ ժամկետը—նրա ծնողները 2-րդ հոդվածում նշված անձանց շարքից դուրս գալու դեպքում:

12. Յերեխայի ծննդյան նպաստը (հոդ. 1 կ. կ. «ա» և «բ») տրվում է յուրաքանչյուր յերեխայի համար յեթե տեղի է ունեցել զույգի կամ յեռյակի ծնունդ:

13. Յերեխայի ծննդյան նպաստ (հոդ. 1 կ. կ. «ա» և «բ») տրվում է ծննդաբերությունից հետո: Յերեխայի սննդադրամը տրվում է յերկու ամիսը մեկ անգամ—յերկրորդ ամսի վերջին:

14. Յերեխայի օժիտի նպաստը և յերեխայի սննդադրամը տրվում է յերեխայի բնակավայրի ապահովագրական գանձարկղի կողմից ըստ տվյալ վայրի համար սահմանված նորմաների:

15. Յերեխան բնակվելու համար մի այլ վայր փոխադրվելու դեպքում, յերեխայի սննդադրամը տրվում է նոր բնակավայրի ապահովագրական գանձարկղի կողմից, վորպիսին ստանալու համար նպաստն ստացող անձը (հդ. 7) պետք է նախկին բնակավայրի ապահովագրական գանձարկղից տեղեկանք ներկայացնի՝ թե մինչև յերբ է նպաստը տրված: Նման դեպքերում նպաստը տրվում է յերեխայի նոր բնակավայրի համար սահմանված նորմաներով:

16. Թաղման նպաստը տրվում է թաղումը կատարելու վայրի ապահովագրական գանձարկղի կողմից ըստ տվյալ վայրի համար սահմանված նորմաների:

Ծանոթ.—Հոդ. հոդ. 14-ին, 15-ին և 16-ին. գյուղական վայրերում բնակվող անձանց լրացուցիչ տեսակի ապահովության նպաստները տրվում են համապատասխան գոտու քաղաքային կայուն նորմաների յերկու յերրորդականի չափով:

Սույն ծանոթությունը չի տարածվում քաղաքատիպ բանվորական վայրերի, բանվորական և գործարանային ավանների և արդյունաբերական շրջաններում այն բնակեցրած վայրերի վրա, ուր ազգաբնակչության մեծ մասը կազմում են բանվորները, ծառայողները և նրանց ընտանիքի անդամները: Նշված տեղերի ցուցակը, վորոնց վրա չի տարածվում սույն ծանոթությունը կազմըվում է նահանգական գանձարկղի կողմից, (Հայաստանում Հանրապետական Սոցապգանձարկղի կողմից), միջմիութենական կազմակերպության համաձայնությամբ՝ բոլոր յենթակա ապահովագրական գանձարկղների համար:

17. Ապահովագրական գանձարկղը նպաստն ստանալու իրավունք ունեցող անձի համաձայնությամբ յուրաքանչյուր առանձին դեպքում կարող է դրամական նպաստը փոխարինել բնականի վերածված նպաստով, միայն մի պայմանով, վոր բնական նպաստի արժեքը չավելանա հասանելիք դրամական նպաստից:

18. Յերեխայի օժիտի նպաստն ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթեր. 1) փաստաթուղթ, վորն ապացուցի յերեխայի ծնողներից մեկն ու մեկը լրացուցիչ նպաստներով ապահովվելու իրավունք ունեցող անձանց շարքին պատկանելը, (հաշվեգրքույկ, վկայական աշխատանքի վայրից՝ նշված աշխատավարձը, գործադուրկի գրքույկը, թոշակի գրքույկը և այլն) ըստ վորի աշխատանքի վայրից տրված փաստաթղթի վրա պիտի լինի վարձողի նշանառումն այն մասին՝—թե վարձողի կողմից ապահովագրական մուծումները (քանի տոկոս) ինչ չափով են վճարվում. 2) հատուկ վկայական ԶԱԳՍ-ի բաժնից կամ բաժանմունքից յերեխայի ծննդյան մասին:

Յերեխայի սննդադրամը ստանալու համար, բացի նշված փաստաթղթերից, յուրաքանչյուր յերեք ամիսը մեկ անգամ պիտի ներկայացնել տնային վարչությունից, մսուրից, կոնսուլտացիայից և այլն տեղեկանք յերեխայի կենդանի լինելու մասին:



Ծանոթ.—1. Մինչև սույն հոդվածում նշված ԶԱԳՍ-ի բաժինների կամ բաժանմունքների հատուկ վկայականների ամենուրեք մտցնելը, այն դաշնակից հանրապետությունների ապահովագրական մարմինները, վորտեղ այդ վկայականները դեռ մտցված չեն,— նպաստ նշանակում են ԶԱԳՍ-ից տրված իսկական արձանագրության քաղվածքը ներկայացնելու դեպքում, վորի վրա նպաստ նշանակելու մասին նշանառում է արվում:

Ծանոթ.—2. Յերեխայի օժիտի և յերեխայի սննդադրամն ստանալու ժամանակ,—այդպիսին ստանալու իրավունք ունեցող անձինք, պիտի ներկայացնեն յերեխայի բնակավայրի մասին վկայական՝ տրված տնային վարչության, գյուղխորհրդի և այլոց կողմից:

19. Թաղման նպաստը տրվում է. ա) ապահովագրվածի (գործադուրկի, թոշակառուի) մահվան դեպքում յեթե ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը, վորոնք հաստատում են, վոր 1) մահացածը պատկանում է այն անձանց թվին, վորոնց թաղման համար նպաստ է տրվում (հաշվեգրքույկ, վկայական աշխատանքի վայրից, գործադուրկի գրքույկ, թոշակի գրքույկ և այլն), ըստ վորի աշխատանքի վայրից տրված փաստաթղթի վրա պիտի նշանակված լինեն 18-րդ հոդվածի 1-ին կետում նշված տեղեկությունները, 2) մահվան փաստը (ԶԱԳՍ-ի քաղվածքը), 3) ապահովագրվածի թաղումը ուրիշ անձի միջոցով կատարելու փաստը, 4) 8-րդ հոդ. նշված ազգակցականության աստիճանը մահացածի հետ: բ) Ապահովագրվածի (գործադուրկի, թոշակառուի) ընտանիքի անդամի մահվան դեպքում, յեթե ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը, վորոնք հաստատում են՝ վոր ապահովագրվածը պատկանում է այն անձանց թվին, վորոնք իրավունք ունեն ընտանիքի անդամի թաղման նպաստ ստանալու (նույն փաստաթղթերը, վորոնք նշված են սույն հոդվածի կ. 1. մաս «ա»). 2) մահվան փաստը (ԶԱԳՍ-ի քաղվածքը), 3) մահացածի ազգակցականության աստիճանը ապահովագրվածի (գործադուրկի, թոշակառուի) հետ, 4) ապահովագրվածի խնամքի տակ գտնվելու փաստը (տեղեկանք գյուղխորհրդից, տնային վարչությունից, գործարկոմից կամ տեղկոմից և այլն):

20 Լրացուցիչ նպաստ ստանալու իրավունք ունեցող անձի ցանկությամբ, նպաստն ապահովագրական գանձարկղի կողմից

*փոխադրվում և փոստի միջոցով 18-րդ և 19-րդ հոդ. հոդ. նշված փաստաթղթերն ստանալուց հետո։*

21. *Լրացուցիչ նպաստներ ստանալու ժամանակ տեղի ունեցած չարագործությունները հետապնդվում են դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով։ Մահացած յերեխայի համար սննդադրամ ստանալու դեպքում յերեխայի թաղման համար հասանելիք նպաստից հանվում է ավել վճարած սննդադրամի գումարը։*

*Սույն կանոնների մեջ մտցրված փոփոխությունները կիրառկության մեջ են* 1929 *թ. նոյեմբերի* 15*ից և տարածվում են լրացուցիչ նպաստների վճարումների բոլոր դեպքերի վրա—սկսած այդ օրվանից (անկախ ապահովագրական դեպքը տեղի ունենալու ժամանակից)։*

---



# IV ԿԱՆՈՆՆԵՐ

## *ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԸԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

*Հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից* 1929 *թ. հոկտեմբերի* 15-*ին*, № 353։

*Հրատարակված են «տնային տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» ԽՍՀՄ Կենգործկոմի և Ժողկոմխորհի* 1929 *թ. հուլիսի* 17-*ի վորոշման* 2-*րդ հոդվածի հիման վրա (ԽՍՀՄ Որենք. ժողովածու* 1929 *թ.* № 48, *հոդ.* 428)։

### *Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1. *Սույն կանոնները տարածվում են բոլոր այն անձանց վրա, վորոնք տնային տնտեսություններում ոգտվում են վարձու աշխատանքից, մանկապահուհիների, խոհարարուհիների, ծծմայրերի և տնային ծառայողների, վորոնք կատարում են խառն աշխատանքներ։*

*Սույն կանոնները չեն տարածվում այն անձանց վրա, վորոնք ոգտվում են տնային ուսուցչուհիների, դաստիարակչուհիների, դայակների, տնտեսուհիների, նույնպես նաև արտելների, հանրակացարանների, ճաշարան-հյուրանոցների և այլոց վրա, վորոնք ոգտվում են խոհարարուհիների և մաքրողների վարձու աշխատանքով։*

2. *Տնային տնտեսություններում* 1-*ին հոդվածի* 1-*ին մասում նշված աշխատավորների վարձու աշխատանքով ոգտվող վարձողները պարտավոր են ցուցակագրվել սոցիալական ապահովագրության մարմիններում։*

3. 2-*րդ հոդվածում նշված վարձողները, համապատասխան իրենց տնտեսական դրության, բաժանվում են յերեք կարգի։*

*Ա. կարգին դասվում են.*

*ա) Այն բանվորներն ու ծառայողները, վորոնց աշխատավարձը չի գերազանցում միջմիութենական կազմակերպության համա-*

ձայնությամբ տեղական ապահովագրական գանձարկղի կողմից սահմանված չափից:

բ) Պրոֆմիության անդամ գործատուները, վորոնք ցուցակագրված են Աշխժողկոմատի միջնորդ մարմիններում, իսկ այն վայրերում, ուր այդպիսիք չկան,—պրոֆմիությունում—

գ) Այլ գործատուները, վորոնք ապահովագրական գանձարկղից գործազրկության նպաստ են ստանում.

դ) Սոցիալական ապահովագրության և սոցիալական ապահովության կարգով կենսաթոշակ ստացող անձինք.

յե) Վարձով աշխատող սովորողները:

Բ. կարգին դասվում են.

ա) Այն բանվորներն ու ծառայողները, վորոնց աշխատավարձը գերազանցում է Ա. կարգի բանվոր-ծառայող վարձողների համար սահմանված չափից:

բ) Վոչ պրոֆմիության անդամ գործատուները, վորոնք Աշխժողկոմատի միջնորդ մարմիններում (կամ պրոֆմիությունում) ցուցակագրված են, բայց գործազրկության նպաստ չեն ստանում:

գ) Անձնական արհեստագործությամբ զբաղված անձինք, վորոնք կայուն դրույքներով հարկադրված են:

Գ. կարգին դասվում են, մնացած բոլոր վարձողները, վորոնք Ա. և Բ. կարգերի մեջ չեն մտել:

ԾԱՆՈԹ.—Յեթե տնային տնտեսությունում վարձու աշխատանքով ոգտվող ընտանիքում մի քանի հոգի կան, վորոնք կազմելով մի տնտեսություն ինքնուրույն յեկամուտ կամ դրամ են ունենում,—այդ դեպքում տնտեսությանն այս կամ այն կարգին դասելը կատարվում է՝ յելնելով տվյալ ընտանիքի անդամի ամենաբարձր դրամից կամ ամենաբարձր յեկամուտից:

## 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՖԱՅԻՆ ՄՈՒԾԱՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԳԱՆՁԵԼՈՒ ՁԵՎԸ

4. Տնային տնտեսությունում զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մուծանքները վարձողների կողմից վճարվում են տոկոսային հարաբերությամբ, համաձայն 5-րդ հոդվածի սահմանված միջին աշխատավարձի,—հետևյալ դրույքներ.



| Վարձողների կարգերը | %-ային հատկացումներ | |
|---|---|---|
| | Սոցիալական ապահովագրութ. համար | Բան. բնակարանային շինարարության ֆոնդ |
| 1 | 5 | |
| 2 | 10 | |
| 3 | 20 | |

5. 4-րդ հոդվածում նշված մուծանքները վճարվում են վոչ թե աշխատավորներին փաստորեն վճարված աշխատավարձից, այլ ժողովրդական սննդի պրոֆեսիոնալ միության տեղական մարմինների համաձայնությամբ տեղական ապահովագրական գանձարկղի կողմից տվյալ վայրի բոլոր տնային ծառայողների համար սահմանված և դաշնակից հանրապետության Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Գլխավոր Վարչության կողմից հաստատված միասնական միջին աշխատավարձից: Սույն հոդվածում նշված միջին աշխատավարձի մեջ և մտնում ինչպես նրա բնական, նույնպես և դրամական մասը:

6. Ապահովագրական մուծանքների վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամիս՝ տեղական ապահովագրական գանձարկղերի կողմից սահմանված կարգով:

7. Տույժ հաշվելը, ապահովագրական մուծանքներն ու տույժը անվիճելի կարգով գանձելը և վարձողներին պատասխանատվության յենթարկելը կատարվում է «սոցիալական ապահովագրության մուծանքները գանձելու կարգի մասին» ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր սոցիալական ապահովագրության Միութենական Խորհրդի 1929 թ. հունվարի 1-ի № 88 հրահանգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

## 3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ.

8. Տնային տնտեսություններում վարձու աշխատանքով ընգրված, 1-ին հոդվածի 1-ին մասում նշված աշխատավորները, սոցիալական ապահովագրության կարգով ապահովվում են բոլոր սոցիալական ապահովագրվածների հետ ընդհանուր հիմունքներով, ի բաց առյալ հոդ. հոդ. 9—11 հոդվածներով նախատեսված դեպքերից:

9. Հղիության և ծննդաբերության հետևանքով ժամանակավոր անաշխատունակության նպաստ տրվում է պայմանով, յեթե

աշխատավորուհին ընդհանուր առմամբ վարձու աշխատել է մեկ տարուց ոչ պակաս, որից վեց ամիսն անմիջապես մինչև հղիության արձակուրդի սկիզբը:

Ժամանակավոր նպաստ ստանալու ժամանակամիջոցը մտցըվում է վարձու աշխատանքի ստաժի մեջ:

10. Տնային տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստի բոլոր տեսակները վճարվում են յուրաքանչյուր վայրի համար սահմանված միջին աշխատավարձից (հոդ. 5), ելնելով հետևյալ կայուն որական գրույքներից.

| Միջին ամսական աշխատավարձի չափը | Որական նպաստի չափը | |
|---|---|---|
| | Առաջին 5 որվա համար | 6-րդ որից սկսած |
| Մինչև 13 ռ. | 30 կոպ. | 40 կոպ. |
| 13 ռ. բարձր մինչև 15 ռ. | 35 » | 45 » |
| 15 » » » 17 » | 40 » | 55 » |
| 17 » » » 19 » | 45 » | 60 » |
| 19 » » » 21 » | 50 » | 65 » |
| 21 » » » 23 » | 55 » | 75 » |
| 23 » » » 25 » | 60 » | 80 » |
| 25 » » » 27 » | 65 » | 85 » |
| 30 » » » — | 70 » | 95 » |

Սույն հոդվածում նշված նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության հետևանքով բաց թողած բոլոր տոմարային օրերի համար:

11. Կենսաթոշակ հաշվվում է այն միջին աշխատավարձի չափից, որից տվյալ աշխատավորի վերջին վարձու աշխատանքի վայրից ապահովագրական մուծումները հաշված են:

12. Սույն կանոնները կիրարկության մեջ են դրվում 1929 թ. նոյեմբերի 15-ից:

13. Սույն կանոնները կիրարկության մեջ անցնելուց հետո վերանում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1925 թ. հոկտեմբերի 31-ի № 283-926 հրահանգը՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925



թ. սեպտեմբերի 25-ի «տնային տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին» որոշումը, կիրառելու կարգի մասին (ԽՍՀՄ Աշխժողկոմատի տեղ. 1925 թ. № 46):

Սոցիալական Ապահովագրության Միութենական
խորհրդի Նախագահ՝ ԿՈՏՈՎ
Պատասխանատու քարտուղար՝ ՊԵՏՐՈՎ

## V ԿԱՆՈՆՆԵՐ № 397

*Հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում Սոցիալական Ապահովագրության կարգով ապահովվելու մասին. Հաստատված **ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1928 թ. հուլիսի 4-ին:***

### 1-ԻՆ ՄԱՍ

## ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Կայուն անաշխատունակության (հաշմության) դեպքում ապահովվելու պայմաններն ու նորմաները վորոշվում են՝

ա) Անաշխատունակության առաջացման պատճառներից (հոդ. 2-րդ).

բ) Կորցրած անաշխատունակության աստիճանից (հոդ. 7).

2. Ըստ պատճառների հաշմությունները տարբերվում են— առաջացած՝

ա) Դժբախտ պատահարից՝ կապված վարձու աշխատանքի հետ (աշխ. խեղանդամություն հոդ. 3).

բ) Պրոֆեսիոնալ հիվանդություններից (հոդ. 5).

գ) Ընդհանուր պատճառներից (հիվանդություն, վոչ աշխատանքային խեղանդամություն, ծերություն):

3. Դժբախտ պատահարը համարվում է վարձու աշխատանքի հետ կապված, յեթե այդ տեղի յե ունեցել՝

ա) Աշխատավորի կողմից իր սովորական պարտականությունները կատարելու ժամանակ, նույնպես և վարձողի կամ նրա լիազորների կողմից տրված առանձին հանձնարարությունները կատարելու ժամանակ (նաև գործուղման մեջ գտնվելիս).

բ) Հոգուտ հիմնարկ-ձեռնարկի կատարած գործողությունների ժամանակ յեթե նույնիսկ այդ արված է առանց վարձողի կամ նրա լիազորների հանձնարարության.

գ) Հասարակական պարտականություններ կատարելու ժամանակ՝ կապված այն ձեռնարկության կամ հիմնարկության հետ, վորում աշխատավորն զբաղված է վարձու աշխատանքով, նույն-



պես նաև կապված խորհրդային, կուսակցական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների հատուկ հանձնարարությունները կատարելու հետ, թեկուզ այդ հանձնարարությունները տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության հետ կապված էլ չլինեն.

դ) Աշխատանքի ժամերին հիմնարկ-ձեռնարկի տերիտորիայում կամ աշխատանքի այլ վայրում, ներառյալ նաև աշխատանքի սկզբում և վերջում տրվող ընդմիջումները (արտադրության գործիքները, հագուստը և այլն կարգի բերելու համար).

ե) Աշխատանքի ժամերին հիմնարկ-ձեռնարկի մոտերքը կամ աշխատանքի այլ վայրում գտնված ժամանակ, յեթե այդտեղ գտնվելը չեր հակասում ներքին կարգապահության կանոններին.

զ) Աշխատանքի գալու և աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին:

4. Բժշկական կողմից այն անձինք, վորոնց հաշմությունը առաջացել է կապված խոլերայի համաճարակի, բծավոր տիֆի, վորովայնի տիֆի, քութեշի, բորի, սիբիրական խոցի, մալարիայի, համաճարակային ենցեֆալիտի դեմ կռվելու աշխատանքից, ապահովվում են նույն հիմունքներով, ինչ հիմունքներով աշխատանքի վայրում խեղանդամությունից հաշմության ստացած անձինք: Նույն հիմունքներով են ապահովվում նաև անասնաբուժական կողմից այն անձինք, վորոնց հաշմությունն առաջացել է՝ կապված սապի համաճարակի, կատաղության և սիբիրական խոցի դեմ կռվելու աշխատանքների հետ:

5. Սույն կանոնների իմաստով պրոֆեսիոնալ հիվանդություններ համարվում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից հաստատված ցուցակում թված հիվանդությունները (ցուցակը կցված է):

6. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում ապահովվելու իրավունքով ոգտվում են բոլոր այն վարձու աշխատողները, վորոնց վրա տարածվում է լրիվ ապահովագրություն: Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց կամ պրոֆեսիոնալ հիվանդություններից առաջացած հաշմության դեպքում ապահովվելու իրավունքով ոգտվում են այն աշխատող անձինք, վորոնց վրա տարածվում է լրիվ կամ մասնակի ապահովագրություն:

7. Ըստ իրենց աշխատունակությունը կորցնելու աստիճանի աշխանկարները բաժանվում են հետևյալ խմբերի՝

I Աշխանկարներ, որոնք ոչ միայն անընդունակ են որևիցե դաղում բերող աշխատանքի, այլ և իրենց առօրյա բնական կարիքները բավարարելու համար կարոտ են ուրիշի օգնության:

II Աշխանկարներ, որոնք անընդունակ են որևիցե դաղում բերող աշխատանքի, բայց իրենց առօրյա բնական կարիքները բավարարելու համար ուրիշի օգնության կարիքը չեն զգում:

III Աշխանկարներ, որոնք անընդունակ են մշտական վարձու աշխատանքի, բայց կարող են միջոցներ հայթայթել պատահական և թեթև աշխատանքով և յեթե, ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության, սրանց աշխանկարությունը կառաջացնի դաղումի պակասեցում 50%-ից ավելի:

IV Աշխանկարներ, որոնք ընդունակ են շարունակելու վարձու աշխատանքը ցածր աշխատունակությամբ, յեթե, ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության, աշխանկարությունը կառաջացնի դաղումի պակասեցում մոտավորապես 30–50%-ի սահմաններում:

V Աշխանկարներ, որոնք ընդունակ են շարունակելու վարձու աշխատանքը ցածր աշխատունակությամբ, յեթե, ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության, սրանց աշխանկարությունը կառաջացնի դաղումի կրճատում մոտավորապես 15-ից մինչև 30%-ի սահմաններում:

VI Աշխանկարներ, որոնք կարող են շարունակել աշխատանքն ըստ իրենց պրոֆեսիայի, բայց ցածր աշխատունակությամբ, յեթե, ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության, սրանց աշխանկարությունը իրենից կառաջացնի դաղումի կրճատում ոչ ավելի 15%-ից:

8. Աշխատունակությունը կորցրած չեն համարվում այն անձինք, որոնք հաշմության հետևանքով թողնում են նախկին պրոֆեսիան, բայց ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության, կարող են փոխադրվել այլ պրոֆեսիայի աշխատանքի նույն կամ ավելի բարձր աշխատավարձով՝ առանց մասնագիտական վերապատրաստման և պրոտեզի:

9. Ըստ ընդհանուր կանոնի, աշխանկարներին սոցապմարմինները ապահովում են դրամական կենսաթոշակներ վճարելով:

Աշխանկարների համաձայնությամբ դրամական կենսաթոշակների վճարումը կարող է փոխարինվել նրանց հաշմանդամական հիմնարկություններում տեղավորելով:



10. Աշխանկարը հաշմանդամական կոոպերատիվ միավորների մեջ մտնելու դեպքում, Սոցապդանձարկղները կարող են նրանց ցույց տալ աջակցություն՝ նրա փայավճարը կամ դրա մի մասը մուծելով—այն չափով, որ այդ գումարը չանցնի 6 ամսվա կենսաթոշակի գումարի չափից:

Սույն հոդվածի կիրառման կարգը որոշվում է Խորհրդային Միության մեջ մտնող Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից:

11. Սոցապդանձարկղները աշխանկարների համաձայնությամբ կարող են նրանց ուղարկել մասնագիտական հիմնարկներ սովորելու և վերապատրաստվելու համար:

## Բ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

12. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքով օգտվում են այն անձինք, որոնք դասվում են 1-ին յերեք խմբակներից որևիցե մեկին: Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց և պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքով օգտվում են՝ ա) լրիվ ապահովագրության յենթակա անձինք, յեթե նրանք հաշմության վեց խմբակներից որևիցե մեկին են դասվում. բ) մասնակի ապահովագրության յենթակա անձինք, յեթե նրանք դասվում են հաշմության 1-ին յերեք խմբակներից որևիցե մեկին:

13. Հաշմության դեպքում ապահովություն տրվում է՝

ա) Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում՝ պայմանով, յեթե որոշված տևողությամբ վարձու աշխատանքի ստաժ ունի (հոդ. 14):

բ) Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց և պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում—անկախ վարձու աշխատանքի ընդհանուր տևողությունից:

14. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում ապահովություն ստանալու համար պահանջվում է մինչև հաշմության տեղի ունենալը,—լրիվ ապահովագրմամբ անցած վարձու աշխատանք հետևյալ տևողությամբ.

| | | |
|---|---|---|
| Մինչև 20 տարեկանը | — | անկախ ստաժի տևողությունից |
| 20 տ. բարձր մինչև 25 » | — | 2 տարի |
| 25 » » 30 » | — | 3 » |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30 | » | » | » | 35 | » | 4 » |
| 35 | » | » | » | 40 | » | 5 » |
| 40 | » | » | » | 45 | » | 6 » |
| 45 | » | » | » | 50 | » | 7 » |
| | | | | 50-ից բարձր | | 8 » |

15. Վարձու աշխատանքի ստաժի մեջ մտնում են՝

ա) Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարման ժամանակամիջոցը.

բ) Աշխատանքի Բորսաների կոմիտեների կողմից կազմակերպված կոլեկտիվներում և ձեռնարկություններում գործազուրկի անցկացրած ժամանակը:

գ) Հասարակական աշխատանքներում գործազուրկի անցկացրած ժամանակը, յեթե մինչև հասարակական աշխատանքների ուղարկվելը գործազուրկը ստանում եր գործազրկության նպաստ կամ այդպիսին ստանալու իրավունք ուներ:

16. Մասնակի ապահովագրությամբ անցնող աշխատանքների վրա լրիվ ապահովագրություն տարածելու դեպքում—այդ ստաժը, ինչպես նաև մասնակի ապահովագրությամբ անցնելու շրջանը,—մտցվում են 14-րդ հոդվածով պահանջվող ստաժի մեջ:

17. Յերկարատև արձակուրդ, զորապահեստ կամ ծառայությունից ընդմիշտ արձակված միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմի զինվորական ծառայողների նկատմամբ, նույնպես նաև գերազետիկ (сверхсрочная) ծառայության շարքային և կրտսեր հրամանատարական կազմի զինվորական ծառայողների նկատմամբ՝ վարձու աշխատանքի ստաժի մեջ և մտնում իրական զինվորական ծառայությունը հետևյալ հիմունքներով.

ա) Հաշվի յե առնվում մի պայմանով, յեթե տվյալ անձը զինվորական ծառայությունից հետո վարձու աշխատել է, այլև յերկու տարուց վոչ պակաս անընդհատ վարձու աշխատանքի ստաժ ունի, թեկուզ նրա մի մասը մինչև զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակամիջոցում յեղած լինի.

բ) Հաշվառման յենթակա յե բանվորագյուղացիական Կարմիր բանակի շարքերում վորպես շարքային և կրտսեր հրամանատարական կազմի պարտադիր և գերազետիկ (срочная и сверхсрочная) ծառայությունը և բանվորագյուղացիական Կարմիր բանակի շարքերում վորպես միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմի ամբողջ ծառայությունը:



18. Վարձու աշխատանքի ստաժի մեջ չի մտնում (հոդ. 14) ցարական կարգերում և հակահեղափոխական կառավարությունների որոշ վոստիկանատանը, ժանդարմերիայում այլ և այնպիսի պաշտոններում յեղած ծառայությունը, վորոնց դերն է յեղել հեղափոխական շարժման դեմ կռվելը և ԽՍՀՄ Կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 28-ի խորհուրդների ընտրությունների հրահանգի 11-րդ հոդվածի «ի» և «կ» կետերով (ԽՍՀՄ Օրենսգրքի Ժողովածու 1926 թ. № 63, հոդ. 501) թված պաշտոնները: Չի հաշվվում վարձու աշխատանքային ստաժ նաև այդ պաշտոններին նախորդող աշխատանքը:

19. 14-րդ հոդվածով պահանջվող ստաժը հաշվելիս նկատի չի առնվում այն վարձու աշխատանքը, վորը նախորդել է կրոնավորի աշխատանքին, հոգևորական օծվելուն, նաև 3-րդ ու բարձր կարգի պատենտով ինքնուրույն առևտրական գործունեյությամբ կամ արհեստագործությամբ զբաղվելուն կամ թե շահ ստանալու նպատակով ուրիշի աշխատանքը շահագործելուն: Գյուղացիական տնտեսության մեջ օժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1928 թ. ապրիլի 19-ին հաստատած «Գյուղացիական տնտեսություններում օժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին ժամանակավոր կանոնների» հոդ. 1—ԽՍՀՄ Օրենսգրքի Ժողովածու 1925 № 26 հոդ. 183 և 1927 թ. № 60, հոդ. 609) այլ և տնայնագործների ու արհեստավորների մոտ յերկուսից վոչ ավելի աշակերտների աշխատանքի կիրառումը չի կարող հիմք ծառայել դրան նախորդող վարձու աշխատանքը՝ ստաժի մեջ չմտցնելու համար:

20. Վարձու աշխատանքի մեջ հինգ տարուց ավելի տևողությամբ ընդմիջում լինելու դեպքում, մինչև ընդմիջումը կատարած վարձու աշխատանքը,—ստաժը հաշվելիս նկատի չի առնվում: Հնգամյա ընդմիջումի մեջ չի մտնում կրթական հիմնարկներում սովորելու ժամանակամիջոցը, 17-րդ հոդվածի «ա» և «բ» կետերում նշված պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակամիջոցը, նույնպես նաև մասնակի ապահովագրմանը դասված աշխատանքներում գտնվելու ժամանակամիջոցը:

21. Հաշմության դեպքում ապահովություն արվում է՝ յեթե հաշմությունն առաջացել է՝

ա) Վարձու աշխատանք կատարելու շրջանում, կամ այդպիսին թողնելու որից յերկու տարի հետո:

բ) Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճա-

րումը դադարեցնելու օրից ոչ ուշ, քան յերկու տարի հետո, յեթե վարձու աշխատանքը դադարեցված է ժամանակավոր անաշխատունակության շրջանում:

գ) Գործազրկության դեպքում ապահովություն ստանալու շրջանում:

Յեթե բժշկական եքսպերտ մարմինների կողմից հաշմության առաջացման ժամանակը չի պարզվում, այդ դեպքում հաշմության առաջացման օրը հաշվում է հաշմությունը սահմանելու ժամանակից:

22. Սոցիալական ապահովագրության կարգով ապահովվող գործազուրկների (հոդ. 21, կետ «գ») շարքին դասվում են.

ա) գործազուրկներ, վորոնք տվյալ գործազրկության շրջանում նպաստ ստանում են մինչև վերջին ամիսը:

բ) գործազուրկներ, վորոնք ամուսնու խնամքի տակ գտնվելու հետևանքով նպաստ չեն ստանում, բայց վոչ ավելի յերկու տարուց, գործազուրկների համար սահմանված կարգով ցուցակագրըրվելու որվանից հաշված:

գ) գործազուրկներ, վորոնք զբաղված են Աշխբորսաների կոմիտեների կողմից կազմակերպված կոլեկտիվներում և ձեռնարկություններում:

դ) գործազուրկներ, վորոնք զբաղված են հասարակական աշխատանքներում, յեթե միայն նրանք մինչև հասարակական աշխատանքի ուղարկվելը ստանում եյին գործազրկության նպաստ կամ այդպիսին ստանալու իրավունք ունեյին:

23. Կենսաթոշակ չի նշանակվում, յեթե հաշմությունն առաջացել է այդ անձնավորության հանցագործության հետևանքով, նաև յեթե հանցավորը դատարանի վորոշմամբ դատապարտված է պարտադիր աշխատանքների կամ ազատազրկման յերկար ժամանակով:

Պարտադիր աշխատանքների կամ ազատազրկման ժամկետները, վորոնց ընթացքում կենսաթոշակ չի նշանակվում՝ վորոշվում է Խորհրդային Միության մեջ մտնող Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից, համաձայն տվյալ դաշնակից հանրապետության քրեյական օրենսգրքով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցների:

24. Հաշմության կենսաթոշակ չի նշանակվում այն անձանց, վորոնք կենսաթոշակի մասին դիմում տալու ժամանակ զբաղված



են լինում 3-րդ կամ բարձր պատենտի ինքնուրույն առևտրական գործունեյությամբ, ինքնուրույն արհեստագործությամբ կամ թե շահ ստանալու նպատակով ոգտվում են ուրիշի վարձու աշխատանքով:

Գյուղացիական տնտեսությունների մեջ օժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1928 թ. ապրիլ 18-ին հաստատված «Գյուղացիական տնտեսություններում օժանդակ ժամանակավոր վարձու աշխատանքի կիրառման պայմանների մասին կանոնների» հոդ. 1—ԽՍՀՄ Օրենսգրքի ժողովածու 1925 թ. № 26, հոդ. 183 և 1927 թ. № 609), այլ և արհեստավորների և տնայնագործների մոտ յերկու աշակերտից վոչ ավելի աշխատանքի կիրառումը չի կարող կենսաթոշակ նշանակելուն խոչընդոտ հանդիսանալ:

25. Այն անձնավորությունը, վորն ունի իրավունք կենսաթոշակ ստանալու մի քանի հիմունքներով (օրինակ՝ անհատական կենսաթոշակ, ուսուցչական, հաշմության և այլն), այդպիսիներին իրավունք է տրվում ընտրելու դրանցից վորևիցե մեկը:

26. Հաշմության կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները պետք է տրվեն ապահովագրական դանձարկղներին վոչ ուշ, քան վարձու աշխատանքը թողնելուց կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցնելուց յերկու տարի հետո (յեթե վարձու աշխատանքը թողնված է ժամանակավոր աշխատունակության շրջանում) կամ թե գործազրկության ապահովության ստանալու շրջանում (հոդ. 22):

Սույն հոդվածում հիշված ժամկետից ուշ դիմելու դեպքում, զրկվում են սոցիալական ապահովության կարգով հաշմության դեպքում ապահովվելու իրավունքից:

27. Բացառիկ դեպքերում, դրա համար հատուկ հարգելի հիմքեր ունենալով, Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատների Գլխսոցապվարչություններն իրավունք ունեն վերականգնելու կենսաթոշակի մասին դիմելու 26-րդ հոդվածով սահմանված ժամկետի վաղեմությունը:

Բաց թողնված ժամկետը վերականգնելու կարգը վորոշվում է Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից:

## Գ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ.

28. Լրիվ ապահովագրությամբ անցնող անձանց կենսաթոշա-

կի չափը վորոշվում է մինչև աշխատանքի թողնելը կամ աշխատանքի ընթացքում հաշմության առաջանալը նրանց յերկու տարվա ընթացքում կատարած վերջին 12 ամսվա վարձու աշխատանքի միջին ամսական աշխատավարձից։

Այն անձինք, վորոնք վերջին յերկու տարվա ընթացքում 12 ամսից քիչ են աշխատել, կենսաթոշակը հաշվվում է նրանց աշխատած ժամանակի միջին ամսական դաշումից։ Այդ դեպքում հաշվի առնվող դաշումը չպետք է գերազանցի տվյալ անձի վերջին աշխատանքի տարիֆային դրույքի մեկ ու կես չափից (կամ նույն վորակի և պրոֆեսիայի անձի)։

29. Սեզոնային պրոֆեսիայի բանվորների կենսաթոշակը, վորոնք զբաղված են լրիվ ապահովագրության, հաշվվում են նրանց միջին ամսեկան դաշումից, վորն ստացվում է սեզոնային դաշումը 12-ի վրա բաժանելով։ Սեզոնային դաշումը համարվում է ամբողջ սեզոնի ընթացքում տվյալ պրոֆեսիայի վարձու աշխատանքի ընդհանուր դաշումը (հոդ. 30)։

Յեթե վերջին տարվա ընթացքում տվյալ անձնավորությունն աշխատել է վոչ լրիվ սեզոն, այդ դեպքում պակասող ժամանակամիջոցի համար վերցվում է համապատասխան թվով նախորդ տարվա վերջին ամիսների դաշումը։ Յեթե այդ անձնավորությունը վերջին յերկու տարվա ընթացքում ընդհանուր առմամբ մի լրիվ սեզոնից քիչ է աշխատել, այդ դեպքում նրա սեզոնային դաշումը հաշվվում է՝ աշխատած ժամանակամիջոցի միջին ամսական աշխատավարձը բազմապատկելով տվյալ պրոֆեսիայի սեզոնի տևողության վրա (հոդ. 30)։ Վերջին դեպքում հաշվի առած միջին ամսական դաշումը չպետք է գերազանցի տվյալ անձի մինչև վարձու աշխատանքի դադարեցնելը նրա տարիֆային դրույքի մեկ ու կես չափից (կամ նրա հետ միահավասար կվալիֆիկացիայի և նույն պրոֆեսիա ունեցող անձի)։

30. Սեզոնային պրոֆեսիայի ցուցակը, նույնպես և նրանց աշխատանքի տևողությունը սահմանվում են անմիջականորեն Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատների Գլխավոր վարչությունների յենթակա Սոցապդանձարկղների կողմից, իսկ տրանսպորտում՝ յերկաթուղային, ջրային, յերկաթուղային և ջրաշրջանային ապահովագրական դանձարկղների կողմից՝ համաձայնեցնելով համապատասխան արհմիության հետ։

Այդ առթիվ ծագած տարաձայնությունները լուծվում են տեղական աշխբաժինների (կամ Աշխժողկոմատի համապատասխան



մարմինների) և միջմիութենական միավորների համաձայնությամբ, իսկ տրանսպորտում ծագած տարաձայնությունները լուծվում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից։

31. Բոլոր դեպքերում միջին ամսական դաշումը հաշվելիս, (հոդ. հոդ. 28 և 29) դաշումի մեջ են մտնում ժամանակավոր անաշխատունակության նպաստները, իսկ նպաստ ստանալու ժամանակամիջոցը, մտցվում է վարձու աշխատանքի ստաժի մեջ։

32. Մինչև 18 տարեկան հասակը անկարացած անձանց կենսաթոշակը հաշվվում է ընդհանուր հիմունքներով։ Այդ անձանց 18 տարին լրանալուց հետո կենսաթոշակի չափը վերանայվում է և հաշվվում է յելնելով համապատասխան պրոֆեսիոնալ միության հասակավոր սևագործ բանվորի միջին դաշումից, բայց վոչ պակաս նրա նախորդ կենսաթոշակից։

33. Բարձր վորակի աշխատանքի մեջ 5 տարուց վոչ պակաս աշխատած անձանց, վորոնք փոխադրվել են ցածր վորակի աշխատանքի, կենսաթոշակը հաշվվում է նրանց նախկին դաշումից, յեթե միայն բարձր վորակի աշխատանքը թողնելու օրվանից անցել է վոչ ավելի քան 4 տարի՝ 15 տարվա ընդհանուր ստաժ ունեցողների համար և վոչ ավելի քան 3 տարի՝ 15 տարուց պակաս ստաժ ունեցողների համար։

34. Այն աշխանկարները, վորոնք վարձու աշխատանք են կատարում և նրանց այժմյան վարձատրությունը գերազանցում է նախկին աշխատավարձից, այդ դեպքում կենսաթոշակ նշանակվում է, յելնելով նրանց նոր աշխատավարձից, յեթե միայն տվյալ անձնավորությունը այդ բարձր աշխատավարձով աշխատում է 2 տարուց վոչ պակաս։

35. Աշխատավարձի գումարի մեջ, վորից յելնելով հաշվվում է կենսաթոշակը, մտնում են (հոդ. հոդ. 28 և 29), բոլոր այն ձևի վարձատրությունները, վորոնցից, համաձայն գործող օրենսդրության, գանձվում են ապմուծանքներ։

36. Ընդհանուր պատճառներից անաշխատունակությունը կորցրած աշխանկարների համար, վորոնք ունեն ներքևում նշված տևյալ չափով՝ ամսական դաշումը, կենսաթոշակ նշանակվում է ամսական հետևյալ չափով՝

ա) Տաս ուբլուց վոչ ավելի դաշում ունեցող առաջին, յերկրորդ և յերրորդ կարգի աշխանկարներին լրիվ դաշումի չափով։

բ) Տաս ուբլուց ավել, բայց 14 ուբլուց վոչ բարձր դաշում

ունեցող առաջին և յերկրորդ կարգի աշխանկարներին լրիվ դադումի չափով, իսկ 3-րդ կարգի աշխանկարներին 10 ռուբլու չափով։

գ) 14 ռուբլուց ավել, բայց վոչ բարձր 20 ռուբլուց դադում ունեցող 1-ին կարգի աշխանկարներին—լրիվ դադումի չափով, 2-րդ կարգի աշխանկարներին 14 ռուբլու չափով, իսկ 3-րդ կարգի աշխանկարներին—10 ռուբլու չափով։

դ) 20 ռուբլուց ավել, բայց վոչ բարձր 1-ին և 2-րդ գոտում 40 ռուբլուց, իսկ 3-րդ և 4-րդ գոտում 30 ռուբլուց դադում ունեցող 1-ին խմբի անկարներին լրիվ դադումի չափով, 2-րդ խմբի աշխանկարներին—դադումի $2/3$-ի չափով, իսկ 3-րդ խմբի աշխանկարներին դադումի $1/2$-ի չափով։

յե) Ներքոհիշյալ չափերով դադում ունենալու դեպքում՝

| | Ամսական կենսաթոշակի չափը | | |
|---|---|---|---|
| | 1 խումբ | 2 խումբ | 3 խումբ |
| 1 և 2 գոտիներում 40 ռ. մինչև 60 ռ. դադում ունեցողներին . . | 40 ռ. | 27 ռ. | 20 ռ. |
| 3 և 4 գոտիներում 30 ռ. մինչև 45 ռ. դադում ունեցողներին . . | 30 ռ. | 20 ռ. | 15 ռ. |
| 5 և 6 գոտիներում 20 ռ. մինչև 30 ռուբլի դադում ունեցողներին | 20 ռ. | 14 ռ. | 10 ռ. |

37 Ընդհանուր պատճառներից աշխատունակությունը կորցրած անկարներին, յեթե նրանց ամսական դադումը առաջին և յերկրորդ գոտիներում գերազանցում է 60 ռուբլուց, 3-րդ և 4-րդ գոտիներում գերազանցում է 45 ռուբլուց և 5-րդ ու 6-րդ գոտիներում 30 ռուբլուց (36-րդ հոդվածում կետ «յե»)— կենսաթոշակ նշանակվում է հետևյալ չափով՝

1-ին խմբի աշխանկարներին դադումի $2/3$-ը
2-րդ » » » $4/9$-ը
3-րդ » » » $1/3$-ը

38. Լրիվ ապահովագրմամբ անցնող այն աշխանկարներին վորոնց հաշմությունը առաջացել է աշխատանքի վայրում խեղանդամության հետևանքով կամ պրոֆեսիոնալ հիվանդություններից, կենսաթոշակ նշանակվում է հետևյալ չափով.



1-ին խմբի խեղանդամներին լրիվ դադումը
2-րդ » » » » $3/4$-րդը
3-րդ » » » » $1/2$-րդը
4-րդ » » » » $1/3$-րդը
5-րդ » » » » $1/6$-րդը
6-րդ » » » » $1/10$-րդը

39. Մասնակի ապահովագրմամբ անցնող խեղանդամներին կենսաթոշակ նշանակվում է հետևյալ չափերով՝

| | Մասնակի ապահովագ. 1-ին խումբ | Մասնակի ապահովագ. 2-րդ խումբ |
|---|---|---|
| Խեղանդամության 1-ին խումբ | 20 ռ. | 12 ռ. |
| » 2-րդ » | 15 ռ. | 9 ռ. |
| » 3-րդ » | 10 ռ. | 6 ռ. |

40. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակը հաշվելու ժամանակ, այն անձանց, վորոնց դադումը գերազանցում է 1, 2 և 3-րդ գոտիներում 225 ռուբլուց և 4, 5 և 6-րդ գոտիներում 180 ռուբլուց—կենսաթոշակը հաշվվում է յելնելով հիշյալ առավելագույն դադումից՝ ըստ համապատասխան գոտիների։

Աշխատանքային խեղանդամությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության կենսաթոշակը հաշվելու ժամանակ այն անձանց, վորոնց դադումը գերազանցում է 225 ռուբլուց (անկախ գոտուց)—կենսաթոշակը հաշվվում է յելնելով 225 ռուբլի դադումից։

41. Այն դեպքերում, յերբ խեղանդամության կամ պրոֆհիվանդության հետևանքով առաջացած հաշմությունն ուժեղանում է ընդհանուր հիվանդությունների հետևանքով (անկախ աշխատանքի խեղանդամությունից և պրոֆ հիվանդությունից) այդ դեպքում կենսաթոշակ նշանակվում է ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության հիմունքներով, բայց վոչ պակաս քան նրան հասնում է խեղանդամությունից և պրոֆ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում։

42. Առավելագույն և կայուն կենսաթոշակների չափերն ըստ

դամների (հոդ. 36, կետ «դ» և «յե» և հոդ. 40), վորոշվում են ըստ աշխանկարի վերջին աշխատանքի վայրի դատը:

Ծանոթություն.—ԽՍՀՄ արտասահմանում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների մեջ յեղած ան-կարների համար վերջին աշխատանքի վայրը համարվում է այն վայրը, վորտեղ գտնվում է համապատասխան կենտրոնական իշխանությունը ԽՍՀՄ-ում:

43. Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց և պրոֆ հիվանդություններից առաջացած հաշմության կենսաթոշակը (հոդ. 38) առաջին յերեք խմբակների համար չի կարող ցածր լինել 36-րդ հոդվածի հիման վրա ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակի չափից:

44. Աշխանկարի անաշխատունակության դրության մեջ փոփոխության տեղի ունենալու դեպքում, կենսաթոշակի չափը վերանայվում է՝ համապատասխան հաշմության նոր կարգի:

45. Աշխանկարի մի վայրից մյուսը տեղափոխվելը, նշանակված կենսաթոշակի չափի մեջ փոփոխություն չի մտցնում:

## Դ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.

46. Ժամանակավոր անաշխատունակության շրջանում առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակ նշանակվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցնելու որից, յեթե կենսաթոշակ նշանակելու մասին դիմում հարուցվում է 3 ամսից վոչ ուշ:

Կենսաթոշակի համար դիմում հարուցելու բաց թողած ժամկետը վերականգնելու դեպքում (հոդ. 27) կենսաթոշակ նշանակվում է ժամկետի վերականգնման որից:

Մնացած բոլոր դեպքերում կենսաթոշակ նշանակվում է դիմում տալու որից:

47. Նշանակված կենսաթոշակներն իր ժամանակին չպահանջելու դեպքում, անցած ժամանակի համար վճարումը կատարվում է վոչ ավելի, քան այդ մասին ապահովագրական դանձարկղը դիմելու որվանից վեց ամիս հետո ժամանակամիջոցի համար:

Մահանալու հետևանքով թոշակառուի կողմից չստացված կենսաթոշակի վճարման կարգը վորոշվում է Միութենական Հանրապետությունների Որենսդրությամբ:

48. Հաշմության կարգը փոխվելու դեպքում, նոր չափով



կենսաթոշակ վճարվում է բժշկական եքսպերտ մարմնի կողմից վորոշում կայացնելու հաջորդ ամսից:

Յեթե ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակ ստացող հաշմանդամը փոխադրվում է հաշմանդամության 4, 5 և 6-րդ կարգը և դրա հետևանքով դադարում է կենսաթոշակ ստանալ,—հետագայում նրան, 1. 2 և 3-րդ կարգը փոխադրելու դեպքում, կենսաթոշակի վճարումը վերականգնում է մի պայմանով միայն, յեթե վերջին վճարման որվանից անցած է լինում հինգ տարուց վոչ ավել: Հակառակ պարագային, կենսաթոշակ նրան կարող է նշանակվել նորից դիմելու պայմանով միայն, ընդհանուր հիմունքներով:

49. Անկարները զրկվում են կենսաթոշակից՝ ա) առանց հարգելի պատճառների 54-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված ժամկետին վերաքննմանը չներկայանալու դեպքում, կամ վոչ հարգելի պատճառով վերաքննմանը կրկնակի չներկայանալու դեպքում: բ) 3-րդ կամ բարձր կարգի պատենտով ինքնուրույն առևտրական գործունեությամբ կամ ինքնուրույն անձնական արհեստական գործունեությամբ զբաղվելու դեպքում, այլ և շահ ստանալու նպատակով ուրիշի վարձու աշխատանքը շահագործելու դեպքում:

Գյուղացիական տնտեսության մեջ ոժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1928 թ. ապրիլի 18-ին հաստատած «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին ժամանակավոր կանոնների» հոդ. 1-ին—ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1925 թ. № 26, հոդ. 183 և 1927 թ. № 60, հոդ. 609), նույնպես և տնայնագործների և արհեստավորների մոտ յերկուսից վոչ ավելի աշակերտների վարձու աշխատանքի կիրառումը չի կարող հիմք ծառայել կենսաթոշակից զրկելու համար:

50. Աշխանկարի կողմից կենսաթոշակ չստանալը, անկախ այդպիսին չստանալու ժամկետից—չի կարող հիմք ծառայել նրան կենսաթոշակից զրկելու համար:

## ԴԱԴՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
## Ժե. ԱՇԽԱՆԿԱՐՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.
## ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ

51. Ընդհանուր պատճառների հետևանքով հաշմացածների թոշակի վճարումը կասեցվում է.

ա) Անձնական արհեստագործությամբ կամ առևտուրով զբաղվող և պետական արհեստագործական հարկի կայուն դրույքներով

հարկադրված (ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1928 թ. օգոստոսի 10-ին հաստատված պետական արհեստագործական հարկի մասին կանոնադրության հոդ. 2 և կանոնադրության 1-ին հավելված (ԽՍՀՄ Օրենք. Ժողով. 1928 թ. № 50, հոդ. 443) հաշմանդամները:

բ) Գյուղացիական կուլակային ծխի մեջ մտնող հաշմանդամները, վորոնք տուրքադրվում են գյուղատնտեսական ընդհանուր հարկով կամ անհատական կարգով, անկախ նրանից՝ թե նրանք ապրում են քաղաքում կամ գյուղական վայրում:

51. ա) Աշխատունակությունը ընդհանուր պատճառների հետևանքով կորցրած հաշմանդամները, վորոնք մտնում են գյուղատնտեսական հարկով հարկադրվող գյուղացիական ծխի մեջ (բացի 51-րդ հոդվածի «բ» կետում նշվածներից) անկախ նրանից՝ թե նրանք քաղաքում կամ գյուղական վայրում են ապրում,—թոշակի չափը կրճատվում է:

ա) 25%-ով, յեթե ծխի յեկամուտը չի գերազանցում գյուղատնտեսական հարկով չհարկադրվող յեկամուտի մինիմումից:

բ) 50%-ով, յեթե ծխի յեկամուտը մինիմումից ավելի յե, բայց չի գերազանցում գյուղատնտեսական հարկով չհարկադրվող կրկնակի մինիմումից:

գ) 75%-ով, յեթե ծխի յեկամուտը գերազանցում է գյուղատնտեսական հարկով չհարկադրվող կրկնակի մինիմումից:

Գյուղացիական ծխի մեջ մտնող, բայց կոլտնտեսությունները մտած անձանց թոշակը վճարվում է լրիվ, առանց սույն հոդվածով սահմանված սահմանափակումների:

Սույն հոդվածի կարգով գյուղատնտեսական հարկով հարկադրվող ծխի յեկամուտի հաշվառումը կատարվում է հարկային մարմինների տվյալներով: Այդ դեպքում հաշվեառման յենթակա չե հաշմանդամի և նրա ընտանիքի անդամների կողմից ստացվելիք աշխատավարձի և թոշակի գումարները:

52. Ի բաց առյալ 51 և 51ա հոդվածներով նախատեսված դեպքերի, ընդհանուր պատճառների հետևանքով աշխատունակությունը կորցրած հաշմանդամը դադում կամ այլ յեկամուտ ունենալու դեպքում,—թոշակ նրան տրվում է այն չափով, վոր թոշակի և դադումի կամ այլ յեկամուտների գումարը չգերազանցի ընդհանուր առմամբ նրա նախկին աշխատավարձն ու համենայն դեպս չգերազանցի 180 ռուբլուց:

53. Կոոպերատիվ միավորների մեջ մտած աշխանկարների



կենսաթոշակի վճարումը դադարեցվում է այն ժամանակամիջոցի ընթացքում, վորի համար ապահովագրական գանձարկղի կողմից վճարված է աշխանկարի փայավճարը: Հետագայում 52-րդ հոդվածի հիման վրա կատարվում է աշխատանքի անկարի յեկամուտների հաշվառում, յեթե հաշմությունը առաջացել է ընդհանուր պատճառներից:

54. Ապահովագրական գանձարկղների կամ բժշկական եքսպերտ մարմինների կողմից նշանակված վերաքննությանը առանց հարգելի պատճառի չներկայանալու դեպքում, կենսաթոշակի վճարումը դադարեցվում է: Կենսաթոշակի վճարումը նորից վերականգնվում է, յեթե թոշակառուն ներկայանում է վերաքննության վոչ ուշ, քան նախկին վերաքննության որից մի տարի հետո:

55. Միայնակ աշխանկարը վեց ամսից ավելի հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններում ձրիաբար մնալու դեպքում,—նրան հասնելիք կենսաթոշակի չափը սկսած 7-րդ ամսից կրճատվում է մինչև 10 ռուբլի: Հոգեկան հիվանդությունների բուժական հաստատությունից աշխանկարի դուրս գրվելու դեպքում, նրան վճարվում է կենսաթոշակի չափը կրճատելու հետևանքով գոյացած պակաս գումարը, բայց վոչ ավելի քան 6 ամսվա համար: Բոլոր մնացած աշխանկարներին այդպիսի դեպքերում կենսաթոշակը—վճարվում է առանց փոփոխության:

56. Կալանքի տակ առնված միայնակ աշխանկարների կենսաթոշակի վճարումը դադարեցվում է նրա կալանավորման յերկրորդ ամսից սկսած մնացած բոլոր ժամանակի համար: Միայնակ աշխանկարի արդարանալու կամ նրա գործը կարճվելու դեպքում կենսաթոշակ վճարվում է այն ամբողջ ժամանակամիջոցի համար, վորի ընթացքում այդպիսինը դադարեցված եր, բայց վոչ ավել վեց ամսից:

57. Ապահովագրական գանձարկղների կողմից ամբողջ ծախսով ուսումնական հաստատություններում տեղավորված միայնակ աշխանկարներին (հոդ. 11) ուսման ժամանակամիջոցում կենսաթոշակը չի վճարվում: Ընտանիքավոր աշխանկարների նկատմամբ, այդպիսի դեպքերում կենսաթոշակ վճարվում է նույն չափով:

58. 55-ից—57 հոդվածների իմաստով միայնակներ հաշվում են այն աշխնկարները, վորոնք իրենց խնամքի տակ չունեն ընտանիքի անդամներ, վորոնք նեցուկը կորցնելու դեպքում յենթակա

լինելուն ապահովության՝ սոցիալական ապահովագրության կարգով:

59. Հաշմանդամական հիմնարկներում տեղավորված աշխանկարներին կենսաթոշակի վճարումը դադարեցվում է (հոդ. 9):

60. ԽՍՀՄ քաղաքացի թոշակառուներին, որոնք դուրս են գնում ԽՍՀՄ սահմաններից, վեց ամսվա կենսաթոշակը վճարվում է առաջ: ԽՍՀՄ սահմաններից հետագա բացակայության դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցվում է: Օտարահպատակ քաղաքացի թոշակառուների կենսաթոշակի վճարումը շարունակվում է, յերբ նրանք գտնվում են ԽՍՀՄ սահմաններից դուրս:

61. Անկախ դադարեցման տևողությունից, կենսաթոշակի վճարումը վերականգնվում է այդպիսինի դադարեցման պատճառները վերանալու օրից:

Սակայն 51-րդ հոդվածի «բ» կետում նշված թոշակառուները գյուղացիական ծխից դուրս գալու դեպքում, թոշակի վճարումը նրանց վերսկսվում է ոչ շուտ քան ծխից դուրս գալու օրվանից հաշված,—մինչև հինգ տարին լրանալը: 51ա հոդվածի «ա», «բ» և «գ» կետերում նշված թոշակառուները գյուղացիական ծխից դուրս գալու դեպքերում, թոշակի վճարումը նրանց լրիվ չափով սկսվում է ոչ շուտ, քան ծխից դուրս գալու օրվանից հաշված, մինչև յերկու տարին լրանալը:

---



## 2-ՐԴ ՄԱՍ

## ՆԵՑՈՒԿԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

62. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվելու իրավունքով օգտվում են ընտանիքի հետևյալ անդամները.

ա) Յերեխաները, յեղբայրները և քույրերը մինչև 16 տարին լրանալը, իսկ յեթե սովորում են մինչև 18 տարին:

բ) Անաշխատունակ յերեխաները, յեղբայրները և քույրերը որոնք աշխատունակությունը կորցրել են մինչև 16 տարեկան դառնալը:

գ) Ծնողները և ամուսինը, որոնք անաշխատունակ են, կամ հասել են—տղամարդիկ 60 տարեկան հասակի, իսկ կանայք 55 տարեկան:

դ) Ծնողներն ու ամուսինը, որոնք չնայած աշխատունակ են, բայց զբաղված են նեցուկի 8 տարեկան չհասած յերեխաներին, յեղբայրներին կամ քույրերին խնամելով:

Որդեգրվածների կամ որդեգիրների ապահովվելու խնդիրը լուծվում է Միութենական Հանրապետությունների Օրենսդրության համաձայն:

63. Ընտանիքի նեցուկ կորցնելու դեպքում ապահովություն տրվում է հետևյալ դեպքերում՝ ա) նեցուկի մահանալու դեպքում, բ) նեցուկի անհետ կորչելու դեպքում:

Նեցուկի անհետ կորչելու դեպքում ապահովություն տրվում է պայմանով, յեթե անհետանալը հաստատված է դատարանով՝ Միութենական Հանրապետությունների Օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Անհետանալը հաստատվելու օր համարվում է այն օրը, յերբ դատարանը լուծում է կայացնում տվյալ անձին համարել անհետ կորած:

64. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվելու պայմաններն ու նորմաները լուծվում են՝ նեցուկը կորցնելու պատճառներից յելնելով (ընդհանուր պատճառներ, աշխատանքային խեղան-

դամություն, պրոֆեսիոնալ հիվանդություն) և նայած ընտանիքի անդամների թվին, ըստ վորում, յեթե անհետանալը վարձու աշխատանքի հետ է կապված՝ ապահովության նորմաներն ու պայմանները հավասարեցվում են աշխատանքային խեղանդամությունից մահանալու նորմաներին, իսկ յեթե անհետանալը կապ չունի աշխատանքի հետ, այդ դեպքում, ապահովության նորմաները հավասարեցվում են ընդհանուր պատճառներից առաջացած մահացության նորմաներին:

65. Բժշկական կազմի ընտանիքի անդամները, յեթե նեցուկի մահացությունը կապված է խոլերայի համաճարակի, բծավոր տիֆի, վորովայնային տիֆի, քութեշի, բորի, սիբիրական խոցի, մալարիայի կամ թե համաճարակային էնցեֆալիտի դեմ տարվող պայքարի հետ—ապահովվում են նույն հիմունքներով, ինչ հիմունքներով աշխատանքային խեղանդամությունից կամ պրոֆ. հիվանդությունից նեցուկը կորցրած ընտանիքի անդամները: Նույն հիմունքներով են ապահովվում նաև անասնաբուժական կազմի ընտանիքի անդամները, յեթե նեցուկի մահը կապված է սապի համաճարակի, կատաղության կամ սիբիրական խոցի դեմ պայքարելու աշխատանքների հետ:

66. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվության յենթակա յեն՝

ա) Վարձու աշխատանքով զբաղված անձանց ընտանիքները, վորոնք անցնում են լրիվ ապահովագրությամբ:

բ) Սոցիալական ապահովագրության կարգով ապահովվող գործադուլների, (հոդ. 22) աշխանկարների (հոդ. 67) ընտանիքները, վորոնք անցնում են լրիվ ապահովագրությամբ:

գ) Մասնակի ապահովագրությամբ անցնող անձանց ընտանիքները, յեթե նեցուկի մահն առաջացել է աշխատանքային խեղանդամությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից:

67. Սոցիալական Ապահովագրության կարգով ապահովվող (հոդ. 66, կետ «բ») անկարներին հավասարեցվում են՝

ա) Սոցիալական ապահովագրության մարմիններից կենսաթոշակ ստացող աշխատանքի հերոսները:

բ) Աշխատանքի անկարները, վորոնց կենսաթոշակի վճարումը դադարեցված է:

գ) Աշխանկարները, վորոնք իրենց նշանակված կենսաթոշակը չեն ստանում, յեթե նրանք կենսաթոշակը չեն ստացել առանց ընդմիջումի մեկ տարուց ավելի:



դ) Աշխանկարները, վորոնք յենթակա յեն սոցիալական ապահովագրության կարգով ապահովության, բայց չեն ստանում այդ ապահովությունը, պետական այլ մարմիններից կենսաթոշակ ստանալու հետևանքով:

յե) Լուսավորության աշխատավորները և բժշկական ու անասնաբուժական աշխատավորները, վորոնք, համաձայն հատուկ օրենքների, ապահովվում են յերկարամյա ծառայության հետևանքով:

զ) Մանվածքային, լեռնային և մետաղի արդյունաբերության մեջ աշխատող բանվորները, վորոնք համաձայն հատուկ օրենքի ապահովվում են ծերության հետանքով:

68. Նեցուկը կորցրած ընտանիքի անդամները ապահովվում են դրամական կենսաթոշակներով: Դրամական կենսաթոշակը թոշակառույի համաձայնությամբ (իսկ յեթե անչափահաս են, նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ) կարող է փոխարինվել թոշակառույին հաշմանդամական հիմնարկում տեղավորելով:

Անչափահասները, վորոնք չեն հասել 16 տարեկանի, նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ կարող են տեղավորվել Միութենական Հանրապետությունների Լուսժողկոմատների կամ Առժողկոմատների փակ հիմնարկություններում: Այդ դեպքում նեցուկը կորցրածի ընտանիքի կենսաթոշակ հաշվելիս հիշյալ հիմնարկներում տեղավորվածները հաշվի չեն առնվում:

## Բ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

69. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովություն տրվում է 62-րդ հոդվածում հիշված անձանց, յեթե նրանք գտնվում եյին մահացածի կամ անհետ կորածի խնամքի ներքո:

Յերկու ծնողների խնամքի տակ գտնվող յերեխաներին ապահովություն տրվում է ծնողներից յուրաքանչյուրին կորցնելու դեպքում: Ընտանիքի մնացած անդամներին, վորոնք գտնվում են մի քանի անձանց խնամքի տակ, ապահովություն տրվում է միայն այն կերակրող ձեռքը կորցնելու դեպքում, վորի խնամքի տակ գերազանցապես գտնվում եյին հիշյալ ընտանիքի անդամները:

70. Նեցուկը կորցնելու դեպքում ընտանիքի անաշխատունակ անդամները (62-րդ հոդվածի «բ» և «գ» կետերը) յենթակա յեն ապահովության, յեթե նրանք դառնում են հաշմության առաջին յերեք կարգերից վորևիցե մեկին (հոդ. 7):

71. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է՝

ա) Անաշխատունակ ծնողներին կամ ամուսնուն, յեթե նրանց անաշխատունակությունն առաջացել է նեցուկի մահանալու կամ անհետ կորչելու որից վոչ ուշ քան յերկու տարի հետո:

բ) Աշխատունակ ծնողներին և ամուսնուն, յեթե նրանք վոչ ուշ քան նեցուկի մահանալու կամ անհետ կորչելու օրը հասել են 62-րդ հոդվածի «բ» կետում հիշված հասակին (63-րդ հոդվ. 3-րդ մաս):

72. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է

ա) Յեթե նեցուկի մահն առաջացել է աշխատանքային խեղանդամության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով՝ անկախ վարձու աշխատանքի տևողությունից:

բ) Յեթե նեցուկի մահն առաջացել է ընդհանուր պատճառներից —14-րդ հոդվածում նշված ժամկետի վարձու աշխատանքի ստաժ ունենալու դեպքում:

Նեցուկը կորցնելու դեպքում խեղանդամների ընտանիքներին (66-րդ հոդ. կետ «բ») կենսաթոշակ նշանակվում է անկախ նեցուկի աշխատանքի տևողությունից:

73. Նեցուկի մահանալու դեպքում ապահովություն տրվում է, յեթե նեցուկը մահացել է՝

ա) Վարձու աշխատանք կատարելու կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու շրջանում.

բ) Վարձու աշխատանքի դադարեցման կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի դադարեցման որից — մի տարվա ընթացքում:

Գործազրկության դեպքում ապահովություն ստանալու շրջանում (հոդ. 22-րդ):

դ) Հաշմության դեպքում ապահովություն ստանալու շրջանում (հոդ. 67):

Նեցուկի անհետ կորչելու դեպքում ապահովություն տրվում է, յեթե անհետ կորչելը հաստատելու մասին միջնորդություն է հարուցված: Միջնորդություն պետք է հարուցվի ընտանիքի նեցուկի կողմից վարձու աշխատանքի աշխատավարձ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ, գործազրկության նպաստ կամ թե հաշմության կենսաթոշակ ստանալու որից վոչ ուշ քան մի տարվա ընթացքում:

74. Նեցուկը կորցնելու դեպքում ծնողներին, ամուսնուն և 16



տարեկանից բարձր անաշխատունակ յերեխաներին, յեղբայրներին, քույրերին կենսաթոշակ նշանակելու մասին դիմումներ պետք է տրվեն վոչ ուշ, քան նեցուկի մահանալուց կամ անհետ կորչելը հաստատելու որից յերկու տարի հետո (հոդ. 63, մաս 3-րդ):

Հիշյալ ժամկետը բաց թողնելու դեպքում, զրկվում են սոցիալական ապահովագրության կարգով ապահովվելու իրավունքից:

75. Նեցուկը կորցնելու դեպքում փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին, քույրերին կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները կարող են տրվել մինչև նրանց 16 տարեկան դառնալը:

76. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վորոշելիս համապատասխան կերպով կիրառվում են հ. հ. 14, 15, 16, 17, 18, 19, 20, 24, 25 և 27, վորոնք սահմանված են հաշմության դեպքում ապահովելու համար:

## Գ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

77. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է ընդհանուր, այն է՝ ապահովության յենթակա ընտանիքի բոլոր անդամների համար:

Ընտանիքի անդամների բաժան ապրելու դեպքում, ընտանիքի կենսաթոշակի ընդհանուր չափը, թոշակառուներից վորևիցե մեկի պահանջմամբ բաժանվում է կենսաթոշակով ոգտվող անդամների վրա:

78. Լրիվ ապահովագրության յենթակա նեցուկին կորցնելու դեպքում, յեթե մահն առաջացել է աշխատանքային խեղանդամության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով—կենսաթոշակը նշանակվում է.

ա) ապահովման յենթակա յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի դաղումի յերեք քառորդի չափով.

բ) ապահովման յենթակա յերկու անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի դաղումի ½-ի չափով.

գ) ապահովման յենթակա մեկ անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի դաղումի մեկ յերրորդի չափով:

79. Յերկու ծնողն էլ կորցրած յերեխաներին (թեկուզ լինի դա տարբեր ժամանակներում) կենսաթոշակ նշանակվում է 78-րդ հոդվածով սահմանված չափերով, անկախ ծնողները կորցնելու պատճառներից: Նույն չափով կենսաթոշակ նշանակվում է նաև այն դեպքերում, յերբ ընտանիքի անդամների մեջ, բացի յերեխաներից, կան նաև ուրիշ անձինք:

80. Յեթե նեցուկի մահը առաջացել է ընդհանուր պատճառներից, նրա ընտանիքին կենսաթոշակ նշանակվում է՝

ա) Յերբ նեցուկի դաղումն է ամսեկան 10 ռուբլուց վոչ բարձր և ընտանիքի անդամները 2 են կամ ավելի— կենսաթոշակ նշանակվում է լրիվ աշխատավարձի չափով, իսկ ընտանիքի մեկ անդամին—աշխատավարձի 2/3-ի չափով:

բ) Նեցուկի դաղումը 10 ռուբլուց ավել, բայց 14 ռուբլուց վոչ բարձր լինելու դեպքում՝ յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին ամսեկան—լրիվ աշխատավարձի չափով, 2 հոգուց բաղկացած ընտանիքին ամսական —10 ռ. չափով, իսկ ընտանիքի մեկ անդամին ամսական— 7 ռ. չափով

գ) Նեցուկի դաղումը 14 ռուբլուց ավել, բայց 20 ռուբլուց վոչ բարձր լինելու դեպքում՝ 3 կամ ավել անձից բաղկացած ընտանիքին ամսեկան—14 ռ. չափով, 2 հոգուց բաղկացած ընտանիքին ամսական—10 ռ., իսկ ընտանիքի մեկ անդամին ամսական 7 ռ. չափով:

դ) Նեցուկի դաղումը 20 ռուբլուց բարձր, բայց վոչ ավել 1-ին և 2-րդ գոտում ամսական 40 ռուբլուց, իսկ 3-րդ և 4-րդ գոտում ամսական —30 ռուբլուց՝ յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—աշխատավարձի 2/3-ը, 2 անձից բաղկացած ընտանիքին—աշխատավարձի կեսը, իսկ ընտանիքի մեկ անդամին—աշխատավարձի մեկյերրորդի չափով:

յե) Ներքևում նշված սահմաններում նեցուկի դաղում ունենալու դեպքում՝

| | Ամսական կենսաթոշակի չափը | | |
|---|---|---|---|
| | 3 կամ ավելի անձից բաղկաց. ընտան. | 2 անձից բաղկաց. ընտանիք. | Ընտանիքի մեկ ան-դամին. |
| 1-ին և 2-րդ գոտում 40 ռ. մինչև 60 ռ. դաղումի դեպք. | 27 ռ. | 20 ռ. | 13 ռ. 50 |
| 3-րդ և 4-րդ գոտում 30 ռ. մինչև 45 ռ. դաղումի դեպքում | 20 ռ. | 15 ռ. | 10 ռ. |
| 5-րդ և 6-րդ գոտում 20 ռ. մինչև 30 ռ. դաղումի դեպքում | 14 ռ. | 10 ռ. | 7 ռ. |



81. Նեցուկը կորցնելու դեպքում, յեթե նեցուկի դաղումը գերազանցում է 1-ին և 2-րդ գոտում 60 ռուբլուց, 3-րդ և 4-րդ գոտում 40 ռուբլուց, 5-րդ և 6-րդ գոտում 30 ռուբլուց և յեթե նե-
կենսաթոշակ
ցուկի մահն առաջացել է ընդհանուր պատճառներից,
նշանակվում է՝

ա) 3 կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի աշխատավարձի չորս իններորդի չափով.

բ) 2 անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի աշխատավարձի մեկ յերրորդի չափով.

գ) Ապահովության յենթակա ընտանիքի 1 անդամի համար— նեցուկի աշխատավարձի յերկու իններորդի չափով:

82. Մանակի ապահովագրմամբ անցնող նեցուկը կորցնելու դեպքում—կենսաթոշակ ամսական նշանակվում է հետևյալ չափերով՝

| | Մանակի ապահովագրութ. 1-ին խումբ | Մանակի ապահովագրության 2-րդ խումբ |
|---|---|---|
| 3 կամ ավելի անձից բաղկացած ընտանիքին . . . . | 15 ռ. | 9 ռ. |
| 2 անձից բաղկացած ընտանիքին . . . . . . . . | 10 ռ. | 6 ռ. |
| Ընտանիքի մի անդամի համար . . . . . . . . | 7 ռ. | 4 ռ. |

83. Սոցիալական Ապահովագրությամբ ապահովվող մահացած աշխատավորի ընտանիքին կենսաթոշակ նշանակվում է, յելնելով այն դաղումից, վորի հիման վրա նշանակված եր նրան հաշմության կենսաթոշակ:

84. 79-րդ հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի չափը հաշվվում է յերկու ծնողների դաղումի հաշվով, յեթե յերկու ծնողն էլ զավում են այն անձանց թվին, վորոնց ընտանիքը նեցուկը կորցնելու դեպքում յենթակա յե ապահովության:

85. Նեցուկը կորցնելու հետևանքով ապահովված ընտանիքի անդամների թվի փոփոխության դեպքում, համապատասխան չափով փոփոխվում է նաև տրվող կեսաթոշակի չափը:

Կենսաթոշակը նոր չափով վճարվում է փոփոխությունն առաջանալու հետևյալ ամսի 1-ից:

86. Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակի չափը վորոշելու համար համապատասխան կերպով կիրառվում են հոդ. 28, 29, 30, 31, 33, 34, 35, 40, 43 և 45:

## Դ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.

87. Այն անձինք, վորոնք նեցուկը կորցնելու որից վոչ ուշ քան 3 ամիս հետո դիմել են կենսաթոշակ ստանալու, այդպիսինը նշանակվում է նեցուկի մահանալու կամ անհետ կորչելը հաստատվելու որից:

Կենսաթոշակի համար դիմում հարուցելու բաց թողնված ժամկետը վերականգնելու դեպքում (հոդ.27) կենսաթոշակ նշանակվում է ժամկետի վերականգնման որից: Մնացած բոլոր դեպքերում, կենսաթոշակ նշանակվում է դիմում տալու որից (հոդ. 104):

88. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ տրվում է՝

ա) Փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին (հոդ. 62, կետ «ա»), մինչև 16 տարին լրանալը, իսկ յեթե սովորում են, մինչև 18 տարին:

բ) Անաշխատունակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին (հոդ. 62 կետ «բ»)—ցմահ կամ մինչև նրանց աշխատունակության լրիվ վերականգնումը, կամ թե մինչև աշխատունակության այն աստճանի վերականգնումը, վորի ժամանակ ապահովություն չի տրվում (հոդ. 70):

գ) Անաշխատունակ և ծերացած ծնողներին և ամուսնուն (հոդ. 62. կետ «բ»)— ցմահ:

դ) Յերեխայի մինչև ութ տարեկան հասնելը, նրան խնամող ծնողներին և ամուսնուն (հոդ. 62, կետ «դ»):

89. Նեցուկը կորցնելու դեպքում 88-րդ հոդվածի «ա» և «դ» կետերով նախատեսնված ժամկետը անցնելուց հետո կենսաթոշակի վճարումը շարունակվում է՝

ա) Յերեխաներին, յեղբայրներին և քույրերին, յեթե նրանք մինչ 16 տարեկան հասակը անաշխատունակ են դարձել (հոդ 70):

բ) Ծնողներին և ամուսնուն, յեթե նրանք հասել են 82-րդ հոդվածի «դ» կետում հիշված հասակին, կամ դարձել են անաշխատունակ մինչև յերեխայի 8 տարեկան դառնալը (հոդ 70):

90. Նեցուկը կորցնելու դեպքում նրա ամուսնուն տրվող կեն-



սաթոշակը դադարեցվում է, վերջինիս կողմից կրկին ամուսնանալու որից (62-րդ հոդված կետեր «գ» և «դ»):

91. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվող ընտանիքի անդամների նկատմամբ համապատասխան կերպով կիրառվում են հոդ. հոդ. 47; 49 և 50:

## ՅԵ. ԴԱԴՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ ՅԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ.

92. Ընդհանուր պատճառներից առաջացած նեցուկի մահվան դեպքում տրվող կենսաթոշակը ընտանիքի անդամներին դադարեցվում է՝

ա) 2-րդ կարգի պատենտով ինքնուրույն առևտրական գործողություններ կամ ինքնուրույն արհեստագործությամբ զբաղվողին:

բ) Հաշմանդամական հիմնարկության կամ մխիթենական Հանրապետությունների Լուսժողկոմատների կամ Առժողկոմատների փակ հիմնարկություններում տեղավորվածին:

գ) Վարձու աշխատանքից դադում կամ այլ յեկամուտներ ու վաստակ ունեցողին.

93. Նեցուկը կորցնելու դեպքում յերեխաներին տրվող կենսաթոշակը դադարեցվում է, յեթե կորցրած ծնողը մնացել է կենդանի և պարապում է 3-րդ կամ բարձր կարգի պատենտով առևտրական գործունեությամբ, ինքնուրույն արհեստագործությամբ կամ շահ ստանալու նպատակով ուրիշի վարձու աշխատանքից օգտվելով:

Կենսաթոշակի վճարումը չի դադարեցվում 4-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված դեպքերում:

94. Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակ ստացող ընտանիքի անդամներից մեկին ձրիաբար հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններում տեղավորելիս՝

ա) Յեթե ընտանիքը 2 կամ ավելի անձի համար է կենսաթոշակ ստանում—կենսաթոշակը վճարվում է իր նախկին չափով:

բ) Յեթե կենսաթոշակը ընտանիքի մի անդամի համար է վճարվում—այդպիսինը կրճատվում է մինչև 10 ռ.:

Հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններից թոշակառուի դուրս գրվելու դեպքում, նրա կենսաթոշակը կրճատվելու հետևանքով գոյացած պակասորդ գումարը վճարվում է, բայց վոչ ավելի քան 6 ամսվա համար:

95. Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակ ստացող

ընտանիքի անդամին կալանքի տակ առնելու դեպքում—կենսաթոշակի վճարումը երկրորդ ամսից դադարեցվում է, կալանավորման ամբողջ ժամանակի համար։

Թոշակառուի արդարանալու կամ նրա գործը կարճվելու դեպքում—ամբողջ դադարեցված ժամանակի համար կեսաթոշակը վճարվում է, բայց ոչ ավելի քան 6 ամսվա համար։

96. Ընտանիքի անդամներից որևիցե մեկին կենսաթոշակի վճարումը դադարեցնելու դեպքում, ընտանիքի մյուս անդամներին վճարումը շարունակվում է սովորական չափով՝ այն է համապատասխան մնացած ընտանիքի անդամների թվին (հոդ. հոդ. 78–82)։

97. Նեցուկը կորցնելու հետևանքով ապահովվելիք ընտանիքի անդամների դաղումներն ու այլ եկամուտները հաշվի առնելու և կենսաթոշակի վճարումը կանգնեցնելու դեպքում,—համապատասխան կերպով կիրառվում են 51-րդ հոդ. «բ» կետը, հոդ. հոդ. 51ա, 60 և 61։



3-ՐԴ ՄԱՍ

# ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

## Ա. ԴԻՄՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.

98. Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները ստածի և ընթացք են տրվում յերկրային կամ տրանսպորտային ապահովագրական գանձարկղների կողմից՝ նայած աշխատանքի կամ ընտանիքի նեցուկի վերջին աշխատանքի վայրին։

99. Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումը տրվում է թոշակի համար դիմող անձի բնակավայրի Սոցապգանձարկղին կամ սոցապկայանին։

Կենսաթոշակ նշանակելու մասին միջնորդությունը կարող է հարուցվել թե գրավոր և թե բանավոր ձևով։

100. Հաշմության համար կենսաթոշակ ստանալու մասին դիմող անձնավորությունը պետք է ներկայացնի՝

ա) Փաստաթղթեր, վորոնք կհաստատեն՝ 1) պահանջվող վարձու աշխատանքի ստաժը և 2) հոդ. հոդ. 28, 29 կամ 33-ում հիշված ժամանակամիջոցում ունեցած դաղումի մասին (հաշվեհրքույկներ, տեղեկանքներ աշխատանքի վայրից և այլն)։

բ) Ծննդյան վկայական, յեթե հաշմությունը առաջացել է ընդհանուր պատճառներից։

գ) Արձանագրություն (կամ այլ պաշտոնական վկայական) դժբախտ պատահարի մասին, յեթե հաշմությունը առաջացել է աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով։

101. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու համար դիմող անձնավորությունը պետք է ներկայացնի՝

ա) Փաստաթղթեր, վորոնք պետք է հաստատեն 1) նեցուկի վարձու աշխատանքով զբաղված լինելու աշխատանքի ստաժը և 2) 28, 29 կամ 33-րդ հոդվածներով նշված ժամանակամիջոցի համար նեցուկի դաղումը (հաշվեգրքույկներ և տեղեկանքներ աշխատանքի վայրից)։

բ) Նեցուկի տարիքը հաստատող վկայական, յեթե նեցուկի մահն առաջացնել է ընդհանուր պատճառներից։

գ) Քաղաքացիական կացության ակտերից (ՁԱԳՍ) քաղվածք

ընտանիքի նեցուկի մահվան մասին կամ դատարանի վորոշումը նեցուկի անհետ կորչելու մասին։

դ) Վկայականներ կենսաթոշակի համար դիմողների տարիքի մասին և նրանց նեցուկի հետ ունեցած ազգակցական կապի մասին։

յե) Վկայականներ այն մասին, վոր կենսաթոշակի համար դիմող ընտանիքի անդամները գտնվելիս են յեղել նեցուկի խնամքի տակ։

զ) Արձանագրություն (կամ այլ պաշտոնական փաստաթուղթ) դժբախտ պատահարի մասին, յեթե նեցուկի մահն առաջացել է աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով։

102. Սոցիալական Ապահովագրության գանձարկղն անկախ նրանից, թե պահանջվող փաստաթղթերը ներկայացված են թե վոչ, պարտավոր է կենսաթոշակի մասին դիմումն ընդունել։ Պակասող փաստաթղթերը լրացնելու համար սահմանվում է դիմում տալու որից 6 ամսյա ժամկետ։

103. Սոցապգանձարկղը դիմողին տալիս է ստացական դիմումն ընդունելու մասին՝ նշելով նաև դիմումն ընդունելու ժամանակը։

104. Կենսաթոշակի համար դիմելու որը հաշվվում է տեղական սոցապգանձարկղին դիմում տալու որը, իսկ փոստով ուղարկելու դեպքում, ուղարկման վայրի փոստային կնիքի նշված որաթիվը։

## Բ. ԲԺՇԿԱԿԱՆ ԵՔՍՊԵՐՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

105. Այն անձինք, վորոնք դիմում են կենսաթոշակ ստանալու և վորոնց կենսաթոշակի իրավունքը կախված է հաշմության սահմանելու խնդրի հետ—այդպիսիները սոցապգանձարկղի կողմից ուղարկվում են բժշկական եքսպերտ մարմիններին։

Բժշկական եքսպերտ մարմիններին ուղարկելը կատարվում է միայն այն դեպքում, յեթե կենսաթոշակ նշանակելու համար մնացած նախադրյալները կան։

106. Հաշմության կարգի վորոշումը կատարվում է բժշկական եքսպերտ բյուրոների կողմից, իսկ այն վայրում, վորտեղ այդպիսիներ չկան՝ Բժշկական Վերստուգիչ Հանձնաժողովների կողմից—Եքսպերտ բյուրոյի հաստատմամբ։ Վերջին դեպքում, Բժշ-



կական վերստուգիչ հանձնաժողովի արձանագրությունը ուղարկվում է բժշկական եքսպերտ բյուրոյին, վորը իրավասու յե կատարել նոր քննություն։

107. Թոշակառուների բժշկական վերաքննությունը կատարվում է ինչպես սոցապգանձարկղների վորոշմամբ, նույնպես և իրենց թոշակառուների պահանջմամբ, բայց վոչ ավելի քան տարին մեկ անգամ։ Թոշակառուի առողջության մեջ կարուկ փոփոխություն նկատվելու դեպքում իրեն թոշակառուի պահանջմամբ Սոցապգանձարկղը կարող է դեռևս տարին չլրացած նրան ուղարկել բժշկական վերաքննության։

Վերոհիշյալը չի տարածվում բժշկական այն վերաքննության վրա, վորը նշանակվում է բժշկական եքսպերտ մարմինների կողմից և վորոնց գործունեության կարգը վորոշվում է Միութենական Հանրապետությունների Առժողկոմատների կողմից՝ համաձայնեցնելով Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների հետ։

108. Նշանակված ժամկետին բժշկական քննության ներկայանալը պարտադիր է, ի բացառյալ այն բժշկական վերաքննությունների, վորին թոշակառուն ուղարկված է իր պահանջմամբ։

Թոշակառուի վերաքննություն նշանակելու մասին արվում է կենսաթոշակի գրքույկի մեջ համապատասխան նշանում։

109. Այն անձինք, վորոնք կանչված են բժշկական եքսպերտ բյուրո բժշկական քննության կամ վերաքննության՝ իրենց բնակավայրից դուրս գտնվող եքսպերտ մարմինների կամ սոցապգանձարկղների վորոշմամբ, փոխադրության հետ կապված ծախքերը այդպիսիներին հատուցվում է։ Հատուցման չափն ու կարգը սահմանվում է Սոցապգանձարկղների կոմիտեների կողմից։

## Գ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏԱԺԸ ՎՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

110. Փաստաթղթերով չհաստատված աշխատանքային ստաժը մինչև 1923 թ. հունվարի 1-ը ժամանակամիջոցի համար կարող է հաստատվել ապահովագրական գանձարկղներին կից կազմակերպված աշխատանքային ստաժ վորոշող հանձնաժողովի միջոցով։

1923 թ. հունվարի 1-ից հետո ժամանակամիջոցի աշխատանքային ստաժը այդ հանձնաժողովների միջոցով կարող է հաստատվել բացառիկ դեպքերում միայն (տվյալ հիմնարկության

կամ ձեռնարկության լրիվ լուծարքը, արխիվային մարմնից համապատասխան տեղեկանք ստանալու հնարավոր չլինելը և այլն)։

111. Յերկրային ապահովագրական գանձարկղներին կից աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ կազմով՝ ապահովագրական գանձարկղի կոմիտեյի անդամից (հանձնաժողովի նախագահ), տեղական աշխատանքի բաժնի (կամ Աշխժողկոմատի համապատասխան մարմնի) մեկ ներկայացուցիչ և տեղական Միջմիութենական կազմակերպությունից մեկ ներկայացուցիչ։

Տրանսպորտային ապահովագրական գանձարկղներին կից հիշյալ հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ կազմով՝ ապահովագրական գանձարկղի կոմիտեյի անդամից (հանձնաժողովի նախագահ), ճանապարհային հաղորդակցության աշխտեսչից և յերկաթգծի արհմիության կամ Ջրայինների շրջկոմի մեկ ներկայացուցիչ՝ ըստ պատկանելույն։

112. Աշխատանքի ստաժ ունենալու խնդիրը հանձնաժողովի քննության հանձնվելու դեպքում, կենսաթոշակի համար դիմող անձնավորությունը պետք է ցույց տա այն անձանց անունը, ազգանունը, հայրանունը և հասցեն, վորոնք իրենց վկայությամբ կարող են հաստատել նրա վարձու աշխատանք տանելը և ստաժի տևողությունը։

113. Սոցապգանձարկղը գործերը հանձնում է հանձնաժողովին դիմումն ստանալու որից—յերեք որվա ընթացքում։

Գործը հանձնաժողովին ուղարկելու մասին տեղեկացնում է դիմողին։

114. Հանձնաժողովն իրեն ուղարկված գործը քննության է առնում ստանալու որից մի շաբաթվա ընթացքում։

115. Հանձնաժողովը ծանուցագրերով կանչում է դիմողին և դիմումի մեջ հիշված վկաներին՝ անձամբ նրանց ցուցմունքները լսելու համար։

Դիմողին իրավունք է տրվում վկաներին իրեն հետ բերել։ Դիմողի հավատարմատարներին կամ այլ ներկայացուցիչներին թույլատրվում է գալ ցուցմունքներ տալու միայն այն դեպքում, յեթե դիմողը փոքրահասակ է (մինչև 16 տարեկան) կամ ֆիզիքական պակասության (խուլ, համր և այլն) և հոգեկան հիվանդության հետևանքով չի կարող ցուցմունքներ տալ։

116. Յեթե վկաներից վորևիցե մեկն ապրում է տվյալ գանձարկղի գործունեյության շրջաններից դուրս, սոցապգանձարկղը այդ վկայի հարցաքննությունը հանձնարարում է վկայի բնակավայրի գանձարկղին։



117. Հանձնաժողովի հարցաքննությանը կանչվելու հետ կապված ծախքերը, վորոնք կրում են դիմողը և վկաները սոցիալական ապահովագրության մարմինների կողմից չեն հատուցվում։

118. Հանձնաժողովին տրվում է իրավունք վկաների ցուցմունքներն անձամբ, նրանց կողմից լսելու համար նրանց չկանչել, այլ բավականանալ նրանց գրավոր ցուցմունքների քննությամբ՝ պայմանով, յեթե վկաների ստորագրությունները սահմանված կարգով վավերացված են։

119. Գործի քննության ժամանակ հանձնաժողովը կարող է ղեկավարվել վկաների ցուցմունքների հետ միաժամանակ նաև պրոֆմիության անդամատոմսում յեղած նշանումներով։

120. Հանձնաժողովի կողմից քննության առնված ամեն մի գործի համար հենց նույն նիստում կազմվում է արձանագրություն։ Արձանագրությունն իր մեջ պետք է պարունակի նիստի տեղի և ժամանակի նշանումները, այլև այն սոցապմարմնի անունը, վորին կից է հանձնաժողովը, դիմողի անունը, հայրանունը և ազգանունը՝ ցույց տալով նրա տարիքը, ծագումը, պրոֆեսիան (պաշտոնը)։ Արձանագրության մեջ պետք է լինի դիմողի ստորագրված ցուցմունքները, վկաների անունը, ազգանունը և հայրանունը, նրանց տարիքը և սոցիալական դրությունը՝ նշելով միաժամանակ, թե ազգակից չէ դիմողին, վկաների ստորագրված ցուցմունքները և վերջապես հանձնաժողովի վորոշումը (հդ. 121)։

Հանձնաժողովի արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և բոլոր անդամների կողմից։ Առանձին կարծիքի մնացած հանձնաժողովի անդամին տրվում է իրավունք պահանջելու մտցնել իր կարծիքն արձանագրության մեջ։

121. Հանձնաժողովի վորոշման մեջ պետք է նշված լինեն դիմողի կամ ընտանիքի նեցուկի աշխատանքի ստաժի վերաբերյալ սահմանված փաստերը ճշտությամբ և մանրամասը ցույց տալով թե՝

ա) վո՞ր հիմնարկ ձեռնարկներում (կամ վոր մասնավոր անձի մոտ) է աշխատել դիմողը կամ դիմողի մահացած կամ թե անհետ կորած նեցուկը։

բ) վո՞ր ժամանակից մինչև վոր ժամանակն է դիմողն աշխա-

տել յուրաքանչյուր հիմնարկում կամ ձեռնարկում (կամ մասնավոր անձի մոտ)։

գ) ի՞նչ պաշտոնում էր գտնվում դիմողը և ինչ բնույթի աշխատանք էր կատարում։

դ) դիմողի պահանջմամբ նրան պետք է տրվի հանձնաժողովի վորոշման պատճենը։

122. Հանձնաժողովը վորոշում կայացնում է հենց գործը քննության առնելու որը և վորոշման մասին տեղեկացնում է դիմողին, վերցնելով նրանցից ստորագրություն։ Դիմողի պահանջմամբ նրան պետք է տրվի հանձնաժողովի վորոշման պատճենը։

123. Հանձնաժողովի արձանագրությունը գործի հետ միասին հանձնվում է ապահովագրական գանձարկղին։

124. Յեթե ապահովագրական գանձարկղը կգտնի, վոր հանձնաժողովը հաշվի չի առել տվյալ գործին վերաբերող բոլոր հանգամանքները, գանձարկղը հարցը վորոշում է ըստ եյության, կամ թե չէ գործն ուղարկում է հանձնաժողովին նորից քննության առնելու համար։

125. Աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովի նախագահը, յերբ համաձայն չի լինում հանձնաժողովի վորոշման հետ, կամ այդ վորոշումը դիմողի կողմից բողոքարկվում է, այդ դեպքերում հարցի վերջնական լուծումը պատկանում է ապահովագրական գանձարկղին։

## Դ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

126. Կենսաթոշակ նշանակելու մասին գործերը տանում են այն յերկրային գանձարկղները, վորոնց տրված են կենսաթոշակ նշանակելու իրավունքը սոցապմարմինների մասին Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից Սոցիալական ապահովագրության Խորհուրդների կողմից հաստատված կանոնադրությամբ։ Տրանսպորտում կենսաթոշակ նշանակելու գործերը տանում են շրջանային ապահովագրական գանձարկղները։

127. Կենսաթոշակ նշանակվում է ապահովագրական գանձարկղի կոմիտեյի այն անդամի կողմից, վորը լիազորված է այդ անելու գանձարկղի կոմիտեյի վորոշմամբ։

128. Յեթե ապահովագրական գանձարկղի կոմիտեյի անդամը (հոդ. 127) չի գտնում հնարավոր կենսաթոշակ նշանակելու, գործը հանձնվում է կենսաթոշակային հանձնաժողովի քննությանը։

Կենսաթոշակային հանձնաժողովները կազմված են ապահո—



վագրական գանձարկղի մեկ ներկայացուցչից (հանձնաժողովի նախագահ), աշխատանքի բաժնի (կամ նրան համապատասխան Աշխժողկոմատի մարմնի) մեկ ներկայացուցչից և Միջմիութենական կազմակերպության (տրանսպորտում համապատասխան պրոֆմիության) մեկ ներկայացուցչից։

129. Կենսաթոշակ նշանակելու մասին վորոշումը պետք է կայացվի ապահովագրական գանձարկղում բոլոր անհրաժեշտ նյութերը (փաստաթղթեր, աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովի արձանագրություն, բժշկական եքսպերտ հանձնաժողովի արձանագրություն) ստանալու որից—յերկու շաբաթվա ընթացքում։

130. Կենսաթոշակ նշանակելու համար տվյալներ պակասելու դեպքում ապահովագրական գանձարկղը առաջարկում է դիմողին ներկայացնելու պակասող փաստաթղթերն ու տեղեկությունները։

Ապահովագրական գանձարկղը կարող է պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ անմիջականորեն համապատասխան ձեռնարկություններից, հիմնարկություններից, կազմակերպություններից և անձնավորություններից։ Սոցիալական ապահովագրության մարմիններից անհրաժեշտ տեղեկանքները բոլոր դեպքերումն էլ պահանջվում են սոցապգանձարկղների կողմից։

131. Կենսաթոշակ նշանակելիս ապահովագրական գանձարկղը ղեկավարվում է վոչ միայն դիմումի մեջ հիշված տվյալներով, այլ և բոլոր այն հանգամանքներով, վորոնք գոյություն ունեն կենսաթոշակի գործում, ընդ վորում կենսաթոշակ կարող է նշանակվել վոչ այն հիման վրա, վորի մասին գրում է դիմողը։

Յեթե գործում կան մի շարք հիմունքներ, կենսաթոշակ նշանակելու համար (հաշմություն, նեցուկը կորցնելը և այլն)—ընտրությունը թողնվում է դիմողին։

132. Ապահովագրական գանձարկղի վորոշման մասին դիմողին տեղեկացնում են վորոշում կայացնելու որից—3 որվա ընթացքում։ Կայացված վորոշման մասին տեղեկությունն իր մեջ պետք է պարունակի վորոշումը բողոքարկելու կարգի և ժամկետի մասին տվյալներ, իսկ մերժման դեպքում, նաև մերժելու պատճառները։

133. Նոր հայտնաբերված հանգամանքների հետևանքով գործը վերանայելու ժամանակ, ապահովագրական գանձարկղը կայացնում է հիմնավորված վորոշում, վորի մեջ նա նշում է այն հան-

գամանքները, վորոնք հիմք ծառայեցին գործը վերանայելու համար: Վորոշումը հայտնվում է Թոշակառույին 132-րդ հոդվածով սահմանված կարգով:

134. Կենսաթոշակ նշանակելու դեպքում դիմողի ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են իրենց միայն բողոքարկման ժամկետը (հոդ. 139) անցնելուց հետո, իսկ բողոք տըրվելու դեպքում, գործի վերջնական լուծումից հետո: Ամեն մի վերադարձվող փաստաթղթի վրա գրվում է ապահովագրական գանձարկղի շտամպը:

135. Կենսաթոշակ նշանակելու մասին գործերը կարճվում են, յերբ՝

ա) 6-ամսյա ժամկետում չի ներկայացվում պակասող փաստաթղթերը (հոդ. 102),

բ) Հրաժարվում է յենթարկվել մասնագիտական բուժման կամ քննության ի բացառյալ վիրաբուժական վիրահատությունից,

գ) վոչ հարգելի պատճառով ներկայանալու համար սահմանված ժամկետին և այդ ժամկետից հետո 2 ամսվա ընթացքում բժշկական եքսպերտ մարմինների վերաքննությանը չի ներկայանում:

Կարճված գործերի ուժը կարող են վերականգնել, յերբ նորից դիմում են ապահովագրական գանձարկղ կենսաթոշակ նշանակելու՝ պահպանելով սահմանված ժամկետները (հոդ. հոդ. 26, 74 և 75):

## ՑԵ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ.

136. Կենսաթոշակ նշանակելու մասին ապահովագրական գանձարկղների վորոշումները կարող են բողոքարկվել հետևյալ վերադաս սոցիալական ապահովագրության մարմնին, վորի վորոշումը համարվում է վերջնական:

Միութենական Հնարապետությունների Աշխատողկոմատների Գլխսոցապվարչություններին անմիջականորեն յենթակա ապահովագրական գանձարկղների վորոշումները բողոքարկման յենթակա չեն:

137. 133-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքներ կարող են տրվել ինչպես կենսաթոշակ նշանակելու մասին ապահովագրական գանձարկղների վորոշումների վրա, նույնպես և կենսաթոշակի վճարումը դադարեցնելու կամ ժամանակավորապես կանգնեցնելու, կենսաթոշակի չափը պակասեցնելու, կամ թե ա-



պահովման մի տեսակից մյուսին փոխադրելու մասին վորոշումների վրա: Նույն կարգով բողոքներ տրվում են նաև բժշկական մարմինների վրա:

138. Բողոքը տրվում է կենսաթոշակի մասին վորոշում կայացրած ապահովագրական գանձարկղի միջոցով: Բողոքը ընդունող ապահովագրական մարմինը բողոքի վրա նշանակում է ստանալու օրաթիվը և տալիս է դիմողին ստացական՝ բողոքի ու նրան կցված փաստաթղթերի ստացման մասին:

139. Բողոքներ տրվում են ապահովագրական գանձարկղի վորոշման մասին դիմողին տեղեկացնելու օրից—3 ամսվա ընթացքում (հոդ. 132):

140. Բողոք տալու օրը համարվում է ապահովագրական գանձարկղին բողոքը հանձնելու օրը, իսկ փոստով ուղարկելու դեպքում—փոստային շտամպի վրա գրված օրաթիվը:

141. Ապահովագրական գանձարկղը ստանալով բողոքը, այդպիսինը կենսաթոշակի գործի և իր յեզրակացության հետ 7 օրվա ընթացքում ուղարկում է վերադաս մարմնին: Ապահովագրական գանձարկղի մասնաճյուղը պարտավոր է ապահովագրական գանձարկղն ուղարկել իրեն մոտ ստացված բողոքը վոչ ուշ քան հետևյալ օրը:

142. Բողոքարկման համար սահմանված 3-ամսյա ժամկետից ուշ ստացված բողոքները ապահովագրական գանձարկղի կողմից վերադարձվում են դիմողին՝ նշելով վերադարձնելու պատճառները:

Ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի լինելու դեպքում, ապահովագրական գանձարկղը բողոքողի խնդրի համաձայն, կարող է այդ ժամկետը վերականգնել:

Ապահովագրական գանձարկղի վորոշումը՝ ժամկետը վերականգնելու մասին, համարվում է վերջնական և բողոքարկման վոչ յենթակա:

143. Վերադաս սոցիալական ապահովագրության մարմինը բողոքարկված գործը քննում է ըստ եյության, ընդ վորում նա վորոշում հանում է անկախ բողոքի մեջ հիշված հիմունքներից:

144. Վերադաս սոցիալական ապահովագրության մարմինը գործը քննելուց հետո ապահովագրական գանձարկղին է ուղարկում կենսաթոշակի գործն իր կայացրած վորոշման հետ միասին, վորոշման պատճենն ուղարկելով բողոքողին:

## Զ. ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ.

145. Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատների Գլխսոցապվարչություններին իրավունք է տրվում կենսաթոշակ նշանակելու մասին գործերի առթիվ ապահովագրական գանձարկղների կայացրած վորոշումները հսկողության կարգով վերանայելու: ԽՍՀՄ Աշխժողկոմատի Կենտսոցապվարչությանը նույն իրավունքն է տրվում թե Գլխսոցապվարչությունների և թե ապահովագրական գանձարկղների նկատմամբ:

146. ԽՍՀՄ Աշխժողկոմատի Կենտսոցապվարչության կողմից հսկողության կարգով ապահովագրական գանձարկղների կենսաթոշակ նշանակելու մասին վորոշումների վերանայումը կատարվում է համապատասխան Միութենական Հանրապետության Աշխժողկոմատի Գլխսոցապվարչության յեզրակացությունն ստանալուց հետո:

147. Հսկողության կարգով ապահովագրական գանձարկղի կամ Միութենական Հանրապետության Աշխժողկոմատի Գլխսոցապվարչության վորոշումը փոփոխելու դեպքում, գործն ուղարկվում է վորոշում կայացրած սոցիալական ապահովագրության մարմնին՝ նոր վորոշում կայացնելու համար: Այս դեպքում հսկողության կարգով գործը վերանայող մարմնի ցուցմունքները համարվում են պարտավորեցուցիչ:

148. Հսկողության կարգով սոցիալական ապահովագրության մարմնի վորոշումը փոփոխելու իրավունքը ժամկետով չի սահմանափակված:

## Է. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.

149. Կենսաթոշակ նշանակելու դեպքում ապահովագրական գանձարկղը դուրս է գրում կենսաթոշակի գրքույկ, վորը ստորագրությամբ հանձնվում է թոշակառուին:

150. Կենսաթոշակը վճարվում է ամեն ամիս՝ ապահովագրական գանձարկղի սահմանված ժամկետներին:

151. Անգործունակ անձանց հասանելիք կենսաթոշակը վճարվում է նրանց խնամակալներին, վորոնք ներկայացնում են իրենց խնամակալությունը հաստատող փաստաթուղթ:

152. Կենսաթոշակի վճարումը կատարվում է թե ապահովագրական գանձարկղի կողմից անմիջականորեն և թե փոստի կամ խնայողական դրամարկղների միջոցով:



Արտասահմանում բնակվող թոշակառուների (հոդ. 60, մաս 2-րդ) կենսաթոշակը փոխադրվում է ԽՍՀՄ հյուպատոսությունների միջոցով ըստ թոշակառուի հայտարարության:

153. Կենսաթոշակը վճարելու և փոխադրելու հետ կապված ծախսերը բոլոր դեպքերումն էլ կատարվում են ապահովագրական գանձարկղների հաշվին:

154. Ընտանիքի անդամների կազմի մեջ փոփոխություն տեղի ունենալու դեպքում, վորը ազդելու յե կենսաթոշակի չափի վրա, կենսաթոշակը վճարող սոցիալական ապահովագրական մարմինը հետ է վերցնում թոշակի գրքույկը և այդպիսին տեղեկանքի հետ միասին ուղարկում է ապահովագրական գանձարկղ՝ կենսաթոշակի չափը վերանայելու համար:

155. Թոշակի գրքույկը կորցնելու դեպքում թոշակառուն պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել այն սոցապմարմնին, վորտեղից ստանում է կենսաթոշակ և իր հաշվին տեղական թերթերում տալ հայտարարություն: Թոշակառուն պարտավոր է հիշյալ ապգանձարկղին ներկայացնել թերթին տրված հայտարարության անդորրագիրը: Կորցրածի փոխարեն տրված թոշակի նոր գրքույկի վրա դրվում է չտամպ «դուբլիկատ»:

156. Կենսաթոշակի վճարումը կանգնեցնելու կամ դադարեցնելու դեպքում, թոշակառուից հետ է վերցվում թոշակի գրքույկը:

157. Թոշակի գրքույկը հետ վերցնելու դեպքում (հոդ. հոդ. 154 և 156) թոշակառուին տրվում է համապատասխան անդորրագիր:

158. Նոր բնակավայրեր տեղափոխվելիս թոշակառուն պետք է այդ մասին հայտնի այն ապահովագրական գանձարկղին, վորտեղից նա կենսաթոշակ է ստանում:

Ապահովագրական գանձարկղը փակում է տեղափոխվող թոշակառուի անձնական հաշիվը և ուղարկում է այդպիսին թոշակառուի նոր բնակավայրի ապահովագրական գանձարկղին, միաժամանակ հայտնելով, թե մինչև վոր ժամանակն է նրա հաշիվները փակված և չունի արդյո՞ք նա ապգանձարկղին պարտք:

159. Թոշակառուի նախկին բնակավայրի—ապահովագրական գանձարկղի վորոշումը կենսաթոշակը նշանակելու մասին,

պարտավորեցուցիչ է նոր բնակավայրի ապահովագրական դանձարկղի համար:

Սխալ կենսաթոշակի նշանակում յերևան հանելու դեպքում ապահովագրական դանձարկղը Միութենական Հանրապետության Գլխսոցապվարչության առաջ հարց է հարուցում հսկողության կարգով գործը վերանայելու համար, բայց մինչև վերանայումը չդադարեցնելով կենսաթոշակի վճարումը:

———



Հավելված սոցապահովագրության կարգով հաշմության և նպաստը կորցնելու դեպքում ապահովելու «կանոնների» 5-րդ հոդվածի.

# ՑՈՒՑԱԿ ՊՐՈՖՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| | Հիվանդություններ. | Հիվանդություն, առաջացնող պրոֆեսիոնալ վնասակարություններ. | Որինակներ այն պրոֆեսիաների, վորոնց մեջ մեծ մասամբ կամ բացառապես պատահում է տվյալ հիվանդությունը |
|---|---|---|---|
| 1 | Թունավորումներ | Պրոֆեսիոնալ թույներ. | Պրոֆեսիաներ, վորոնց մեջ պետք է գործ ունենալ տվյալ թունավորումների հետ. |
| 2 | Նախնաղիի ճիճվից առաջացած թունավորում (Անկիլոստոմիազիս). | Ստորյերկրյա աշխատանքներ. | Հանքագործներ, ածխահատներ, տուննելների և քարհանքերի բանվորներ. |
| 3 | Մաշկային քաղցկեղ (կաշվի ռակ). | Աշխատանք, վորը կապված է ձյութի, մազութի, մրի, պարաֆինի, անտրացիտի և նմանորինակ նյութերի հետ. | Ծխնելույզ մաքրողներ, ածխահաններ, համապատասխան քիմիական արտադրություններում աշխատող բանվորներ. |
| 4 | Տեական մաշկաբորբ. | Աշխատանք, վորը կապված է գրգռիչ և այլ նյութերի հետ. | Քիմիական գործարանների բանվորներ, լորոնք գործ ունեն՝ խրոմի, ալկալիի, թթվուտների և այլ նմանորինակ նյութերի հետ. Ներկա նյութերի հետ գործ ունեցող որավիրչչիկների և ցեխաբուժարանների լաննավարներ. |
| 5 | Մաշկի, քթի և բերանի լորձաթաղանթների նույնպես և յեղջերիքի խոցեր | | |
| 6 | Թոքերի փոշոտում (պնեմոկոնիոզ). | Մեծաքանակ փոշու տևական ներշնչում. | Ածխահատներ, հանքագործներ, սելեկատի արդյունաբերության մեջ աշխատող բանվորներ, վողորկողներ և սրողներ. |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | Կեսոնի հիվանդություն. | Ուժեղացած մթնոլորտային ճնշումներ. | Ջրասույզներ և կեսոնում աշխատողներ. |
| 8 | Աչքախտ (նիստագմ). | Ստորյերկրյա աշխատանքներ. | Հանքագործներ և ածխահատներ. |
| 9 | Հյուսվածքների ծանր տառապանք (մաշկի բորբեր, խոցեր, քաղծկեղ, հեստաճում). | Ռենտգենյան և ռադիումի ճառագայթներ. | Ռենտգենյան կաբինետների կազմը, ռենտգենյան խողովակներ պատրաստող բանվորները, ռադիումի հետ կապ ունեցող անձինք. |
| 10 | Սև ջուր (լուսան) հիվանդություն. | Նշանակալից ուժգնություն ունեցող շողավոր էներգիայի սիստեմատիկ ներգործություն. | Ապակի փչողներ, յեփողներ, թրծող և մետաղագործարանի բանվորներ. |
| 11 | Ցանցենու բորբոքում. | | |
| 12 | Ներքին ականջի բորբոքումից առաջացած լսողության նվազում. | Ուժեղ հնչյունների սիստեմատիկ ներգործություն. | Զոդհակներ, կաթսայագործներ, դարբիններ, մեխ պատրաստողներ. |
| 13 | Ծնկի, արմունկի լորձապարկի և ճաճանչային հոդի տևական բորբ. | Համապատասխան հոդերի բնդավառում առաջացող ճնշումը կամ քսումը. | Քարտաշներ, տանիք ծածկողներ, պարկետ պատրաստողներ, սալահատակողներ, ծանր առարկաներ գլորողներ, սահնակավարներ (լեռնագործներ). |
| 14 | Դյուպյուիտրենյան կծկանք (կոնտրակտուրա). | Ձեռքի ափերի փակեղի (ֆասցիայի) սիստեմատիկ հարվածումն. | Վագոնադեկավարներ, փականագործներ, փոստի թղթակցությունների կնքող. |
| 15 | Տևական Ջլապունայա բորբեր (տենդովագիներ). | Համապատասխան մկանների ուժեղ աշխատանք. | Լվացարարներ, հարթուկողներ, տափեր և պիտակներ պատրաստողներ. |

| | | | |
|---|---|---|---|
| 16 | Համակարգային պրոֆեսիոնալ նեվրոզներ (գրակարկումի տիպի). | Համապատասխան մկանային խմբերի գերլարում. | Հեռագրիչներ, սղագրողներ, մեքենագրուհիներ, դաշնակահարներ և ջութակահարներ. |
| 17 | Ծայրանդամների ներվացավեր և ներվաբորբեր. | Համապատասխան ծայրանդամների գերլարում կամ ներվերի բների ճնշում. | Դարբիններ, լվացարարներ, բեռնակիրներ. |
| 18 | Վոտների յերակների լայնացում՝ այտուցներով կամ խոցերով. | Յերկարատև կանգնելը կամ ման գալը. | Գրաչարներ, բեռնակիրներ, գզգզյահի բանվորներ, նամակատարներ, մատուցողներ, առամնաբուժներ, վորոնց աշխատանքը կապված է անընդհատ կանգնելու հետ և վաճառողներ. |
| 19 | Ծայրանդամների հոդերի տևական ձևափոխում՝ հարթույն,հացթուխների վոտներ և այլն. | Հոդերի բարձր ծանրաբեռնում. | |
| 20 | Ձայնալարերի պարեզից, տևական կոկորդաբորբից կամ յերգիչների հանգույցիկներից առաջացած ձայնի կորուստ. | Ձայնալարերի սիստեմատիկ լարումն. | Յերգիչներ, ուսուցիչներ. |
| 21 | Առաջադիմող կարճատեսություն. | Տեսողության յերկարատև լարումն, աշխատանքի նյութի մոտիկության հետևանքով. | Կարողներ, ժամագործներ, փորագրողներ, և որրագրողներ. |

Ծանոթություն․— Հոգեկան հիմնարկների բժշկական աշխատողները, վորոնք անմիջապես սպասարկում են հոգեկան հիվանդներին և կորցրել են իրենց աշխատունակությունը ծանր նևրոզի պատճառով և տառապում են իմացության աստիճանաբար նվազումով ու բնավորության փոփոխմամբ, կամ վաղաժամ արտերիոսկլերոտիկ թուլամտության, կամ կլինիքորեն արտահայտված հոգեկան հիվանդությունների պատճառով, վորոնք առաջացել են տվյալ հիվանդությանը չհամապատասխանող հասակում, յենթակա յեն ապահովագրման միևնույն հիմունքներով այն անձնավորությունների հետ, վորոնք կորցրել են իրենց աշխատունակությունը սույն ցուցակում հիշված պրոֆհիվանդություններից։

Վերոհիշյալ հիվանդություններից մահացած այդ բժշկական աշխատողների ընտանիքների անդամները յենթակա յեն ապահովագրման այն հիմունքներով, ինչպես հիմունքներով յենթակա յեն ապահովագրման սույն ցուցակում հիշված պրոֆհիվանդություններից մահացած անձնավորությունների ընտանիքի անդամները։



# VI ԿԱՆՈՆՆԵՐ № 179

## ԾԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից 1929 թ. մայիսի 23-ին.

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ծերության հետևանքով կենսաթոշակի իրավունք ունեն լեռնային, մետաղի (նույն թվում նաև ելեկտրական) և մանվածքային արդյունաբերության ձեռնարկներում զբաղված բանվորները, նույնպես նաև յերկաթուղային և ջրային փոխադրության բանվորները։

Ծերության կենսաթոշակ նշանակվում է անկախ աշխատունակության դրությունից (առանց բժշկական քննության)։

2. Ծերության հետևանքով ապահովության յենթակա անձանց, բանվորների կարգին դասելու ժամանակ, ապահովագրական գանձարկղները պետք է ղեկավարվեն ըստ տարիֆային տեղեկատուների կամ պրոֆմիությունների և տնտեսական մարմինների միջև համաձայնեցրած պրոֆեսիաների այլ կլասիֆիկացիաների՝ —պրոֆեսիաները բանվորների ու ծառայողների ցանցի մեջ բաժանելով։

Տեղեկատուում նման ցուցմունքների բացակայության դեպքում, այս կամ այն անձին բանվորների կամ ծառայողների կարգին դասելու հարցը լուծվում է ապահովագրական գանձարկղի կողմից՝ համապատասխան պրոֆմիության համաձայնությամբ։

3. Բանվորներին հավասար ծերության կենսաթոշակի իրավունք ունեն․

ա) Լեռնային, մետաղի (նույն թվում ելեկտրական) ու մանվածքային արդյունաբերության և յերկաթուղային ու ջրային փոխադրության բանվորներից առաջքաշվածները, յեթե առաջքաշումը տեղի յե ունեցել կենսաթոշակի համար դիմելուց հինգ տարուց վոչ շուտ։

բ) ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր սոցիալական ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից հրատարակված հատուկ ցուցակների համաձայն բանվորներին հավասարեցված անձինք։

4. Դրամական կենսաթոշակ վճարելու փոխարեն, ապահովագրվածները կարող են թոշակառուներին իրենց համաձայնությամբ տեղավորել հաշմանդամային և նման հիմնարկներում։

5. Թոշակառուները հաշմանդամների կոոպերատիվ միավորների, նույնպես և կոլտնտեսությունների արտադրական կոոպերատիվ արտելների և նման կազմակերպությունների մեջ մտնելու դեպքում, ապահովագրական գանձարկղները կարող են նրանց օժանդակություն ցույց տալ՝ նրանց համար փայը մուծելու միջոցով,— այն չափով, վոր չգերազանցի վեց ամսվա կենսաթոշակից։

6. Մի քանի հիմունքներով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք (ծերության, հաշմության, անհատական կենսաթոշակ և այլն) իրավունք է վերապահվում ընտրելու կենսաթոշակ վորևիցե մեկ հիմունքով։

7. Ծերության կենսաթոշակի իրավունք ունեցող անձի մահվան դեպքում,— նրա ընտանիքն ապահովվում է կենսաթոշակով նեցուկի կորցնելու հետևանքով ընդհանուր հիմունքներով։

## Բ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Կենսաթոշակի իրավունք ունեն՝ ա) տղամարդիկ— վարձու աշխատանքը թողնելու օրը 60 տարին լրացած, յեթե նրանք վարձու աշխատել են ընդհանուր առմամբ 25 տարուց վոչ պակաս, բ) կանայք— վարձու աշխատանքը թողնելու օրը 55 տարին լրացած, յեթե նրանք վարձու աշխատել են ընդհանուր առմամբ 20 տարուց վոչ պակաս։

Լեռնային արդյունաբերությունում, ստորյերկրյա աշխատանքներում զբաղված անձինք, կենսաթոշակի իրավունք ունեն,— յեթե նրանք, վարձու աշխատանքը թողնելու օրը ,50 տարին լրացրել են և բացի դրանից, ընդհանուր առմամբ վարձու աշխատել են 20 տարուց վոչ պակաս, վորից 10 տարին ստորյերկրյա աշխատանքներում։ Ուրիշ վնասակար արտադրություններում զբաղված անձանց համար հասակի և ստաժի իջեցումը սահմանվում է ԽՍՀՄ Աշխժողկոմատին առընթեր Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից։

9. 8-րդ հոդվածում նշված անձանց կենսաթոշ. նշանակվում է



միայն այն դեպքում, յեթե կենսաթոշակի համար դիմելուց առաջ նրանց վերջին վարձու աշխատանքն ընթացել է 1-ին հոդվածում նշված ձեռնարկներում (մեկում կամ հաջորդաբար մի քանիսում) և անընդհատ տևել է մեկ տարուց վոչ պակաս։

8-րդ հոդվածում նշվածների թվից ջրային փոխադրության բանվորներին կենսաթոշակ նշանակվում է միայն այն դեպքում, յեթե կենսաթոշակի համար դիմելուց առաջ նրանց վերջին վարձու աշխատանքն ընթացել է ջրային փոխադրության ձեռնարկներում (մեկում կամ հաջորդաբար մի քանիսում) և անընդհատ տևել է մեկ լրիվ նավագնացության տարուց վոչ պակաս։

10. Վարձու աշխատանքի ընդհանուր ստաժի մեջ մտնում է.

ա) Մինչև 1917 թ. ամեն տեսակի վարձու աշխատանքում անցկացրած ժամանակաշրջանը.

բ) 1917թ. հետո լրիվ ապահովագրմամբ անցնող աշխատանքում անցկացրած ժամանակաշրջանը, նույնպես սկզբում մասնակի ապահովագրմամբ անցնող և հետագայում լրիվ ապահովագրման անցկացրած աշխատանքում յեղած ժամանակաշրջանը.

գ) 1917 թ. հետո մասնակի ապահովագրմամբ անցնող աշխատանքում անցկացրած ժամանակաշրջանը, բայց ընդհանուր առմամբ վոչ ավելի յերեք տարուց,— անկախ նրանից՝ թե տվյալ անձը վորքան ժամանակ է զբաղված յեղել այդ աշխատանքներում։

Բացի այդ ընդհանուր ստաժը հաշվելու ժամանակ՝— աշխատանքի ստաժին հավասարեցվում են.

ա) Ժամանակավոր անաշխատունակության նպաստով ապահովվելու ժամանակամիջոցը.

բ) Աշխատանքի բորսաների կողմից կազմակերպված կոլեկտիվներում կամ ձեռնարկներում անցկացրած ժամանակաշրջանը։

գ) Հասարակական աշխատանքներում անցկացրած ժամանակաշրջանը.

դ) Առանց աշխատանքային պայմանագիրը խախտելու ձեռնարկի կանգնեցման ժամանակաշրջանը (անկախ նրանից, թե բանվորներն իրենց աշխատավարձը պահպանել են թե վոչ)։ Ջրային փոխադրության բանվորների վարձու աշխատանքի ընդհանուր ստաժը հաշվելու ժամանակ նավագնացության շրջանը (անկախ նրա տևողությունից) հաշվվում է վորպես մեկ տարի։

11. Ինչպես մինչև զինվորական ծառայությունը, այնպես էլ նրանից հետո վարձու աշխատած անձանց նկատմամբ ընդհանուր

տաժը հաշվելու ժամանակ վարձու աշխատանքին հավասարեցվում է.

ա) ԲԳԿ Բանակի շարքերում վորպես շարքային և կրտսեր հրամանատարական կազմ պարտադիր (անընդհատ) և գերազետիկ (срочная и сверхсрочная) ծառայությունը:

բ) ԲԳԿ Բանակի շարքերում վորպես միջին, ավագ և բարձր հրամանատարական կազմի ծառայությունը.

12. Տարեկան ժամկետը (հոդ. 9) հաշվելու ժամանակ վարձու աշխատանքին հավասարեցվում են.

ա) Առանց աշխատանքային պայմանագիրը խախտելու ձեռնարկի կանգնեցման ժամանակաշրջանը, բայց ընդհանուր առմամբ տարվա ընթացքում վոչ ավելի յերեք ամսից (անկախ նրանից թե բանվորն իրեն աշխատավարձը պահպանել է թե վոչ):

բ) 1-ին հոդվածում նշված ձեռնարկներում աշխատելու ժամանակ տեղի ունեցած ժամանակավոր անաշխատունակության ապահովության շրջանները:

Վերջին տարվա ընթացքում յերեք ամսից վոչ ավելի գործազրկության ժամանակաշրջանը (ջրային փոխադրության բանվորների նկատմամբ— նավագնացության վերջին շրջանի ընթացքում) չի ընդհատում տարեկան ժամկետը, բայց չի յել մտնում այդ ժամկետի մեջ:

13. Ծերության կեսաթոշակ նշանակվում է միայն մի պայմանով, վոր աշխատանքն ընդհատված լինի 1-ին հոդ.- նշված ձեռնարկում:

14. Ծերության կենսաթոշակ չի նշանակվում այն անձանց, վորոնք կենսաթոշակի համար դիմելու որը՝

ա) Շահ ստանալու նպատակով շահագործում են վարձու աշխատանքը.

բ) Պարապվում են ինքնուրույն առևտրով կամ արհեստագործությամբ, վորոնց շրջանառությունը հարկադրվում է պետական արհեստագործական հարկով.

գ) Վարում են կրոնավորի պաշտոն.

դ) Գտնվում են կուսակրոնի աստիճանում.

յե) Շահագործողների դասակարգին կամ ԽՍՀՄ Կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 28-ի խորհուրդների ընտրությունների մասին հրահանգի 11-րդ հոդվածի «թ», «ժ», «կ» կետերում նըշվածների կարգին (ԽՍՀՄ Օրենք. ժողով. 1926թ. № 66, հոդ. 501) պատկանելու համար ընտրողական իրավունքից զրկված են:



Գյուղացիական տնտեսությունում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելը, նույնպես նաև տնայնագործի կամ արհեստավորի կողմից յեկուսից վոչ պակաս աշակերտի աշխատանքի կիրառելը չի կարող խոչընդոտ հանդիսանալ կենսաթոշակ նշանակելու համար:

15 14-րդ հոդվածում նշված անձանց ընտրողական իրավունքներում վերականգնելու դեպքում,— կենսաթոշակ նրանց նշանակվում է ընդհանուր հիմունքներով: Սակայն այդ դեպքում, շահագործողների դասակարգին կամ ԽՍՀՄ Կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 28-ի խորհուրդների ընտրությունների մասին հրահանգի 11-րդ հոդվածի «թ», «ժ» և «կ» կետերում նշվածների կարգին պատկանելու ժամանակամիջոցում և մինչև այդ ունեցած վարձու աշխատանքը՝— աշխատանքի ստաժի մեջ չի մտնում:

## Գ. ԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

16. Ծերության հետևանքով ապահովության յենթակա անձանց կենսաթոշակը հաշվվում է նրանց վարձու աշխատանքի վերջին տասներկու ամսվա միջին ամսական աշխատավարձից:

Այն դեպքում, յերբ տվյալ անձը վերջին տասներկու ամիսներից վորևիցե մեկ ամսվա ընթացքում յերկու շաբթվա կամ ավելի ժամանակվա համար աշխատավարձ չի ստացել, այդ ամիսը հաշվից հանվում է և փոխարինվում է լրիվ աշխատավարձն ստացած ամսով:

17. Միջին ամսական աշխատավարձը հաշվելու ժամանակ— ժամանակավոր անաշխատունակության նպաստը մտցվում է աշխատավարձի գումարի մեջ, իսկ այդ նպաստն ստանալու ժամանակամիջոցը մտցվում է վարձու աշխատանքի ժամանակամիջոցի մեջ:

Սակայն, յեթե ժամանակավոր անաշխատունակության նըպաստը, մաքսիմումով սահմանափակելու հետևանքով, տրվել է փաստացի աշխատավարձի համեմատությամբ պակաս չափով,— ժամանակավոր անաշխատունակության նպաստի փոխարեն մըտցվում է փաստացի աշխատավարձը՝— մինչև ժամանակավոր անաշխատունակությունը տեղի ունենալու ամիսը, վերջին յերեք ամսվա հաշվով:

18. Այն անձանց, վորոնք բարձր կվալիֆիկացիայի աշխատանքներում հինգ տարուց վոչ պակաս աշխատել և հետագայում անցել են ցածր կվալիֆիկացիայի աշխատանքի,— կենսաթոշակը հաշվվում է նրանց նախկին աշխատավարձով, յեթե բարձր կվալիֆիկացիայի աշխատանքը թողնելու որվանից մինչև կենսաթո-

չակի համար դիմելն անցել է հինգ տարուց ոչ ավելի:

19. Աշխատավարձի գումարի մեջ, ըստ որի հաշվվում է կենսաթոշակը,— մտնում են աշխատավարձի բոլոր տեսակները, որոնց վրա, համաձայն օրենքի, սոցիալական ապահովագրության մուծանքներ են հաշվում:

20. Ծերության կենսաթոշակը նշանակվում է միջին ամսական աշխատավարձի կեսի չափով, բայց ոչ պակաս 20 ռուբլուց: Յեթե աշխատավարձը կազմել է 20 ռուբլուց պակաս,— կենսաթոշակ նշանակվում է լրիվ աշխատավարձի չափով:

Սակայն բոլոր դեպքերում, ծերության կենսաթոշակը չի կարող ընդհանուր պատճառների հետևանքով աշխատունակությունը կորցրած և տվյալ անձի հետ մի տեսակ աշխատավարձ ունեցող 2-րդ խմբի հաշմանդամների կենսաթոշակից պակաս լինել:

Ծերության կենսաթոշակը չի կարող 112 ռ. 50 կ. բարձր լինել:

21. Թոշակառուի բնակավայրը փոխելու հանգամանքը չի կարող նշանակած կենսաթոշակի չափի մեջ փոփոխության առաջ բերել:

## Դ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

22. Ծերության կենսաթոշակը նշանակվում է ցմահ. ա) վարձու աշխատանքը դադարեցնելու որվանից, յեթե թոշակ նշանակելու մասին հայտարարությունը տրվում է վարձու աշխատանքի շրջանում կամ աշխատանքը դադարեցնելու որվանից, մինչև յերեք ամիս լրանալը, բ) մնացած դեպքերում դիմում տալու որվանից:

23. Թոշակառուի կողմից ժամանակին չպահանջված կենսաթոշակը, անցյալ ժամանակի համար տրվում է ոչ ավելի, քան վեց ամիս հետո ժամանակամիջոցի համար՝ հաշված չպահանջված կենսաթոշակի համար դիմելու որվանից: Ապահովագրական Գանձարկղի հանցանոք չստացած կենսաթոշակը, տրվում է անցյալ ժամանակի համար, առանց սահմանափակման: Մահվան հետևանքով թոշակառուի կողմից չստացած թոշակի վճարման կարգը սահմանվում է դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ:

24. Թոշակառուի կողմից նրան հասանելիք կենսաթոշակի ստանալը չի կարող նրան կենսաթոշակի իրավունքից զրկելու հիմք ծառայել, անկախ նրանից, թե որքան ժամանակ չի ստացել նա կենսաթոշակը:



25. Ծերության կենսաթոշակ ստացող անձինք, 14-րդ հոդվածում նշված հանգամանքները տեղի ունենալու դեպքում, զրկվում են նշանակված կենսաթոշակից:

Այդ դեպքում, ընտրողական իրավունքից զրկվածները (հոդ. 14, կ. «յե») կենսաթոշակից զրկվում են.

ա) Պրոֆմիության անդամները— ընտրողական իրավունքից զրկվելու հետևանքով պրոֆմիությունից հեռացնելու որվանից:

բ) Այն անձինք, որոնք պրոֆմիության անդամ չեն և նրանց ընտրողական իրավունքից զրկելու մասին ընտրողական հանձնաժողովի որոշումը բողոքարկել են,— վերջին ատյանի կողմից ընտրողական իրավունքների վերականգնումը մերժելու որվանից.

գ) Մնացած անձանց,—ընտրողական իրավունքներից զրկելու մասին ընտրողական հանձնաժողովի որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետն անցնելու որվանից:

26. Այն անձանց, որոնց կենսաթոշակը մերժվել է ընտրողական իրավուքից զրկվելու հետևանքով, բայց հետագայում իրավունքները վերականգնվել են,—կենսաթոշակ վճարվում է ընտրողական իրավունքներում վերականգնելու որվանից:

## ՅԵ. ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԴԱԴՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ ՅԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՆԳՆԵՑՈՒՄԸ

27. Ծերության կենսաթոշակի վճարումը կանգնեցվում է. ա) գյուղական վայրերում ապրող և անհատական կարգով գյուղատնտեսական հարկով հարկադրվող ծխի մեջ մտնող թոշակառուներին. բ) անձնական արհեստագործությամբ զբաղվող, պետական արհեստագործական հարկի կայուն դրույքներով հարկադրվող թոշակառուներին:

28. Բացառությամբ 27-րդ հոդվածում նախատեսված դեպքերից,—թոշակառուն դադումներ կամ այլ յեկամուտներ ունենալու դեպքում, նրան կենսաթոշակ վճարվում է այն չափով, որ կենսաթոշակի և դադումի կամ այլ յեկամուտների գումարն ընդհանուր առմամբ չգերազանցի նրա նախկին աշխատավարձը:

Թոշակառուի գյուղական տնտեսությունից ստացած յեկամուտը, յեթե անհատական կարգով գյուղատնտեսական հարկով չի հարկադրվում,—յենթակա չի հաշվառման:

29. Թոշակառուն հաշմանդամների կոոպերատիվ միավորի, կոլ. տնտեսության, արտելի և այլոց մեջ մտնելու դեպքում,—

նրա կենսաթոշակների վճարումը կանգնեցվում է միավորի մեջ մտնելու օրվանից հաշված—չորրորդ ամսից սկսած մինչև այն ժամանակ, յերբ նրան հասանելիք կենսաթոշակը պահելով կմարվի ապահովագրական գանձարկղի կողմից փայի հաշվին մուծած գումարը (հոդվ. 6):

Ինչպես հետագայում, նույնպես և թոշակառուն միավորի մեջ մտնելու օրվանից, առաջին յերեք ամսվա ընթացքում կատարվում է թոշակառույի յեկամուտների հաշվեառումն ընդհանուր հիմունքներով (հոդվ. 28):

30. Միայնակ թոշակառուն հոգեբուժական հիմնարկություններում վեց ամսից ավելի ձրիաբար մնալու դեպքում,—նրան հասանելիք կենսաթոշակի չափը յոթերորդ ամսից սկսած կրճատվում է 10 ռուբլով:

Թոշակառուն հոգեբուժական հիմնարկությունից դուրս գալու դեպքում, կնսաթոշակի կրճատման հետևանքով չստացած գումարը վճարվում է նրան, բայց վոչ ավելի քան վեց ամսվա համար: Մնացած թոշակառուներին նման դեպքերում կենսաթոշակը վճարվում է առանց փոփոխությունների:

31. Միայնակ թոշակառույին կալանքի տակ առնելու դեպքում կենսաթոշակի վճարումը կանգնեցվում է յերկրորդ ամսից սկսած կալանքի տակ գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում: Միայնակ թոշակառուն արդարանալու կամ գործը կարճվելու դեպքում,—կենսաթոշակ նրան վճարվում է նույնպես կենսաթոշակի վճարումը դադարեցրած ամբողջ ժամանակամիջոցի համար, բայց վոչ ավելի քան վեց ամսվա համար: Կալանքի տակ առնված մնացած թոշակառուներին—կենսաթոշակի վճարումը չի կանգնեցվում:

32. Ըստ 30-րդ և 31-րդ հոդվածների միայնակ համարվում են այն թոշակառուները, վորոնք իրենց խնամքի տակ չունեն՝ ծնողներ, կին, յերեխաներ, յեղբայրներ կամ քույրեր:

33. Կենսաթոշակի վճարումը վերականգնեցվում է նրա կանգնեցումն առաջ բերող հանգամանքները վերանալու օրվանից, անկախ կանգնեցման տևողությունից:

## Զ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՀԱՐՈՒՑԵԼԸ

34. Կենսաթոշակ նշանակելու համար դիմումներ տրվում են յերկրային կամ փոխադրական (նայած վերջին աշխատանքի վայրից) ապահովագրական գանձարկղին ըստ կենսաթոշակի համար դիմող անձի բնակավայրի:



35. Կենսաթոշակի համար իրավունք ունեցող անձինք կարող են դրա համար դիմել իրենց ուզած ժամանակը,—անկախ նրանից, թե վարձու աշխատանքը դադարեցնելու որից վորքան ժամանակ է անցել:

36. Կենսաթոշակ նշանակելու համար դիմում հարուցել կարելի յե ինչպես գրավոր, նույնպես և բանավոր ձևով: Վերջին դեպքում դիմումը գրվում է ապահովագրական գանձարկղի աշխատակցի կողմից դիմողի բառերից:

37. Կենսաթոշակի համար դիմող անձը պիտի ներկայացնի. ա) ընդհանուր ստաժ և մեկ տարվա վարձու աշխատանք (հոդվ. 8 և 9) ունենալը հաստատող փաստաթղթեր. հաշվեգրքույկներ, աշխատանքի վայրերից վկայականներ, պրոֆմիության տոմսեր, տեղեկանքներ պրոֆստաժի մասին, մինչև հեղափոխության շրջանի բանվորական կազմակերպությունների անդամատոմսեր և այլն, բ) հասակը հաստատող փաստաթուղթ—տեղեկանք տնային վարչությունից, միլիցիայից և այլն, գ) տեղեկանք վարձու աշխատանքի վերջին տասներկու ամսվա աշխատավարձի մասին:

38. Ապահովագրական գանձարկղը պարտավոր է կենսաթոշակ նշանակելու մասին դիմումն ընդունել, անկախ նրանից՝ պահանջվելիք փաստաթղթերը ներկայացվում են թե վոչ:

Պակաս փաստաթղթերը ներկայացնելու համար դիմողին դիմում տալու օրվանից տրվում է վեց ամսվա ժամկետ: Վեց ամսվա ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, կենսաթոշակ նշանակելու գործը կարճվում է և կարող է վերըսկըսվել կենսաթոշակի համար նոր դիմում հարուցելու դեպքում միայն:

39. Ապահովագրական գանձարկղը դիմողին տալիս է ստացական՝ դիմումը նրանից ընդունելու մասին—նշելով դիմումն ընդունելու որաթիվը:

## Է. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

40. Յեթե դիմողը մինչև 1923 թ. ժամանակամիջոցի համար իրեն վարձու աշխատանքը հաստատող փաստաթղթեր չի ունենում, նա իրավունք ունի այդ աշխատանքը հաստատել վկաների ցուցմունքներով ապահովագրական գանձարկղին կից աշխատանքային ստաժը հաստատող հանձնաժողովի միջոցով:

Այդ դեպքում, նա պարտավոր է հանձնաժողովին ցույց տալ

այնպիսի անձանց ազգանունը, անունը, հայրանունը և հասցեն վորոնք ի վիճակի լինեն հաստատել նրա վարձու աշխատանքը և այդպիսինի տևողությունը:

1923 թ. սկսած ժամանակամիջոցի աշխատանքային ստաժը պետք անպայման ապացուցված լինի փաստաթղթերով: Այդ ժամանակամիջոցի ստաժի հաստատելը վկաների ցուցմունքներով թույլատրվում է բացառիկ դեպքերում միայն (ձեռնարկի լրիվ լուծարքը, արխիվային մարմիններից տեղեկանք ստանալու անհնար լինելը և այլն):

41. Հանձնաժողովը պարտավոր է ծանուցագրերով կանչել դիմողին և դիմումում նշված վկաներին: Դիմողին նույնպես իրավունք է վերապահվում վկաներին բերել իրեն հետ:

42. Յեթե վկաներից մեկն ու մեկն ապրում է ապահովագրական գանձարկղի գործունեության շրջանից դուրս,—վերջինս այդ վկայի հարցաքննությունը հանձնարարում է կատարել նրա բնակավայրի ապահովագրական գանձարկղին:

43. Դիմողին և վկաներին, հանձնաժողովի կանչելու հետևանքով կրած ծախսերը,—ապահովագրական գանձարկղի կողմից չեն հատուցվում:

44. Ապահովագրական գանձարկղը դիմումն ընդունելու որվանից յերեք որվա ժամկետում գործը հանձնում է հանձնաժողովին,—այդ մասին միաժամանակ հայտնելով նաև դիմողին:

45. Հանձնաժողովը պարտավոր է գործն ստանալու որվանից մեկ շաբթվա ժամկետում քննել իրեն ուղարկված գործը:

46. Հանձնաժողովը գործի քննության որը վորոշում է հանում և այդ հայտնում դիմողին ստորագրությամբ:

Դիմողի պահանջմամբ նրան պետք տրվի հանձնաժողովի վորոշման պատճենը:

47. Յեթե ապահովագրական գանձարկղը գտնի, վոր հանձնաժողովը տվյալ գործի բոլոր հանգամանքները հաշվի չի առել, գանձարկղն ըստ եության վորոշում է ինքը, կամ ուղարկում է հանձնաժողովին նորից քննության առնելու համար:

48. Հանձնաժողովի նախագահը վորոշման հետ համաձայն չլինելու կամ վորոշումը՝ կենսաթոշակի համար դիմող անձի կողմից բողոքարկվելու դեպքում,—ստաժ ունենալու հարցը վերջնականապես լուծվում է ապահովագրական գանձարկղի կողմից:



## Ը. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

49. Ծերության կենսաթոշակը նշանակվում է այն ապահովագրական գանձարկղների կողմից և նույն կարգով,— ինչպես և հաշմանդամության կենսաթոշակը:

50. Կենսաթոշակ նշանակելու կամ մերժելու մասին վորոշումը պետք կայացվի բոլոր անհրաժեշտ նյութերն ապահովագրական գանձարկղում ստացվելու որից վոչ ուշ, քան մինչև յերկու շաբաթը:

51. Ապահովագրական գանձարկղի վորոշման մասին հայտնագիրն ուղարկվում է դիմողին վորոշում կայացնելու որից վոչ ուշ քան մինչև յերեք որը: Հայտնագիրը պետք պարունակի բողոքարկման ժամկետն ու կարգը, իսկ կենսաթոշակի նշանակելը մերժելու դեպքում,—նաև մերժման պատճառները:

52. Կենսաթոշակի նշանակելը մերժելու դեպքում,—դիմողի ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են իրեն բողոքարկման համար, սահմանված վեց ամսյա ժամկետը (հոդվ. 55) լրանալուց հետո միայն, իսկ բողոք տալու դեպքում,—գործի վերջնական լուծումից հետո:

Վերադարձրած յուրաքանչյուր փաստաթղթի վրա դրվում է ապահովագրական գանձարկղի շտամպը:

53. Նոր յերևան յեկած հանգամանքների հետևանքով, գործը վերանայելու ժամանակ, ապահովագրական գանձարկղը հանում է պատճառաբանված վորոշում, վորի մեջ պետք նշված լինի գործի վերանայման համար հիմք ծառայած հանգամանքները:

Այդ վորոշումը հայտնվում է թոշակառույին յերեք որից վոչ ուշ, նշելով վերանայման պատճառները և բողոքարկման ժամկետն ու կարգը:

## Թ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՅԵՎ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԵԼԸ

54. Ապահովագրական գանձարկղների վորոշումը կենսաթոշակ նշանակելու կամ մերժելու մասին, նույնպես նաև վճարումը կանգնեցնելը, կենսաթոշակի պակասեցնելը կարող են բողոքարկվել հետևյալ վերադաս սոցիալական ապահովագրության մարմնին, վորի վորոշումը հանդիսանում է վերջնական:

55. Բողոք տրվում է վորոշում հանող ապահովագրական գանձարկղի միջոցով, վերջինի վորոշման մասին հայտագիրը դիմողին հանձնելու որից վեց ամսից վոչ ուշ:

Ապահովագրական գանձարկղը բողոքն ստանալով,—նշանակում է նրա վրա ստանալու որաթիվը, տալիս է դիմողին ստորագրություն՝ բողոքը հարակից փաստաթղթերով ընդունելու մասին և, ոչ ուշ յոթ օրից, բողոքն ուղարկվում է վերադաս մարմնին՝— կենսաթոշակի գործի և իրեն յեզրակացության հետ միասին:

56. Վեց ամսվա ժամկետը լրանալուց հետո տրված բողոքները վերադարձվում են դիմողին,—նշելով վերադարձնելու պատճառները:

Ժամկետն անցնելու պատճառները հարգելի լինելու դեպքում,—ապահովագրական գանձարկղը կարող է վերականգնել ժամկետը: Գանձարկղի վորոշումը ժամկետը վերականգնելու հարցի մասին հանդիսանում է վերջնական և բողոքարկման յենթակա չէ:

57. Վերադաս մարմինը գործը քննելուց հետո, վերադարձնում է այդպիսին իր վորոշման հետ միասին ապահովագրական գանձարկղին, իսկ միաժամանակ նրա պատճենն ուղարկվում է բողոքատուին:

58. Բողոք տալու օրը համարվում է այնպիսին սոցիալական ապահովագրության մարմիններին հանձնելու օրը կամ բողոքն ուղարկելու փոստի շտամպի որաթիվը:

59. Վերադաս մարմիններն այն գործը, վորի առթիվ տրված է բողոք, քննում է ըստ էության: Վորոշումներ հանելու ժամանակ, նա կապված չէ բողոքում նշված հիմունքների հետ:

60. Վերադաս ապահովագրական գանձարկղներին իրավունք է վերապահվում հսկողության կարգով վերանայել իրեն յենթակա ապահովագրական գանձարկղների վորոշումները:

Նույնպիսի իրավունք վերապահվում է դաշնակից հանրապետությունների Աշխատողկոմատների Գլխսոցապվարչություններին իրենց յենթակա ապահովագրական գանձարկղների վորոշումների նկատմամբ և ԽՍՀՄ Աշխատողկոմատի Կնտսոցապվարչությանը՝— ինչպես Գլխսոցապվարչությունների, այնպես էլ բոլոր ապահովագրական գանձարկղների վորոշումների նկատմամբ:

## Ժ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Կենսաթոշակը վճարվում է յուրաքանչյուր ամիս կենսաթոշակի գրքույկով ապահովագրական գանձարկղի կողմից սահմանված ժամկետներում:



62. Կենսաթոշակի վճարումն ապահովագրական գանձարկղի կողմից կարող է կատարվել ինչպես անմիջապես, նույնպես և խնայողական դրամարկղների և փոստի միջոցով:

63. Թոշակառուն նոր բնակավայր տեղափոխվելու դեպքում,—պիտի այդ մասին հայտնի կենսաթոշակ ստանալու վայրի ապահովագրական գանձարկղին:

64. Թոշակառուի նախկին բնակավայրի ապահովագրական գանձարկղի վորոշումը նրան կենսաթոշակ նշանակելու մասին,—պարտադիր է նոր բնակավայրի ապահովագրական գանձարկղի համար:

65. Կենսաթոշակի գրքույկը կորցնելու դեպքում, թոշակառուն այդ մասին պիտի անմիջապես հայտնի ապահովագրական գանձարկղին և իր հաշվին գրքույկը կորցնելու մասին հայտարարություն տալով,—հայտարարություն տալու մասին անդորրագիրը պիտի ներկայացնի ապահովագրական գանձարկղին:

Կորցրածի փոխարեն կենսաթոշակի նոր գրքույկը տրվում է անդորրագիրը ներկայացնելուց հետո ոչ ուշ յերկու շաբթից: Կենսաթոշակի նոր գրքույկի վրա գրվում է «դուբլիկատ» նշումը:

66. Կենսաթոշակի վճարումը կանգնեցնելու կամ դադարեցնելու դեպքում կենսաթոշակի գրքույկը թոշակառույից հետ է վերցվում, իսկ նրան տրվում է համապատասխան ստացական:

Սոցիալական Ապահովագրության Միութենական
Խորհրդի նախագահ՝ ԿՈՏՈՎ.
Պատ. քարտուղար՝ ՊԵՏՐՈՎ.

## VII ՀՐԱՀԱՆԳ № 331

### ԽՍՀՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ 1929 Թ. ՀՈՒԼԻՍԻ 3-Ի «ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՅԵՐԿԱՐԱՄՅԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԹՈՇԱԿԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎՈՐՈՇՈՒՄԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

*Հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատի կողմից 1929 թվի հոկտեմբերի 11-ին:*

### Ա. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յերկարամյա ծառայության հետևանքով կենսաթոշակի իրավունքով օգտվում են լուսավորության հետևյալ աշխատավորները.

ա) Ա. աստիճանի և բարձր տիպի (սույն հոդվածի կ. «յե») դպրոցների առաջին չորս խմբակների ուսուցիչները.

բ) Գյուղական վայրերի խրճիթ-ընթերցարանների և գրադարանների ղեկավարները.

գ) Գյուղական վայրերի գյուղատնտեսական տարրական դըպրոցների ուսուցիչները.

դ) Գյուղական վայրերի մանկատների մանկավարժական կազմը.

յե) Բարձր տիպի դպրոցների (բ. աստիճանի դպրոցներ, յոթնամյակներ, նույն թվում նաև գործարանային, իննամյակներ և գյուղյերիտական) հինգերորդ խմբակից սկսած—ուսուցիչները.

զ) Տեխնիկումների դասատուները.

է) Պրոֆտեխնիկական դպրոցների դասատուները.

ը) Կրթա-արդյունաբերական արհեստանոցների դասատուները.

թ) Տեխնիկումների, պրոֆ-տեխնիկական դպրոցների և կրթա-արդյունաբերական արհեստանոցների արդյունաբերական կրթության հրահանգիչները.

ժ) Քաղաքների և քաղաքատիպ վայրերի մանկատների մանկավարժական կազմը.

ի) Նախադպրոցական հիմնարկների (մանկապարտեզներ, հրապարակներ և այլն) մանկավարժական կազմը.



լ) Քաղաքների և քաղաքատիպ վայրերի գրադարանապետները.

խ) Անգրագիտության լիկվիդացիայի հիմնարկների (դպրոցներ, դասընթացներ, խմբակներ և այլն) ուսուցիչները.

ծ) Շրջանային (գավառակային) տեսուչները:

2. 1-ին հոդվածում նշված աշխատավորները կենսաթոշակի իրավունք են ձեռք բերում մի պայմանով, յեթե նրանք վերոհիշյալ պաշտոններում աշխատած են լինում 25 տարուց վոչ պակաս, նույն թվում, 5 տարուց վոչ պակաս խորհրդային իշխանության օրոք:

Վերոհիշյալ ստաժը հաշվելու ժամանակ,—նրա մեջ է մտցվում ամբողջ ծառայությունը, անկախ նրանից՝ մեկ թե մի քանի պաշտոններում և 1-ին հոդվածում նշված հիմնարկներից մեկ թե մի քանիսում է անցել այդ աշխատանքը:

Ծանոթություն.—*Ապահովագրական գանձարկղներին իրավունք է վերապահվում, առանձին դեպքերում, յերկարամյա ծառայության համար կենսաթոշակ նշանակել նաև այնպիսի անձանց, վորոնք խորհրդային իշխանության օրոք լրիվ հինգ տարի չեն ծառայել և վորոնք դրա համար բավականաչափ հարգելի պատճառներ ունեն:*

3. 1-ին հոդվածում նշված ծառայությունը հավասարեցվում է համապատասխան աշխատավորների ծառայությանը՝ բոլոր տարրական դպրոցներում—նախկին մինիստրական, զեմստվային, ժողովրդական, ծխական, յեկեղեցական-ծխական, քաղաքային և բարձր տարրական դպրոցներ, գիմնազիաներում, ռեալական և առևտրական դպրոցներում, տեխնիկումներում, ուսուցչական սեմինարիաներում, խորհ. կուսդպրոցներում և ամեն տեսակի այլ կրթական հիմնարկներում, ինչպես մինչ հեղափոխության, այնպես էլ հետ հեղափոխության շրջանում, վորոնք ըստ իրենց ծրագրի համապատասխանում են տարրական կամ միջնակարգ կրթական հիմնարկներին, անկախ թե ինչ միջոցներով են պահպանվել կամ պահպանվում: Վորպես վարիչ, ուսուցիչ, դաստիարակ ու հրահանգիչ յերեխաների և անչափահասների համար աշխատանքային գործերի հիմնարկներում, ինչպես մինչ հեղափոխության, այնպես էլ հետ հեղափոխության շրջանում, նախկին հոգևոր ու զինվորական դպրոցների և հոգևոր սեմինարիաների ընդհանուր-կրթական առարկաների դասատուները, աշխատանքային պրոցեսների, յերգեցողության, յերաժշտության, նկարչության և ֆիզկուլտուրայի դասատուները, յեթե այդ վերջինը հանդիսացել է ուսուցչի հիմնական աշխատանքը:

Կիսագրագետների և անգրագիտության վերացման դպրոցների աշխատանքը հավասարեցվում է 1-ին հոդվածում նշված ծառայության այն դեպքում միայն, յեթե այդպիսին կրել է մշտական բընույթ, այն է՝—տևել է ամբողջ ուսումնական տարին:

1-ին հոդվածում նշված ծառայությանը չի հավասարեցվում դասարանական վերակացուների, վերակացուհիների, դասարանական դաստիարակչուհիների պաշտոնները և կրոնական առարկաներ և զինվորական կարգապահության ուսմունքի դասատուները, նույնպես նաև մինչ հեղափոխության շրջանում վորպես «ուսուցչի թեկնածու»-ի աշխատանքը կիրակնորյա դպրոցներում: Առաջին հոդվածում նշված անձանց աշխատանքի ստաժի մեջ չի մտնում կրոնական պաշտոններին նախորդող կամ զուգադիպող աշխատանքները, նույնպես նաև շահ ստանալու նպատակով վարձու աշխատանք շահագործողների և ինքնուրույն առևտրական գործունեությամբ կամ, շրջանառությունը պետական արհեստագործական հարկով հարկադրվող, արհեստագործությամբ զբաղվածների այդ աշխատանքներին նախորդող կամ զուգադիպող աշխատանքները:

4. 25 տարվա ծառայության ժամկետը հաշվելու ժամանակ—1927 թ. հոկտեմբերի 1-ից սկսած, հեռավոր վայրերում ծառայության յուրաքանչյուր տարին, վոչ հեռավոր վայրից աշխատանքի ուղարկված աշխատավորների համար, հավասարեցվում է.

ա) Առաջին գոտու հեռավոր վայրերում—մեկ տարի ութ ամսվա.

բ) Յերկրորդ գոտու հեռավոր վայրերում—1 տարի 3 ամսվա.

Հեռավոր վայրերին դասվում են ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1927 թ. մայիսի 11-ի «ԽՍՀՄ հեռավոր վայրերի պետական հիմնարկների և ձեռնարկների աշխատավորների արտոնությունների մասին» 2-րդ հոդվածի կարգով հրատարակված ցանկում նշված վայրերը (ԽՍՀՄ օրենք. ժող. 1927 թ. № 25, հոդ. 270):

Հեռավոր վայրերում քոչվորների մեջ աշխատանք տանող 1 հոդվածում նշված աշխատավորները—25 ամյա աշխատանքի ժամկետը հաշվելու նկատմամբ, օգտվում են սույն հոդվածով սահմանված արտոնությունով, անկախ նրանից, թե ինչպիսի վայրերից են նրանք աշխատանքի ուղարկված:

5. Ըստ 1 և 2-րդ հոդվածներում նշված պաշտոնների աշխատանքի ստաժը չպետք է անպայման առանց ընդմիջումների լինի: Ստաժի մեջ է մտնում.



ա) Կարմիր բանակի և ֆլոտի շարքերում գտնվելու ժամանակամիջոցը.

բ) Խորհրդային և պրոֆեսիոնալ ընտրովի պաշտոններում յեղած ժամանակամիջոցը:

գ) Մինչև հեղափոխությունը քաղաքական հանցանքների համար պատիժ կրելու ժամանակամիջոցը (կալանք, աքսոր, բանտ կամ բերդ):

դ) Մինչև հեղափոխության շրջանում հակակառավարչական գործունեության համար մանկավարժական աշխատանքից հեռացնելու ժամանակաշրջանը (մինչև մի վորևիցե այլ աշխատանքի անցնելը):

յե) Սոցիալական ապահովագրության կարգով լուսավորության աշխատավորի կողմից ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության փաստորեն նպաստ ստանալու ժամանակամիջոցը.

6. Առաջին հոդվածում նշված պաշտոններում կատարած վարձու աշխատանքի փաստը պետք հաստատված լինի փաստաթղթերով: Այդ աշխատանքների գոհացուցիչ ապացույցը հանդիսանում են նախկին ծառայության ցուցակները կամ դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատի մարմինների կողմից տրված վկայականները:

Այդ վկայականներում պետք պարզ նշված լինեն. ա) ծառայության տեղը, բ) Յուրաքանչյուր վայրի ծառայության պաշտոնը, գ) ըստ յուրաքանչյուր հիմնարկության և պաշտոնի ծառայության սկիզբն ու վերջը:

7. Քաղաքական հանցագործության համար կրած պատժի և մինչ հեղափոխության շրջանը մանկավարժական աշխատանքից հեռացվելու տևողությունն ու փաստը պետք հաստատված լինեն համապատասխան ապացույցներով—տեղեկանքներ կուսակցական մարմնից, արխիվային մարմնից, նախկին քաղ. աքսորականների ընկերություններից և այլն:

8. Առաջին հոդվածում նշված անձանց կենսաթոշակ տրվում է անկախ թոշակառուի աշխատունակությունից և գույքային դրությունից, ի բաց առյալ 15-րդ հոդվածներում նշվածներից:

9. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձի մահվան դեպքում, կենսաթոշակի իրավունքով օգտվում են նրա խնամքի տակ յեղած և ապրուստի համար բավականաչափ միջոցներ չունեցող ընտանիքի հետևյալ անդամները.

ա) Անաշխատունակ կամ 16 տարին չլրացած, իսկ յեթե ուսումնական հիմնարկներում սովորում են 18 տարին, յերեխաները, յեղբայրները և քույրերը:

բ) Ծնողներն ու կինը,—յեթե անաշխատունակ են կամ լրացել են՝ տղամարդիկ 60 տարին և կանայք 55 տարին:

գ) Ծնողներն ու կինը, թեև աշխատունակ, բայց մահացածի ութ տարին չլրացած յերեխաների, յեղբայրների, քույրերի խնամելով են զբաղված:

Ծանոթ.— Անաշխատունակ են հաշվվում այն անձինք, վորոնք եքսպերտ մարմինների կողմից դասված են հաշմության 1, 2 և 3-րդ կարգերին:

10. Ըստ նշանակված կենսաթոշակների, ժամանակին չպահանջված վճարումները, անցյալ ժամանակի համար վճարվում են, ապահովագրական գանձարկղներին համապատասխան գումարն ստանալու համար դիմելու օրվանից հաշված, 6 ամիս հետ ժամանակամիջոցի համար:

Թոշակառուի կողմից նրա մահվան հետևանքով չստացված կենսաթոշակի վճարման կարգը վորոշում է դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ:

1. Մի քանի պատճառներով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք (կենսաթոշակ յերկարամյա ծառայության, հաշմանդամության, նեցուկի մահվան հետևանքով, անհատական և այլն) իրավունք է վերապահվում կենսաթոշակն ընտրելու վորևիցե մեկ պատճառով:

## Բ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

12. Առաջին հոդվածում նշված անձանց կենսաթոշակ նշանակվում է.

ա) Ամսական 30 ռուբլու չափով— Ա. աստիճանի դպրոցների և բարձր տիպի դպրոցների առաջին չորս խմբակի ուսուցիչներին, խրճիթ-ընթերցարանների ղեկավարներին ու գրադարանապետներին, գյուղատնտեսական տարրական դպրոցների ուսուցիչներին, մանկատների և նախադպրոցական հիմնարկների մանկավարժական կազմին, անգրագիտության վերացման հիմնարկների ուսուցիչներին, տեխնիկումների արդյունաբերության ուսուցման, պրոֆտեխնիկական դպրոցների և կրթա-արդյունաբերական արհեստանոցների հրահանգիչներին, նույնպես և կրթա-արդյունաբերական արհեստանոցների դասատուներին:



բ) Ամսական 40 ռուբլու չափով— բարձր տիպի դպրոցների, հինգերորդ խմբից սկսած ուսուցիչներին, պրոֆտեխնիկական դպրոցների դասատուներին, նույնպես և շրջանային (գավառակային) տեսուչներին:

գ) Ամսական 50 ռուբլու չափով— տեխնիկումների դասատուներին:

13. Այն դեպքում, յերբ լուսավորության աշխատավորը կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու մոմենտին միաժամանակ, համաձայն սույն հրահանգի, զանազան չափի կենսաթոշակի իրավունք տվող պաշտոններում է գտնվել,— կենսաթոշակ նրան նշանակվում է համաձայն այն պաշտոնի, վորը բարձր չափի կենսաթոշակի իրավունք է տալիս:

14. Վոչ հեռավոր վայրերից աշխատանքի ուղարկված կենսաթոշակի իրավունք ունեցող աշխատավորներին, յեթե նրանք առաջին գոտու հեռավոր վայրերում սկսած 1927 թ. հոկտեմբերի 1-ից աշխատած են լինում 10 տարուց վոչ պակաս, կենսաթոշակ նշանակվում է կրկնակի չափով, իսկ 1927 թ. հոկտեմբերի 1-ից յերկրորդ գոտու հեռավոր վայրերում 15 տարուց վոչ պակաս ծառայածներին— մեկուկես չափով:

Սույն հոդվածով նախատեսնված բարձրացված կենսաթոշակ նշանակվում է նույնպես հեռավոր վայրերում քոչվորների մեջ աշխատող աշխատավորներին, անկախ նրանից, թե նրանք ինչպիսի վայրերից են աշխատանքի ուղարկված:

15. Առաջին հոդվածի «ա», «բ», «գ» և «դ» կետերում նշված և կենսաթոշակի իրավունք ունեցող անձինք՝— իրենց կամ այդ կետերում նշված աշխատանքներից մեկում մնալու դեպքում, կենսաթոշակ ստանում են 10 ռուբլու չափով, անկախ իրենց ստացած աշխատավարձի չափից:

16. Աշխատավորի մահից հետո մնացած ընտանիքին, կենսաթոշակ նշանակվում է. կնոջը լրիվ կենսաթոշակի կեսի չափով, իսկ ընտանիքի մնացած անդամներից յուրաքանչյուրին՝ լրիվ կենսաթոշակի մեկ քառորդի չափով, սակայն այն հաշվով, վոր ամբողջ ընտանիքին տրվելիք կենսաթոշակի ընդհանուր գումարը չգերազանցի կենսաթոշակի լրիվ չափից:

Ծանոթ.— Կենսաթոշակի լրիվ չափը համարվում է 12,13 և 14-րդ հոդվածներում նշված չափերը:

17. Սույն հրահանգի կարգով նշանակված կենսաթոշակը յեն-

թակա չէ հարկադրման ընդհանուր պետական վորևիցե մեկ հարկով կամ տուրքով:

## Գ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

18. Յերկարամյա ծառայության համար կենսաթոշակ տրվում է.

ա) Առաջին հոդվածի «ա», «բ», «գ» և «դ» կետերում նշվածներին դիմում տալու որից.

բ) Առաջին հոդվածում նշված լուսավորության մնացած բոլոր աշխատավորներին դիմում տալու օրվանից, բայց աշխատանքը թողնելուց վոչ շուտ:

գ) Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած կամ կենսաթոշակ ստացող մահացած անձանց ընտանիքներին դիմում տալու օրվանից:

19. Սույն հրահանգի կարգով կենսաթոշակը վճարվում է.

ա) Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց—ցմահ.

բ) Փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին մինչև 16 տարին լրանալը, իսկ յեթե կրթական հիմնարկներում սովորում են մինչև 18 տարին լրանալը.

գ) Անաշխատունակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին մինչև աշխատունակության վերականգնելը.

դ) Ծնողներին և կնոջը—անաշխատունակներին, կամ տղամարդկանց 60 տարին և կանանց 55 տարին լրացածներին—ցմահ.

ե) Ծնողներին և կնոջը, յեթե նրանք զբաղված են յերեխային խնամելով,—մինչև յերեխայի ութ տարին լրանալը:

Ծանոթ.— Ամուսնուն, յեթե նա նորից ամուսնանում է,— կենսաթոշակի վճարումը դադարեցվում է:

## Դ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ

20. Կենսաթոշակի նշանակումը կատարվում է այն գանձարկղների կողմից, վորոնց հաշմության կենսաթոշակ նշանակելու իրավունք է վերապահված:

Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումներ ընդունվում են սոցիալական ապահովագրության մարմինների կողմից ըստ դիմումատվողի բնակավայրի, ինչպես անմիջապես, այնպես էլ լուսավորության աշխատավորների պրոֆմիության ստորադաս բջիջների միջոցով (տեղկոմ, խմբկոմ և այլն): Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները փոխադրական լուսավորության աշխատավորների կողմից տրվում են իրենց բնակավայրին մոտակա այդ գծի յերկրային ապահովագրական գանձարկղին կամ դրան համապատասխան վարչա-յերկրային միավորին, վորտեղ նրանք ապրում են, անմիջապես կամ լուսավորության աշխատավորների պրոֆմիության ստորադաս բջիջների միջոցով:



21. Աշխատանքի հաշմանդամների և նեցուկը կորցրած ընտանիքների նկատմամբ դիմումներ տալու համար սահմանված ժամկետը սույն հրահանգի կարգով թոշակ ստացողների վրա չի տարածվում:

22. Ապահովագրական գանձարկղները պարտավոր են կենսաթոշակ նշանակելու մասին տրված դիմումի առթիվ վորոշում հանել, դիմումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու որից հաշված, յերկու շաբաթվա ընթացքում:

23. Յերկրամյա ծառայության կենսաթոշակ նշանակող ապահովագրական գանձարկղը այդ մասին իր վորոշումը ներկայացնում է համապատասխան գործադիր կոմիտեի նախագահությանն ի հաստատություն (վորպես բացառություն սոցիալական ապահովագրության գծով կենսաթոշակ նշանակելու ընդհանուր կարգից):

24. Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու հետ կապված խնդիրների առթիվ ապահովագրական գանձարկղների վորոշումների դեմ բողոքներ տրվում են համապատասխան գործադիր կոմիտեի նախագահությանը:

25. Ապահովագրական գանձարկղը գործադիր կոմիտեի նախագահության վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում,—այդ մասին հայտնում է վերադաս ապահովագրական մարմնին, վորը կարող է այդ վորոշումը բողոքարկել սովորական կարգով համապատասխան գործկոմին:

26. Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակող ապահովագրական գանձարկղը, թոշակառուին տալիս է ընդհանուր ձևի կենսաթոշակի գրքույկ, լրացնելով տալոնները: Գրքույկը պիտի տրվի կենսաթոշակ նշանակելու օրվանից հաշված մեկ շաբաթվա ժամկետում:

Կենսաթոշակի գրքույկ տալու հետ միաժամանակ, ապահովագրական գանձարկղը լրացնում է կցված ձևի ստուգիչ որդերը (հավելված № 1) յերկու օրինակից: Ստուգիչ որդերի յերկու օրինակի վրա յել վերցվում է թոշակառուի ստորագրությունը: Ստուգիչ որդերը վավերացվում է կոմիտեի անդամի ստորագրությամբ և ապահովագրական գանձարկղի կնիքով:

27. Եթե թոշակառուն նորից է անցնում և սույն հրահանգի կարգով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներից մեկին,— պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել ապահովագրական գանձարկղին կամ խնայողական դրամարկղին,— ներկայացնելով աշխատանքի վայրից տեղեկանք աշխատանքի անցնելու ժամկետի մասին: Համաձայն թոշակառույից ստացած տեղեկանքի կամ ապահովագրական գանձարկղի կարգադրության,— խնայողական դրամարկղը վճարելով թոշակառուին աշխատանքի անցնելու ամսվա կենսաթոշակը, վերցնում է նրանից կենսաթոշակի գրքույկը և տվյալ թոշակառուի ստուգիչ օրդերի (հոդ. հոդ. 26 և 36) ու տեղեկանքի հետ միասին, գրքույկն ուղարկում է համապատասխան գանձարկղին:

Ապահովագրական գանձարկղը տվյալ թոշակառուի համար դուրս է գրում նոր ստուգիչ օրդեր և թոշակառուի գրքույկում նշանառում անում՝ կենսաթոշակի չափի փոփոխման կամ վճարման կանգնեցման մասին, որից հետո ստուգիչ օրդերն ուղարկում է խնայողական դրամարկղին, իսկ կենսաթոշակի գրքույկն ուղարկում է (տալիս է) թոշակառուին:

28. Եթե պարզվի, որ 27-րդ հոդվածում նշված թոշակառուին, նրա վարձու աշխատանքում գտնված ժամանակամիջոցի համար, տրված է լրիվ կենսաթոշակը,— վարձու աշխատանքի լրիվ ամիսների տարբերությունը, համաձայն ապահովագրական գանձարկղի կարգադրության, խնայողական դրամարկղի կողմից ավել վճարած գումարը լրիվ պահվում է կեսաթոշակից՝ մոտակա վճարումների ժամանակ:

29. Տասը ռուբլու չափով կենսաթոշակ ստացող թոշակառուն, վարձու աշխատանքը դադարեցնելու դեպքում, դիմում է տալիս ապահովագրական գանձարկղին՝ լրիվ կենսաթոշակ նշանակելու մասին:

Ապահովագրական գանձարկղը դիմումն ստանալուն պես, աշխատանքը թողնելու ամսվանից նշանակում է լրիվ կենսաթոշակ: Ապահովագրական գանձարկղի որոշումը կենսաթոշակի չափը փոփոխելու կամ նրա վճարումը դադարեցնելու մասին համապատասխան գործադիր կոմիտեի հաստատմանը (հոդ. 23) ենթակա չէ:

30. Թոշակառուի մահվան դեպքում, նրա չստացած կենսաթոշակը տրվում է միայն ապահովագրական գանձարկղի կարգադրությամբ, մահացածի ընտանիքի այն անդամներին, որոնք նրա մահից հետո իրավունք ունեն ապահովվելու:



Ապահովագրական գանձարկղի կարգադրությունն ստանալուց և ենթակա դեպքերում հասանելիք գումարները վճարելուց հետո, խնայողական դրամարկղը ստուգիչ օրդերի յերկու օրինակն էլ վերադարձնում է ապահովագրական գանձարկղին:

31. Սույն հրահանգը կիրարկության մեջ դնելու օրից, ապահովագրական գանձարկղները կատարում են յերկարամյա ծառայության կենսաթոշակ ստացող լուսավորության աշխատավորների և նրանց ընտանիքների բոլոր թոշակառուների գործերի վերանայում: Վերանայման ընթացքում բոլոր թոշակառուների համար կազմվում են ստուգիչ օրդերներ: Գործերի վերանայման կարգը և ժամկետները սահմանվում են ապահովագրական գանձարկղների կողմից:

## Ե. ԿՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՈՒՄԸ

32. Կեսաթոշակի վճարումը կատարվում է թոշակառուների բնակավայրում.

ա) Բոլոր նահանգային, յերկրային և գավառային խնայողական դրամարկղների կողմից, բ) նրանց բաժանմունքների կողմից, գ) նույն գրմարկղին կցված փոստ-հեռագրական դրամարկղների կողմից: Այն դեպքում, յերբ թոշակառուն ապրում է այնպիսի վայրում, ուր խնայողական դրամարկղ չկա,— կենսաթոշակն ուղարկվում է նրան փոստով:

Փոխադրման ծախքերը հոգում են ապահովագրական գանձարկղն ու Ֆինժողկոմատի մարմինները հավասար չափերով: Փոխադրության լուսավորության աշխատավորների կենսաթոշակի վճարումը կատարում են նույն խնայողական դրամարկղները սույն հրահանգով սահմանված կարգով: Կենսաթոշակի վճարման համար անհրաժեշտ գումարները (հոդ. 44) մուծվում է բացառապես յերկրային ապահովագրական գանձարկղների կողմից, առանց մի որևիցե հաշվակցում կատարելու փոխադրական ապահովագրական գանձարղների հետ:

33. Լուսավորության աշխատավորներին և նրանց ընտանիքներին յերկարամյա ծառայության կենսաթոշակը տրվում է յուրաքանչյուր ամիս, անցած ամսվա համար, ապահովագրական գանձարկղի կողմից սահմանված ժամկետներին՝ համաձայնեցրած խնայողական դրամարկղների հետ: Ամեն մի թոշակառուի կենսաթոշակի գրքույկում նշանակվում է կենսաթոշակ վճարելու ժամկետները:

34. Կենսաթոշակը ստանալու համար ներկայանալու դեպքում՝ թոշակառուն պարտավոր է ներկայացնել խնայողական դրամարկղին կենսաթոշակի գրքույկը:

Կենսաթոշակը լիազորությամբ ստանալու դեպքում,—լիազորագիրը պետք է հաստատված լինի սահմանված կարգով: Լիազորությունը պետք է տրված լինի կենսաթոշակի գրքույկի տալոնի հետևին և հաստատված մինչև կենսաթոշակն ստանալը 15 օրից ոչ շուտ:

Այդ ժամկետից շուտ հաստատված լիազորությունը վավերական չի համարվում:

35. Անչափահասներին հասանելիք կենսաթոշակը, նույնը և այն անձանց, որոնց վրա խնամակալություն է սահմանված, տրվում է կենսաթոշակի գրքույկներում նշված նրանց խնամակալներին և հոգաբարձուներին:

36. Խնայողական դրամարկղի կողմից կենսաթոշակը վճարելու համար հիմք ծառայում են ստուգիչ օրդերները (հոդ. 26), որոնք ապահովագրական գանձարկղը հանձնում է համապատասխան նահանգային, յերկրային կամ գավառային խնայողական դրամարկղին յերկու օրինակից. խնայողական դրամարկղը ստուգիչ օրդերն ստանալով, մեկ օրինակը թողնում է իր մոտ, փաստորեն կենսաթոշակի վճարումը կատարող խնայողական դրամարկղների գործառնությունների հետագա ստուգման նպատակների համար, իսկ յերկրորդ օրինակը՝ հանձնում է վճարումը կատարող համապատասխան խնայողական դրամարկղին:

37. Արդեն կենսաթոշակ ստացող թոշակառուների ստուգիչ օրդերները հանձնվում են խնայողական դրամարկղներին գործերի փերանայման հետ զուգընթացաբար (հոդ. 31):

Նոր նշանակվելիք կենսաթոշակների ստուգիչ օրդերները հանձնվում են խնայողական դրամարկղներին՝ ապահովագրական գանձարկղների կողմից սահմանված ժամկետներին, բայց ամսական յերկու անգամից ոչ հաճախ:

38. Ստուգիչ օրդերներն ուղարկվում են խնայողական դրամարկղներին գրությամբ,—որում նշվում են ստուգիչ օրդերների քանակը և ըստ բոլոր օրդերների վճարման յենթակա կենսաթոշակների ամսական գումարը:

39. Կենսաթոշակը վճարելիս, խնայողական դրամարկղը կտրվող հերթական տալոնի վրա վերցնում է թոշակառուի կամ նրա



վճարողի ստորագրությունը, տալոնի վրա նշանակվում է վճարման օրաթիվը, համեմատում է թոշակառուի ստորագրությունը ստուգիչ օրդերի վրա նրա ստորագրության հետ և ստուգիչ օրդերի հետևին նշանակում է վճարման օրաթիվն ու վճարած գումարը: Դրանից հետո նշված կարգով ձևակերպված տալոնը կտրելով կենսաթոշակի գրքույկից, գրքույկը վերադարձվում է կենսաթոշակ ստացողին:

Խնայողական դրամարկղների բաժանմունքները (հոդ. 32, կ. «բ») և կցված խնայողական դրամարկղները (հոդ. 32, կ. «գ») սույն հոդվածում նշված կարգով ձևակերպված կենսաթոշակների գրքույկների վճարած տալոնները, գործառնությունների մասին հերթական տեղեկանքի հետ միասին, ուղարկում են գավառային կամ նրան համապատասխան խնայողական դրամարկղին:

40. Կենսաթոշակն ստանալու համար մինչև 6 ամիս չներկայացող անձանց կենսաթոշակի վճարումը խնայողական դրամարկղների կողմից դադարեցվում է: Այդ դեպքում խնայողական դրամարկղը վերադարձնում է ապահովագրական գանձարկղին յերկու ստուգիչ օրդերն էլ, նրանց վրա նշելով օրդերի վերադարձման պատճառները: Խնայողական դրամարկղների բաժանմունքները և կցված խնայողական դրամարկղները նման դեպքերում ստուգիչ օրդերները նշանումներով ուղարկում են վերադաս խնայողական դրամարկղներին՝ համապատասխան ապահովագրական գանձարկղներին հանձնելու համար:

41. Կենսաթոշակի գրքույկը կամ նրա տալոնները կորցնելու դեպքում, թոշակառուն պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել խնայողական դրամարկղին և համապատասխան հայտարարություն անել: Խնայողական դրամարկղն ուղարկում է Ապահովագրական Գանձարկղին թոշակառուի յերկու ստուգիչ օրդերն էլ՝ կենսաթոշակի նոր գրքույկ տալու համար—դրա համար սահմանված կարգով:

42. Նոր մշտական բնակավայր տեղափոխվելու դեպքում, թոշակառուն պարտավոր է այդ մասին հայտարարություն տալ այն ապահովագրական գանձարկղին, ուր գտնվում է թոշակառուի անձնական քարտը: Այդ հայտարարության հիման վրա, ապահովագրական գանձարկղը պահանջ է ուղարկում համապատասխան խնայողական դրամարկղին՝ թոշակառուի ստուգիչ օրդերի յերկու օրինակն էլ վերադարձնելու մասին և այդպիսիքն ստանալով, անձնական քարտը ստուգիչ օրդերների հետ միասին ուղար-

կում է թոշակառուի նոր բնակավայրի գավառային կամ նրան համապատասխան ապահովագրական գանձարկղին: Վերջինս, ստուգիչ օրդերները թողնելով թոշակառուի անձնական քարտին կցված, համապատասխան խնայողական դրամարկղին հանձնում է նոր ստուգիչ օրդերներ, սույն հրահանգի 36 և 38 հոդվածներում արձանագրված կարգով:

Յեթե թոշակառուի հին և նոր բնակավայրը գտնվում են միևնույն գավառի (կամ նրան համապատասխան վարչա–յերկրային միավորի) սահմաններում,— այդ դեպքում ապահովագրական գանձարկղը հայտնում է այդ մասին գավառային կամ նրան համապատասխան խնայողական դրամարկղին՝ ստուգիչ օրդերի յերկրորդ օրինակը թոշակառուի նոր բնակավայրի խնայողական դրամարկղին հանձնելու համար:

Տեղափոխման պատճառները հարգելի գտնվելու դեպքում, ապահովագրական գանձարկղը կարող է թոշակառուին վկայական տալ արտոնյալ տեղափոխության համար:

## Զ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ, ՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇԻՎ ՏԵՍՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

43. Կենսաթոշակների վճարման համար պահանջվող գումարները գավառային կամ նրանց համապատասխան ապահովագրական գանձարկղները և ֆինժողկոմատի մարմինները հանձնում են նահանգային և գավառային խնայողական դրամարկղներին ամիսը մեկ անգամ, ամսական պահանջի չափով, այն հաշվով, վոր այդ գումարները փաստորեն համապատասխան խնայողական դրամարկղներում ստացվեն վճարման նախորդ ամսի 15–ից վոչ ուշ:

44. Նախորդ հոդվածով սահմանված ժամկետին ապահովագրական գանձարկղը հանձնում է համապատասխան խնայողական դրամարկղին ըստ բոլոր ստուգիչ օրդերների կենսաթոշակների ամսական գումարի 50 տոկոսը կազմող գումարի չեկ, հաշվի առնելով նաև այն գումարը, վորը մնում է խնայողական դրամարկղի տրամադրության տակ, վորպես ազատ մնացորդ պակասեցրած կամ դադարեցված թոշակների վճարումից:

Ազատ մնացորդի մեջ հաշվելու յենթակա գումարը ապահովագրական գանձարկղի կողմից վորոշվում է համաձայն խնայողական դրամարկղի կողմից վերադարձված ստուգիչ օրդերների (հոդ. հոդ. 27, 40, 41, 42): Չեկն ուղարկվում է գրությամբ, վո–



րում գրվում է հանձնվելիք գումարի համառոտ հաշիվը. գրության պատճեն միաժամանակ ուղարկվում է ֆինժողկոմատին համապատասխան մարմնին:

45. Խնայողական դրամարկղին հանձնած չեկի գումարի մասին գրած գրության պատճենը, (հոդ. 44) ապահովագրական գանձարկղից ստանալու հետևյալ օրվանից վոչ ուշ, ֆինժողկոմատի գավառային, նահանգային կամ համապատասխան մարմինը կարգադրություն է անում գավառային, նահանգային կամ նրան համապատասխան դրամարկղային հիմնարկությանը փոխանցելու «Գ. Հ. Պետծախսերի» հաշվով, ի հաշիվ դաշնակից հանրապետության ֆինժողկոմատի բյուջետային վարչության հաշիվներում յեղած վարկերի. Սոցապժողկոմատի ընթացիկ բյուջետային տարվա նախահաշվով «կենսաթոշակ լուսավորության աշխատավորներին» «խնայողական դրամարկղների շրջանառության գումարների» հաշվին,— ապահովագրական գանձարկղի չեկի գումարին հավասար գումար. Դրամարկղային հիմնարկությունը կարգադրությունն ստանալու օրը կատարում է փոխանցումը:

Նոր բյուջետային տարվա առաջին ամսվա փոխանցումը կատարվում է ի հաշիվ այդ նոր բյուջետային տարվա նախահաշվի:

46. Վոչ ուշ յուրաքանչյուր ամսվա 10–ից նահանգային, յերկրային կամ գավառային խնայողական դրամարկղն ուղարկում է գավառային կամ նրան համապատասխան ապահովագրական գանձարկղին նախընթաց ամսում կենսաթոշակների գրքույկների բոլոր իսկական վճարած տալոնները գրությամբ, վորում նշվում է ուղարկվելիք տալոնների քանակը և նրանցով վճարած գումարը,— նամակի պատճենը հանձնելով ֆինժողկոմատի պատշաճ մարմնին:

47. Գավառային կամ նրան համապատասխան ապահովագրական գանձարկղը, խնայողական դրամարկղից ստանալով և վճարված տալոնները (հոդ. 46) ստուգելով, խնայողական դրամարկղի հաշվից դուրս է գրում ըստ տալոնների վճարած գումարի 50 տոկոսը և այդ մասին ավիզո յե ուղարկում խնայողական դրամարկղին, իսկ պատճենը ֆինժողկոմատի պատշաճ մարմնին:

48. Տարին անցնելուց հետո գավառային ֆինբաժինները և նրանց համապատասխան ֆինժողկոմատի մարմինները գավառային և համապատասխան ապահովագրական գանձարկղներից ստացած ավիզոների հիման վրա (հոդ. 47) կազմում են տարեկան միացյալ հաշվետվություններ՝ խնայողական դրամարկղների կողմից անցած

տարվա ընթացքում վճարած գումարների մասին և առ 1-ն հոկտեմբերի նրանց հաշվում չծախսված մնացորդ գումարները փոխանցում են, ի հաշիվ բյուջետային վարչության հաշիվներում լեղած նոր բյուջետային տարվա կենսաթոշակի վարկի, խնամողական գրամարկղների հաշիվներում մնացած գումարներին հավասար գումարներ՝ ի վերականգնումն անցյալ բյուջետային տարվա համապատասխան վարկերի, իսկ հաշվետվությունները ներկայացնում են դաշնակից հանրապետությունների ֆինժողկոմատների բյուջետային վարչությանը։

## Ե. ՀԱՇՎԵՏՈՒՈՒՄԸ ՑԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԴԱՆՁԱՐԿՂՆԵՐՈՒՄ

49. Լուսավորության աշխատավորների յերկարամյա ծառայության կենսաթոշակը վճարելու գործառնությունները ապահովագրական դանձարկղներում հաշվի յեն առնվում հետևյալ սխեմայով։

| №№ ըստ կարգի | | Կատարվում են | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Ըստ հաշվի դեբետի | | Ըստ հաշվի կրեդիտի |
| 1 | Խնամողական գրամարկղներում գտնվող ըստ բոլոր ստուգիչ օրդերների կենսաթոշակի ամսական գումարի 50%-ը (հոդ. 44) անց է կացվում յուրաքանչյուր ամիս . . . . . | 51 | Գործառնական ծախսերի | 41 | Նշանակված նպաստների և կենսաթոշակների |
| 2 | Խնամողական գրամարկղին փոխադրված չեկի գումարը (հոդ. 44) | 15գ | Առհաշիվ գումարների | 12 | Ընթացիկ հաշիվների |
| 3 | Վճարած տարիների գումարը (հոդ. 46) . . . . . . . . | 41 | Նշանակված կենսաթոշակների և նպաստների | 15գ | առհաշիվ գումարների |

50. Լուսավորության աշխատավորների ապահովության գործերը ձևակերպելու ժամանակ,—ինչպես նոր կենսաթոշակ նշանակելիս, այնպես էլ արդեն կենսաթոշակ ստացողների գործերը վերանայելիս,—ապահովագրական դանձարկղները կիրառում են աշխատանքի հաշմանդամների համար սահմանված գործավարության ձևերը։



## Ը. ՎԵՐՋԱԲԱՆ

1929 թ.
51. Սույն հրահանգը կիրարկության մեջ է դրվում
հոկտեմբերի 1-ից։
անձանց կեն-
Առաջին հոդվածի «յե»—«ծ» կետերում նշված
սաթոշակ նշանակվում է միայն այն դեպքում, յեթե նրանք ըստ
1-ին հոդվածում նշված պաշտոնների, աշխատանքը թողել են 1929
թ. հոկտեմբերի 1-ից վոչ շուտ։
52. Լուսավորության աշխատավորներին և նրանց ընտանիքի
անդամներին, վորոնց յերկարամյա ծառայության կենսաթոշակը
նշանակվել է համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի
1925 թ. հունվարի 15-ի «առաջին աստիճանի գյուղական ու քաղաքային դպրոցների ուսուցիչների և գյուղի լուսավորության
մյուս աշխատավորների թոշակավորման մասին» վորոշման,—
(ԽՍՀՄ Օրենք. ժողով. 1925 թ. № 3 հոդ. 31)—կենսաթոշակի
չափը 1929 թ. հոկտեմբերի 1-ից փոփոխվում է համաձայն սույն
հրահանգի, առանց այդ մասին հատուկ հայտարարություն տալու։

ԽՍՀՄ Աշխատանքի ժողովրդական կոմիսար՝ ՈՒԳԼԱՆՈՎ.
Սոցապկենտվարչության պետ՝ ԿՈՏՈՎ.

Հավելված

| | |
|---|---|
| | Ապպանձարկղ ............ |
| ............ (Ազգանունը) | Լուս. աշխատ. Ստուգիչ օրդեր |
| ............ (Անունը) | Ընտ. անդամ Անհատական քարտ № ______ |
| | կենսաթոշակ ստանալու համար 19 թ. |
| ............ (Հայրանունը) | « »-ից առ 19 թ. ______ « » -ը։ Վճարման |
| | ժամկետը « » ______ յուրաքանչյուր |
| ............ (Հասցեն) | ամիս ______ ռ. ______ կ. չափով։ (ռուբլիները |
| | գումարը տառերով) |
| ............ (Կենսաթոշակ ստացողի ստորագրությունը) | Ապպանձարկղի Կոմիտեյի անդամ՝ |
| | Կ. Տ. |
| Տալոնը վերադարձնելու հիմքը | Կցված է ______ ապպանձարկղին |
| | Ստորագրություն |

# VIII. ՀՐԱՀԱՆԳ № 348

ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1929 թ. սեպտեմբերի 25-ի «Գյուղական վայրերի և բանվորական ավանների բժշկական և անասնաբուժական աշխատավորներին յերկարամյա ծառայության հետևանքով թոշակավորելու մասին» վորոշումը կիրառելու կարգի մասին:

Հաստատված ԽՍՀՄ Աշխժողկոմատի կողմից 1929 թ. նոյեմբերի 3-ին:

## Ա. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Յերկարամյա ծառայության հետևանքով կենսաթոշակի իրավունքով օգտվում են գյուղական վայրերի և բանվորական ավանների բժշկական և անասնաբուժական հետևյալ աշխատավորները.

ա) Բժիշկները

բ) Անասնաբույժները

գ) Ատամնաբույժները

դ) Բուժակները

յե) Անասնաբուժակները

զ) Բուժակուհիները

է) Բուժակուհի-մանկաբարձուհիները

ը) Մանկաբարձուհիները

թ) Բժշկական տեխնիկումները (նորմալ պարնթացներ) և Կարմիր Խաչի քույրերի նորմալ դպրոցներն ավարտած բժշկական քույրերը:

2. Առաջին հոդվածում նշված աշխատավորները կենսաթոշակի իրավունք են ձեռք բերում մի պայմանով, յեթե նրանք գյուղական վայրերում կամ բանվորական ավաններում վերահիշյալ պաշտոններում աշխատած են լինում 25 տարուց վոչ պակաս, նույն թվում 5 տարուց վոչ պակաս Խորհրդային Իշխանության օրոք:

Վերահիշյալ ստաժը հաշվելու ժամանակ նրա մեջ և մտցվում ամբողջ ծառայությունը, անկախ նրանից՝ մեկ թե մի քանի պաշ-



տոններում կամ մեկ թե մի քանի գյուղական վայրերում ու բանվորական ավանում և անցել այդ աշխատանքը:

Առաջին հոդվածում նշված աշխատավորները կենսաթոշակի իրավունքով օգտվում են անկախ նրանից, թե գյուղական վայրերի և բանվորական ավանների ինչպիսի հիմնարկներում և կազմակերպություններում են 1-ին հոդվածում նշված պաշտոններում յեղել՝ — շրջանային ցանցի հիմնարկներում, խորհրդային տնտեսություններում, Կարմիր Խաչի կենտրոնական կոմիտեի դիսպանսերում, յերկաթուղային և ջրային փոխադրության բժշկական և անասնաբուժական հիմնարկներում, պահնորդա-կարանտինային գոտիներում և այլն:

3. Կենսաթոշակի իրավունքը վորոշելու ժամանակ հաշվի յե առնվում նաև գյուղական վայրերի և բանվորական ավանների մինչհեղափոխության ծառայությունը՝ բժշկական և անասնաբուժական մասնագիտությամբ:

Առաջին հոդվածում նշված անձանց աշխատանքի ստաժի մեջ չի մտնում կրոնական պաշտոններին նախորդող կամ զուգադիպող աշխատանքները, ինչպես նաև շահ ստանալու նպատակով վարձու աշխատանք շահագործողների և ինքնուրույն առևտրական գործունեությամբ կամ շրջանառությունը պետական արհեստագործական հարկով հարկվելով արհեստագործությամբ զբաղվողների այդ աշխատանքներին նախորդող կամ զուգադիպող աշխատանքները:

4. 25 տարվա ծառայության ժամկետը հաշվելու ժամանակ 1927 թ. հոկտեմբերի 1-ից սկսած հեռավոր վայրերում ծառայության յուրաքանչյուր տարին վոչ հեռավոր վայրերից աշխատանքի ուղարկված աշխատավորների համար հավասարեցվում է.

ա) Առաջին գոտու հեռավոր վայրերում — մեկ տարի ութ ամսի

բ) Յերկրորդ գոտու հեռավոր վայրերում — մեկ տարի յերեք ամսի.

Հեռավոր վայրերին դասվում են «ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1927 թ. մայիսի 11-ի ԽՍՀՄ հեռավոր վայրերի պետական հիմնարկների աշխատավորների արտոնությունների մասին» 2-րդ հոդվածի կարգով հրատարակված ցանկում նշված վայրերը (ԽՍՀՄ օրենք. ժող. 1927 թ. № 25, հոդ. 276):

Հեռավոր վայրերում քոչվորների մեջ աշխատանք տանող 1-ին հոդվածում նշված աշխատավորները 25 ամյա աշխատանքի ժամկետը հաշվելու նկատմամբ օգտվում են նույն հոդվածով

սահմանված արտոնությամբ, անկախ նրանից, թե ինչպիսի վայրերից են նրանք աշխատանքի ուղարկված:

5. Ըստ 1-ին հոդվածում նշված պաշտոնների, աշխատանքի ստաժը չ'պետք է անպայման առանց ընդմիջումների լինի. ստաժի մեջ է մտնում.

ա) Կարմիր բանակի և Փլոտի շարքերում գտնվելու ժամանակամիջոցը.

բ) Խորհրդային և պրոֆեսիոնալ ընտրովի պաշտոններում յեղած ժամանակամիջոցը:

գ) Մինչև հեղափոխությունը քաղաքական հանցանքների համար պատիժ կրելու ժամանակամիջոցը (կատորգա, աքսոր, բանտ կամ բերդ).

դ) Մինչև հեղափոխության շրջանը հակակառավարչական գործունեության համար բժշկական և անասնաբուժական աշխատանքից հեռանալու ժամանակամիջոցը (մինչև մի փորձիցե այլ աշխատանքի անցնելը.

ե) Սոցիալական ապահովագրության կարգով աշխատավորի կողմից ժամանակավոր անաշխատունակության կամ գործազրկության փաստորեն նպաստ ստանալու ժամանակամիջոցը:

Այլ ընդմիջումները—քաղաքի ծառայության հետևանքով և այլն չեն ընդհատում 25 տարվա աշխատանքի տևողությունը, բայց այդ ստաժի մեջ չեն մտնում:

6. Առաջին հոդվածում նշված պաշտոններում կատարած վարձու աշխատանքի փաստը պիտի հաստատված լինի փաստաթղթերով: Այդ աշխատանքների դոհացուցիչ ապացույցը հանդիսանում են նախկին ծառայության ցուցակները, առողջապահական մարմինների կողմից տրված վկայականները կամ արխիվային հիմնարկների տեղեկանքները:

Այդ վկայականներում պիտի պարզ նշված լինեն. ա) ծառայության տեղը, բ) յուրաքանչյուր վայրի ծառայության պաշտոնը, գ) ըստ յուրաքանչյուր հիմնարկության և պաշտոնի ծառայության սկիզբն ու վերջը:

7. Քաղաքական հանցագործության համար կրած պատժի և մինչ հեղափոխության շրջանը բժշկական և անասնաբուժական աշխատանքից հեռացվելու տևողությունն ու փաստը պիտի հաստատված լինեն համապատասխան ապացույցներով—տեղեկանքներ կուսակցական մարմնից, արխիվային մարմնից, նախկին քաղաքատարականների ընկերություններից և այլն:

8. Առաջին հոդվածում նշված անձանց կենսաթոշակ տրվում



և անկախ թոշակառուի աշխատունակությունից և գույքային դրությունից, ի բաց առյալ 15-րդ հոդվածներում նշվածներից:

9. Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձի մահվան դեպքում, կենսաթոշակի իրավունքով օգտվում են նրա խնամքի տակ յեղած և ապրուստի համար բավականաչափ միջոցներ չունեցող ընտանիքի հետևյալ անդամները.

ա) Անաշխատունակ կամ 16 տարին չ'լրացած, իսկ յեթե ուսումնական հիմնարկներում սովորում են—18 տարին, յերեխաները, յեղբայրները և քույրերը:

բ) Ծնողներն ու կինը,—յեթե անաշխատունակ են, կամ լրացել են տղամարդիկ 60 տարին և կանայք 55 տարին:.

գ) Ծնողներն ու կինը, թեև աշխատունակ, բայց մահացածի ութ տարին չ'լրացած յերեխաների, յեղբայրների, քույրերի խնամելովն զբաղված:

ԾԱՆՈԹ.—Անաշխատունակ են հաշվվում այն անձինք, վորոնք էքսպերտ մարմինների կողմից դասված են հաշմության 1, 2 և 3-րդ կարգերին:

10. Ըստ նշանակված կենսաթոշակների, ժամանակին չ'ստացված վճարումներն անցյալ ժամանակի համար վճարվում են սոցապահովագրական գանձարկղին համապատասխան գումարն ստանալու համար դիմելու օրվանից հաշված, 6 ամիս հետ ժամանակամիջոցի համար:

Թոշակառուի կողմից նրա մահվան հետևանքով չ'ստացված կենսաթոշակի վճարման կարգը վորոշվում է դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ:

11. Մի քանի պատճառներով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձինք (կենսաթոշակ յերկարամյա ծառայության, հաշմանդամության, նեցուկի մահվան հետևանքով, անհատական և այլն) իրավունք է վերապահվում կենսաթոշակն ընտրելու վորևիցե մեկ պատճառով:

## Բ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

12. Առաջին հոդվածում նշված անձանց կենսաթոշակ նշանակվում է—կենսաթոշակ նշանակելուն նախորդող, 1-ին հոդվածում թված պաշտոններում, վերջին 12 ամսվա վարձու աշխատանքի միջին ամսական աշխատավարձի կեսի չափով:

Աշխատավարձի գումարի մեջ, վորից հաշվվում է կենսաթոշակը, մտնում են աշխատավարձի բոլոր տեսակները, ըստ վորի

համաձայն օրենքի, գանձվում են սոցիալական ապահովագրության մուծումները։

13. Կենսաթոշակի իրավունք ունեցող առաջին հոդվածում թված անձինք, իրենց կամ այդ հոդվածում նշված աշխատանքներից մեկում մնալու դեպքում, անկախ իրենց աշխատավարձի չափից, կենսաթոշակ են ստանում՝ — ա) բժիշկները (նույն թվում նաև ատամնաբույժները) և անասնաբույժները — կեսի չափով, բ) մյուսները — 10 տոկոսի չափով։

14. Սույն հրահանգի կարգով նշանակված կենսաթոշակը յենթակա չէ հարկադրման ընդհանուր պետական և տեղական վորևիցե մեկ հարկով կամ տուրքով։

15. Աշխատավորի մահից հետո մնացած ընտանիքին կենսաթոշակ նշանակվում է. կնոջը լրիվ կենսաթոշակի կեսի չափով (հոդ. 12), իսկ ընտանիքի մնացած անդամներից յուրաքանչյուրին լրիվ կենսաթոշակի մեկ քառորդի չափով, սակայն այն հաշվով, վոր ամբողջ ընտանիքին տրվելիք կենսաթոշակի ընդհանուր գումարը չգերազանցի կենսաթոշակի լրիվ չափից։

## Գ. ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

16. Յերկարամյա ծառայության համար կենսաթոշակ տրվում է դիմում տալու օրից։

17. Սույն հրահանգի կարգով կենսաթոշակը վճարվում է.

ա) Կենսաթոշակի իրավունք ձեռք բերած անձանց — ցմահ.

բ) Փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին մինչև 16 տարին լրանալը, իսկ յեթե կրթական հիմնարկներում սովորում են մինչև 18 տարին լրանալը.

գ) Անաշխատունակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին մինչև աշխատունակության վերականգնելը.

դ) Ծնողներին և կնոջը — անաշխատունակներին, կամ տղամարդկանց 60 տարին և կանանց 55 տարին լրացածներին — ցմահ.

ե) Ծնողներին և կնոջը, յեթե նրանք զբաղված են յերեխայի խնամելով, — մինչև յերեխայի ութ տարին լրանալը։

ԾԱՆՈԹ. — Ամուսնուն, յեթե նա նորից ամուսնանում է, կենսաթոշակի վճարումը դադարեցվում է։

## Դ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

18. Կենսաթոշակի նշանակումը կատարվում է այն գանձարկղերի կողմից, վորոնց հաշմության կենսաթոշակ նշանակելու իրավունք է վերապահված։



Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումներ ընդունվում են սոցիալական ապահովագրության մարմինների կողմից բուն դիմում տվողի բնակավայրի, ինչպես անմիջապես, այնպես և բժշկա-սանիտարական աշխատավորների պրոֆմիության ստորադաս բջիջների միջոցով (տեղկոմ, խմբկոմ և այլն)։ Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու մասին դիմումներ փոխադրական բժշկական և անասնաբուժական աշխատավորների կողմից տրվում են իրենց բնակավայրին մոտակա այդ գավառի յերկրային ապահովագրական գանձարկղին կամ դրան համապատասխան վարչայերկրային միավորին, վորտեղ նրանք ապրում են, անմիջապես կամ բժշկա-սանիտարական աշխատավորների պրոֆմիության ստորադաս բջիջների միջոցով։

19. Աշխատանքի հաշմանդամների և նեցուկը կորցրած ընտանիքների նկատմամբ դիմումներ տալու համար սահմանված ժամկետը սույն հրահանգի կարգով թոշակ ստացողների վրա չի տարածվում։

20. Ապահովագրական գանձարկղները պարտավոր են կենսաթոշակ նշանակելու մասին տրված դիմումի առթիվ վորոշում հանել՝ բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու օրից հաշված յերկու շաբաթվա ընթացքում։

21. Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակող ապահովագրական գանձարկղն այդ մասին իր վորոշումը ներկայացնում է համապատասխան գործադիր կոմիտեյի նախագահությանն ի հաստատություն (վորպես բացառություն սոցիալական ապահովության գծով կենսաթոշակ նշանակելու ընդհանուր կարգից)։

22. Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու հետ կապված խնդիրների առթիվ ապահովագրական գանձարկղների վորոշումների դեմ բողոքներ տրվում են համապատասխան գործադիր կոմիտեյի նախագահության։

23. Ապահովագրական գանձարկղը գործադիր կոմիտեյի նախագահության վորոշման հետ համաձայն չլինելու դեպքում, — այդ մասին հայտնում է վերադաս ապահովագրական մարմնին. վորը կարող է այդ վորոշումը բողոքարկել սովորական կարգով համապատասխան գործկոմին։

24. Յերկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակող ապահովագրական գանձարկղը, թոշակառուին տալիս է ընդհանուր ձևի կենսաթոշակի գրքույկ, լրացնելով տալոնները։ Գրքույկը

պետք տրվի կենսաթոշակ նշանակելու օրվանից հաշված մեկ շաբաթվա ժամկետում:

Կենսաթոշակի գրքույկ տալու հետ միաժամանակ, ապահովագրական գանձարկղը լրացնում է կցված ձևի ստուգիչ օրդերը (հավելված № 1) յերկու օրինակից: Ստուգիչ օրդերի յերկու օրինակի վրա էլ վերցվում է թոշակառուի ստորագրությունը: Ստուգիչ օրդերը վավերացվում է կոմիտեյի անդամի ստորագրությամբ և ապահովագրական գանձարկղի կնիքով:

25. Յեթե թոշակառուն նորից անցնում է սույն հրահանգի կարգով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքներից մեկին, — պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել ապահովագրական գանձարկղին կամ խնայողական դրամարկղին, — ներկայացնելով աշխատանքի վայրից տեղեկանք աշխատանքի անցնելու ժամկետի մասին: Թոշակառուից ստացած տեղեկանքի համաձայն կամ ապահովագրական գանձարկղի կարգադրությամբ, — խնայողական դրամարկղը վճարելով թոշակառուն աշխատանքի անցնելու ամսվա կենսաթոշակը, վերցնում է նրանից կենսաթոշակի գրքույկը և տվյալ թոշակառուի ստուգիչ օրդերի (հոդ. հոդ. 24 և 33) ու տեղեկանքի հետ միասին գրքույկն ուղարկում է համապատասխան ապահովագրական գանձարկղին:

Ապահովագրական գանձարկղը տվյալ թոշակառուի համար դուրս է գրում նոր ստուգիչ օրդեր և թոշակառուի գրքույկում նշանառում անում՝ թոշակի չափի փոփոխման կամ վճարման կանգնեցման մասին, վորից հետո ստուգիչ օրդերն ուղարկում է խնայողական դրամարկղին, իսկ կենսաթոշակի գրքույկն ուղարկում է (տալիս է) թոշակառուին:

26. Յեթե պարզվի, վոր 27-րդ հոդվածում նշված թոշակառուին նրա վարձու աշխատանքում գտնված ժամանակամիջոցի համար տրված է լրիվ կենսաթոշակը, — վարձու աշխատանքի լրիվ ամիսների տարբերությունը, համաձայն ապահովագրական գանձարկղի կարգադրության, խնայողական դրամարկղի կողմից լրիվ պահվում է կենսաթոշակը մոտ ժամանակներում վճարելիս:

27. Լրիվ կենսաթոշակի կեսի կամ տասը ռուբլու չափով կենսաթոշակ ստացող թոշակառուն, վարձու աշխատանքը դադարեցնելու դեպքում, դիմում է տալիս ապահովագրական գանձարկղին՝ լրիվ կենսաթոշակ նշանակելու մասին:

Ապահովագրական գանձարկղը դիմումն ստանալուն պես աշխատանքը թողնելու մոմենտից նշանակում է լրիվ կենսաթոշակ: Ապահովագրական գանձարկղի վորոշումը կենսաթոշակի չափը



փոփոխելու կամ նրա վճարումը դադարեցնելու մասին համապատասխան գործադիր կոմիտեյի հաստատմանը (հոդ. 21) յենթակա չե:

28. Թոշակառուի մահվան դեպքում նրա չստացած կենսաթոշակը տրվում է միայն ապահովագրական գանձարկղի կարգադրությամբ մահացածի ընտանիքի այն անդամներին, վորոնք նրա մահից հետո իրավունք ունեն ապահովվելու:

Ապահովագրական գանձարկղի կարգադրությունն ստանալուց և յենթակա դեպքերում հասանելիք գումարները վճարելուց հետո, խնայողական դրամարկղը ստուգիչ օրդերի յերկու օրինակն էլ վերադարձնում է ապահովագրական գանձարկղին:

## ՅԵ. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՈՒՄԸ

29. Կենսաթոշակի վճարումը կատարվում է թոշակառուների բնակավայրում.

ա) Բոլոր նահանգային, յերկրային և գավառային խնայողական դրամարկղների կողմից, բ) նրանց բաժանմունքների կողմից, գ) նույն դրամարկղին կցված փոստ-հեռագրական դրամարկղների կողմից: Այն դեպքում, յերբ թոշակառուն ապրում է այնպիսի վայրում, ուր խնայողական դրամարկղ չկա, — կենսաթոշակն ուղարկվում է նրան փոստով:

Փոխադրման ծախսերը կատարում են ապահովագրական գանձարկղն ու ֆինժողկոմատի մարմինները հավասար չափերով: Փոխադրության բժշկական և անասնաբուժական աշխատավորների կենսաթոշակի վճարումը կատարում են նույն խնայողական դրամարկղները սույն հրահանգով սահմանված կարգով: Կենսաթոշակի վճարման համար անհրաժեշտ գումարները (հոդ. 42) մուծվում են բացառապես յերկրային ապահովագրական գանձարկղների կողմից, առանց մի վորևիցե հաշվանցում կատարելու փոխադրական ապահովագրական գանձարկղների հետ:

30. Բժշկական և անասնաբուժական աշխատավորներին և նրանց ընտանիքներին յերկարամյա ծառայության կենսաթոշակը տրվում է յուրաքանչյուր ամիս, անցած ամսվա համար, ապահովագրական գանձարկղի կողմից սահմանված ժամկետներին՝ — համաձայնեցրած խնայողական դրամարկղների հետ: Ամեն մի թոշակառույի կենսաթոշակի գրքույկում նշանակվում է կենսաթոշակ վճարելու ժամկետները:

31. Կենսաթոշակն ստանալու համար ներկայանալու դեպքում,

թոշակառուն պարտավոր է ներկայացնել խնայողական դրամարկղին կենսաթոշակի գրքույկը։

Կենսաթոշակը լիազորությամբ ստանալու դեպքում,— լիազորագիրը պետք է հաստատված լինի սահմանված կարգով։ Լիազորությունը պետք է տրված լինի կենսաթոշակի գրքույկի տալոնի հետևից և հաստատված մինչև կենսաթոշակն ստանալը 15 օրից վոչ շուտ։

Այդ ժամկետից շուտ հաստատված լիազորությունը վավերական չի համարվում։

32. Անչափահասներին հասանելիք կենսաթոշակը, նույնը և այն անձանց, վորոնց վրա խնամակալություն է սահմանված, տրվում է կենսաթոշակի գրքույկներում նշված նրանց խնամակալներին և հոգատարներին։

33. Խնայողական դրամարկղի կողմից կենսաթոշակը վճարելու համար հիմքը ծառայում է ստուգիչ օրդերները (հոդ. 24), վորն ապահովագրական գանձարկղը հանձնում է համապատասխան նահանգային, յերկրային կամ գավառային խնայողական դրամարկղին յերկու օրինակից. խնայողական դրամարկղն ստուգիչ օրդերն ստանալով, մեկ օրինակը թողնում է իր մոտ փաստորեն կենսաթոշակի վճարումը կատարող խնայողական դրամարկղների գործառնությունների հետագա ստուգման նպատակների համար, իսկ յերկրորդ օրինակը հանձնում է վճարումը կատարող համապատասխան խնայողական դրամարկղին։

34. Նոր նշանակվելիք կենսաթոշակների ստուգիչ օրդերները հանձնվում են խնայողական դրամարկղներին ապահովագրական գանձարկղների կողմից սահմանված ժամկետներին, բայց ամսական յերկու անգամից վոչ հաճախ։

35. Ստուգիչ օրդերներն ուղարկվում են խնայողական դրամարկղներին գրությամբ,—վորում նշվում են ստուգիչ օրդերների քանակը և ըստ բոլոր օրդերների վճարման յենթակա կենսաթոշակների ամսական գումարը։

36. Կենսաթոշակը վճարելիս խնայողական դրամարկղը հերթական կտրվող տալոնի վրա վերցնում է թոշակառուի կամ նրա լիազորի ստորագրությունը, տալոնի վրա նշանակում է վճարման օրաթիվը, համեմատում է թոշակառուի ստորագրությունը ստուգիչ օրդերների վրա նրա ստորագրության հետ և ստուգիչ օրդերի հետևին նշանակում է վճարման օրաթիվն ու վճարած գումարը։ Դրանից հետո նշված կարգով ձևակերպված տալոնը կտրե-



լով կենսաթոշակի գրքույկից, գրքույկը վերադարձվում է կենսաթոշակ ստացողին։

Խնայողական դրամարկղների բաժանմունքները (հոդ. 29, կ. «բ») և կցված խնայողական դրամարկղները (հոդ. 29, կ. «գ») նույն հոդվածում նշված կարգով ձևակերպված կենսաթոշակների գրքույկների վճարած տալոնները, գործառնությունների մասին հերթական տեղեկանքի հետ միասին, ուղարկում են գավառային կամ նրան համապատասխան խնայողական դրամարկղին։

37. Կենսաթոշակն ստանալու համար մինչև 6 ամիս չներկայանող անձանց կենսաթոշակի վճարումը խնայողական դրամարկղների կողմից դադարեցվում է։ Այդ դեպքում խնայողական դրամարկղը վերադարձնում է ապահովագրական գանձարկղին թոշակառուի յերկու ստուգիչ օրդերն էլ, նրանց վրա նշելով օրդերի վերադարձման պատճառները։ Խնայողական դրամարկղների բաժանմունքները և կցված խնայողական դրամարկղները նման դեպքերում ստուգիչ օրդերները նշումներով ուղարկում են վերադաս խնայողական դրամարկղներին՝ համապատասխան ապահովագրական գանձարկղներին հանձնելու համար։ Այդ դեպքերում, յեթե թոշակառուն ցանկանում է կենսաթոշակն ստանալը վերականգնել,— նա պարտավոր է այդ մասին հայտնել ապահովագրական գանձարկղին։

38. Կենսաթոշակի գրքույկը կամ նրա տալոնները կորցնելու դեպքում, թոշակառուն պարտավոր է անմիջապես այդ մասին հայտնել խնայողական դրամարկղին և համապատասխան հայտարարություն անել։ Խնայողական դրամարկղն ուղարկում է Ապահովագրական Գանձարկղին թոշակառուի յերկու ստուգիչ օրդերն էլ՝ կենսաթոշակի նոր գրքույկ տալու համար—դրա համար սահմանված կարգով։

39. Նոր մշտական բնակավայր տեղափոխվելու դեպքում, թոշակառուն պարտավոր է այդ մասին հայտարարություն տալ այն Ապահովագրական Գանձարկղին, ուր գտնվում է թոշակառուի անձնական քարտը։ Այդ հայտարարության հիման վրա, Ապահովագրական Գանձարկղը պահանջ է ուղարկում համապատասխան խնայողական դրամարկղին՝ թոշակառուի ստուգիչ օրդերի յերկու օրինակն էլ վերադարձնելու մասին և այդպիսիքն ստանալով, անձնական քարտը ստուգիչ օրդերների հետ միասին ուղարկում է թոշակառուի նոր բնակավայրի գավառային կամ նրան համապատասխան Ապահովագրական Գանձարկղին։ Վերջինը, ստուգիչ օրդերները թողնելով թոշակառուի անձնական քարտին

կցված, համապատասխան խնայողական դրամարկղին հանձնում է նոր ստուգիչ օրդերներ, սույն հրահանգի 33 և 35 հոդվածներում արձանագրված կարգով:

Եթե թոշակառուի հին և նոր բնակավայրը գտնվում են միևնույն գավառի (կամ նրա համապատասխան վարչա-երկրային միավորի) սահմաններում,— այդ դեպքում, Ապահովագրական Գանձարկղը հայտնում է այդ մասին գավառային կամ նրան համապատասխան խնայողական դրամարկղին՝ ստուգիչ օրդերի երկրորդ օրինակը թոշակառուի նոր բնակավայրի խնայողական դրամարկղին հանձնելու համար:

Տեղափոխման պատճառները հարգելի գտնվելու դեպքում, Ապահովագրական Գանձարկղը կարող է թոշակառուին վկայական տալ արտոնյալ փոխադրության համար:

## Զ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ, ՖԻՆԲԱԺԻՆՆԵՐԻ և ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇԻՎ ՏԵՍՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

40. Ամեն տարի գավառի կամ նրան համապատասխան վարչա-երկրային միավորի տեղական բյուջեի մեջ մտցվում է բժշկական և անասնաբուժական աշխատավորների կենսաթոշակը վճարելու համար վարկեր: Վարկի չափը հաշվվում են, ի պատասխան համապատասխան ֆինմարմնի հարցումի, Ապահովագրական Գանձարկղի կողմից հայտնված որենտիր տվյալների հիման վրա:

41. Կենսաթոշակների վճարման համար պահանջվող գումարները, գավառային կամ նրանց համապատասխան ապահովագրական գանձարկղները և Ֆինժողկոմատի մարմինները հանձնում են նահանգային և գավառային խնայողական դրամարկղներին ամիսը մեկ անգամ՝ պահանջի չափով, այն հաշվով, որ այդ գումարները փաստորեն ստացվեն համապատասխան խնայողական դրամարկղներում վճարման ամսին նախորդող ամսի 15-ից ոչ ուշ:

42. Նախորդ հոդվածով սահմանված ժամկետին ապահովագրական գանձարկղը հանձնում է համապատասխան խնայողական դրամարկղին ըստ բոլոր ստուգիչ օրդերների կենսաթոշակների ամսական գումարի 50%-ը կազմող գումարի չեկ, հաշվի առնելով նաև այն գումարը, որը մնում է խնայողական դրամարկղի տրամադրության տակ, որպես ազատ մնացորդ պակասեցրած կամ դադարեցված թոշակների վճարումից:



Ազատ մնացորդի մեջ հաշվելու ընթացիկ գումարը ապահովագրական գանձարկղի կողմից որոշվում է համաձայն խնայողական դրամարկղի կողմից վերադարձված ստուգիչ օրդերների (հոդ. հոդ. 27. 28, 37 և 38): Չեկն ուղարկվում է գրությամբ, որում գրվում է հանձնվելիք գումարի համառոտ հաշիվը. գրության պատճեն միաժամանակ ուղարկվում է ֆինժողկոմատի համապատասխան մարմնին:

43. Խնայողական դրամարկղին հանձնած չեկի գումարի մասին գրության պատճենը (հոդ. 42) ապահովագրական գանձարկղից ստանալու մյուս օրվանից ոչ ուշ, ֆինժողկոմատի համապատասխան մարմինը կարգադրություն է անում տեղական բյուջեն կատարող այն վարկային հիմնարկին, որի տերիտորիայի շրջանում գտնվում է տվյալ ապահովագրական գանձարկղը, այդ բյուջեի բյուջետային միջոցների ընթացիկ հաշվից փոխանցելու խնայողական դրամարկղների շրջանառության գումարների հաշվին— նույն քաղաքում գտնվող Պետբանկի հիմնարկին, ապահովագրական գանձարկղի չեկի գումարին հավասար գումար: Այդ փոխանցումը կատարվում է ի հաշիվ 40-րդ հոդվածում նշված վարկի հաշվին: Տվյալ տեղական բյուջեն կատարող վարկային հիմնարկը նշված փոխանցումը կատարում է կարգադրությունն ստանալու օրը:

44. Ոչ ուշ յուրաքանչյուր ամսվա 10-ից նահանգային, երկրային կամ գավառային խնայողական դրամարկղն ուղարկում է պատշաճ գավառային կամ նրան համապատասխան ապահովագրական գանձարկղին նախընթաց ամսում կենսաթոշակների գրքույկների բոլոր իսկական վճարած տալոնները գրությամբ, որում նշում է ուղարկվելիք տալոնների քանակը և նրանցով վճարած գումարը,—նամակի պատճենը հանձնելով Ֆինժողկոմատի պատշաճ մարմնին:

45. Գավառային կամ նրան համապատասխան ապահովագրական գանձարկղը, խնայողական դրամարկղից ստանալով և վճարած տալոնները (հոդ. 44) ստուգելով, խնայողական դրամարկղի հաշվից դուրս է գրում ըստ տալոնների վճարած գումարի 50%-ը և այդ մասին ավիզո յե ուղարկում խնայողական դրամարկղին, իսկ պատճենը Ֆինժողկոմատի պատշաճ մարմնին:

46. Տարին լրանալուց հետո գավառային ֆինբաժինները և նրանց համապատասխան ֆինժողկոմատի մարմինները գավառային և համապատասխան ապահովագրական գանձարկղից ստացած տվյալների հիման վրա (հոդ. 47) կազմում են տարեկան

միացյալ հաշվետվություններ՝ խնայողական դրամարկղների կողմից անցած տարվա ընթացքում վճարած գումարների և առ 1–ն հոկտեմբերի նրանց հաշվում չ'ծախսված գումարների մասին։

43–րդ հոդվածի կարգով թված չ'վճարած բոլոր մնացած գումարները համապատասխան ֆինմարմնի կողմից հաշվի յեն առնվում նոր բյուջետային տարվա առաջին փոխանցումը կատարելու ժամանակ։ Սույն հոդվածում նշված հաշվետվությունները ներկայացվում են՝ դաշնակից հանրապետությունների ֆինժողկոմատին։

## Ե. ՀԱՇՎԵԱՌՈՒՄԸ և ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՈՒՄ

47. Բժշկական և անասնաբուժական աշխատավորների չերկարամյա ծառայության կենսաթոշակ վճարելու գործառնությունները ապահովագրական գանձարկղներում հաշվի յեն առնվում հետևյալ սխեմայով.

| №№ ըստ կարգի | | Կատարվում են | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ըստ հաշվի դեբետի | | Ըստ հաշվի կրեդիտի | |
| 1 | Խնայողական դրամարկղներում գտնվող ըստ բոլոր ստուգիչ օրդերների կենսաթոշակի ամսական գումարի 50%-ը (հոդ. 42) անց է կացվում յուրաքանչյուր ամիս . . . . | 51 | Գործառնական ծախսերի | 41 | Նշանակված նպաստներ և կենսաթոշակներ |
| 2 | Խնայողական դրամարկղին փոխադրված չեկի գումարը (հոդ. 42) | 15գ | Առհաշիվ գումարների | 12 | Ընթացիկ հաշիվների |
| 3 | Վճարած տալոնների գումարը (հոդ. 44) . . . . . . . | 41 | Նշանակված կենսաթոշակների և նպաստների | 15գ | Առհաշիվ գումարների |

48. Բժշկական և անասնաբուժական աշխատավորների ապահովության գործերը ձևակերպելու ժամանակ,— ինչպես նոր կենսաթոշակ նշանակելիս, այնպես էլ արդեն կենսաթոշակ ստացողներին վերանայելիս,— ապահովագրական գանձարկղները կիրառում են աշխատանքի հաշմանդամների համար սահմանված գործավարության ձևերը։



## Ը. ՎԵՐՋԱԲԱՆ

49. Սույն հրահանգը կիրարկության մեջ է դրվում 1929 թ. հոկտեմբերի 1-ից և չի տարածվում այն անձանց վրա, վորոնք գյուղական վայրերի և բանվորական ավանների 1–ին հոդվածում նշված պաշտոնները թողել են 1929 թ. հոկտեմբերի 1-ից առաջ։

ԽՍՀՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐ՝—ՈՒԳԼԱՆՈՎ
ՍՈՑԱՊԿԵՆՏՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝—ԿՈՏՈՎ

Հավելված
ԽՍՀՄ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ 1929 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի
№ 348 ՀՐԱՀԱՆԳԻ 24-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ։

| | |
|---|---|
| ........................ (Ազգանուն) | ........................ Ապգանձարկղ<br>Բժ. և անաս. աշխ. Ստուգիչ օրդեր |
| ........................ (Անուն) | Ընդ. անդամ Անձնական քարտ №________<br>կենսաթոշակ ստանալու համար 19 թ. ........ |
| ........................ (Հայրանուն) | « »-ից առ 19 թ. ________ « »-ը։ Վճարման<br>ժամկետը « » ________ յուրաքանչյուր |
| ........................ (Հասցեն) | ամիս ________ ռ. ______ կ. չափով։ (ռուբլիների<br>գումարը տառերով) |
| ........................ (Կենսաթոշակ ստացողի ստորագրությունը) | **Ապգանձարկղի կոմիտեյի անդամ՝**<br>Կ. Տ. |
| Տալոնը վերադարձնելու հիմքը | Կցված է ________ ապգանձարկղին<br>Ստորագրություն |

# ՑԱՆԿ

Յերես

Նախաբան . . . . . . . . . . . . . 3—5

I. Կանոններ № 122 ժամանակավոր անաշխատունակության նպաստ նշանակելու և վճարելու մասին . . . . . . . . . . . . . . . 6—20

II. Կանոններ № 406 սոցիալական ապահովագրության կարգով գործազրկության նպաստ նշանակելու և վճարելու մասին . . . . . . . . 21—50

III. Կանոններ № 8 սոցիալական ապահովագրության կարգով լրացուցիչ նպաստներ նշանակելու և վճարելու մասին . . . . . . . . . . . . 51—58

IV. Կանոններ տնային տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրության մասին . . . . . . . . 59—63

V. Կանոններ № 397. Հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու մասին . . . . . . . 64—106

VI. Կանոններ № 179. Ծերության հետևանքով սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու մասին . . . . . . . . . . . . . . 107—119

VII. Հրահանգ № 331. Լուսավորության աշխատավորներին յերկարամյա ծառայության հետևանքով թոշակավորելու կարգի մասին . . . . . . . 120—135

VIII. Հրահանգ № 348 գյուղական վայրերի և բանվորական ավանների բժշկական և անասնաբուժական աշխատավորներին յերկարամյա ծառայության հետևանքով թոշակավորելու կարգի մասին 136—149

ՀՀ Ազգային գրադարան
NL0221833

44.069